N 8282

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԱԶՆԵՎԹ) ՄԻՋԵՎ

1928 թվի հունվարի 1-ից
մինչև 1928 թվի դեկտեմբերի 31-ը.

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

КОЛЛЕКТИВНЫЙ ДОГОВОР

Между Азербайджанским Центральным Правлением Союза Горнорабочих СССР и Правлением Государственного Об'единения Азербайджанской Нефтяной Промышленности (АЗНЕФТЬ)

на срок с 1-го Января 1928 г.
по 31-ое декабря 1928 г.

331.1
И-89

ԲԱԳՈՒ, 1928 թ.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԱԶՆԵՎԹ) ՄԻՋԵՎ

1928 թվի հունվարի 1-ից
մինչև 1928 թվի դեկտեմբերի 31-ը.

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
1928 №46
31 1
Ա-89

КОЛЛЕКТИВНЫЙ ДОГОВОР

Между Азербайджанским Центральным Правлением Союза Горнорабочих СССР и Правлением Государственного Об'единения Азербайджанской Нефтяной Промышленности (АЗНЕФТЬ)

на срок с 1-го Января 1928 г.
по 31-ое декабря 1928 г.

20

ԲԱԳՈՒ, 1928 Թ.

Главлит № 380

Типография
„3-й Интернационал"
Баку, ул. Саратовца Ефимова, дом № 37.
1544

Тираж 1000 экз.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

50710-Ա2
36191-66

50710-Ա. Հ.

ՀԱՎՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մ Ա Ս Ն I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Ներկա հավաքական պայմանագիրը կնքված է Խորհրդային Միության Հանքագործների Միության Ադրբեջանի Կենտրոնական Վարչության ու Ադրբեջանի Պետական Նավթային արդյունաբերության Միացության միջև։ Հանքագործների Միության Ադրբեջանի Կենտրոնական վարչության կողմից, համաձայն այդ վարչության պլենումի 1928 թվի հունվարի 19-ի վորոշման, արձանագրություն № 2, կետ 1, ստորագրել են ընկ. ընկ. Ս. Ա. Գուտինը, Ռ. Ա. Ջեյնալովը և Մ. Ֆ. Ֆրոլովը, իսկ Ադրբեջանի Պետական Նավթային արդյունաբերության Միացության կողմից՝ հավատարմաթղթի հիման վրա գործող ընկ. ընկ. Մ. Վ. Բարինովը, Կ. Ա. Ռումյանցևը, Յա. Վ. Լավրենտևն ու Բ. Մ. Շեյնինը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հետագայում հեշտ ու կարճ լինելու համար առաջին կողմը կկոչվի «Միություն», իսկ յերկրորդը՝ «Ադնեվթ»։

§ 2. Պայմանագիրը տարածվում է Ադնեվթի գոյություն ունեցող կամ նոր բացվող, Միության մեջ համախմբված, ձեռնարկություններում կամ հիմնարկություններում աշխատող կամ նոր մտնող բանվորների ու ծառայողների, ինչպես և վարչական—տեխնիքական պերսոնալի վրա։

ԾԱՆՈԹ. 1. Պայմանագրի ույժը չի տարածվում՝

ա) Վարչական բարձրագույն ծառայողների վրա, վորոնք իրավունք ունին վարձելու ու հեռացնելու։ Այդ պաշտոնների ցուցակը (հավելված № 1) կցված է այս պայմանագրին։

բ) Սեփական ինվենտարով (դըրոգով, ձիերով) աշխատող՝ փոխադրություններ անողների ու փոդրաթչիների վրա։

2. Ժամանակավոր բանվորների ու ծառայողների աշխատանքի պայմանները կարգավորվում են համաձայն Խորհրդային Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ու Ժողկոմխորհի 1927 թվի հունվարի 14-ի «ժամանակավոր բանվորների ու ծառայողների աշխատանքի մասին» կայացրած վորոշման (հավելված № 2), ըստ վորում, համաձայն վորոշման 4-րդ §-ի, ժամանակավոր բանվորների ու ծառայողների վրա տարածվում են հավաքական պայմանագրի 23, 24, 25, 40, 45 և 49 §-ները։ Ժամանակավոր աշխատողների մասին կանոնադրության § 14-ում նախատեսնված վարձատրության չափը բոլոր դեպքերում սահմանվում է տարիֆային ռոճկաչափով։

§ 3. Ներկա պայմանագիրն իր ույժի մեջ յեղած ժամանակամիջոցում, առանց Միության համաձայնության վոչ մի անհատական համաձայնություն կնքել չի կարելի այն աշխատողների հետ, վորոնց վրա պայմանագրի ույժն է տարածվում։ Ազնիվթը 7 որվա ընթացքում Միությանն է ներկայացնում իր կնքած բոլոր անհատական պայմանագրերի պատճենը։

§ 4. Ներկա պայմանագիրն իր ուժի մեջ է մըտնում 1928 թվի հունվարի 1-ից և կնքվում է 12 ամիս ժամանակով, այսինքն՝ մինչև 1928 թվի դեկտեմբերի 31-ը։

§ 5. Պայմանագրի ժամանակի սահմաններում՝ այդ պայմանագրի առանձին կետերն ու մասերը կա-

րելի է փոխել ու լրացնել յերկու կողմերի համաձայնությամբ։ Փոփոխություններն ու լրացումներն իրանց ույժի մեջ են մտնում այն րոպեից, յերբ պայմանագիր կնքող կողմերն ստորագրում են այդ փոփոխություններն ու լրացումները, յեթե համաձայնությամբ ուրիշ ժամկետ (սրոկ) չի պայմանավորված։ Պայմանագրի փոփոխության կամ լրացման մասին գրավոր կերպով առաջարկություն ստացող կողմը պարտավոր է դրան մի շաբթում պատասխանել. այդ ժամանակամիջոցում պատասխան չստանալը՝ առաջարկված փոփոխության ու լրացման համաձայնություն տալ է նըշանակում։

Աշխատանքի պայմանները վատացնող փոփոխություններ ու լրացումներ չեն կարող մտցնվել հետին թվով։

§ 6. Պայմանագիրը վերաքննելու մասին մյուս կողմին պետք է հայտնել յերկու շաբաթ առաջ մինչև պայմանագրի ժամանակը լրանալը։ Այդ մասին դիմում ստանալուց հետո՝ կողմերը պարտավոր են մի շաբթվա ընթացքում բանակցությունները սկսել։ Յեթե կողմերը պայմանագիրը վերաքննելու մասին իրանցից մեկի արած դիմումի համաձայն մի շաբթվա ընթացքում չեն անցնում վերաքննության, ապա պայմանագիրը ինքնաբերաբար մի ամիս յերկարացրված է համարվում։ Յեթե այս պայմանագրի ժամանակը լրանալիս կողմերը չեն կարողանում իր ժամանակին սկսված բանակցությունները ավարտել, ապա մինչև նոր պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ աշխատավարձի ու աշխատանքի պայմանները կարգավորվում են հին կոլլեկտիվ (հավաքական) պայմանագրով։

Այս պայմանը չի նախորոշում նոր պայմանագրի ուժի մեջ մտնելու սկզբնական ժամկետը (սրոկ), վոր կողմերը վորոշում են նոր պայմանագրում։

Յեթե յերկու կողմերից ել դիմում չկա պայմանագիրը վերաքննելու, ապա նրա ժամանակը համարվում ե յերկարացրված՝ մինչև նոր պայմանագիր կընքելը կամ գոյություն ունեցող պայմանագիրը վորոշ ժամանակով յերկարացնելու մասին համաձայնություն կնքելը։

§ 7. Այն վեճերն ու կոնֆլիկտները լուծելու համար, վորոնք կարող են ծագել ներկա պայմանագրի հիման վրա, ինչպես և այն բոլոր հարցերը լուծելու համար, վորոնք Աշխատանքի Որենքների Կոդեքսով հանձնվում են Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովին, ներկա պայմանագրով և նրա լրացուցիչ համաձայնություններով Ագնեվթի առանձին ձեռնարկներում և հիմնարկներում կազմակերպվում են տեղական Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովներ, վորոնք գործում են ներկա պայմանագրին կցած կանոների հիման վրա (հավելված № 3)։

Այն կոնֆլիկտները, վորոնք Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովներում չեն լուծվում, լուծվում են Աշխատանքի Որենքների Կոդեքսի 168-ից մինչև 174 հոդվածներով նախատեսնված կարգով։

§ 8. Ներկա կոլլեկտիվ պայմանագրից գրվում ե յերեք որինակ, յերկու կողմերի ստորագրությամբ ու գրանցվում և սահմանված կարգով։

Մ Ա Ս Ն II.

ԳՈՐԾԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ, ԳՈՐԾԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՆ ՈՒ ՑԱԾՐ ՊԱՇՏՈՆԻ ՓՈԽԱԴՐԵԼԸ

§ 9. Ագնեվթն առաջին հերթին գործի ե ընդունում արհեստակցական միությունների գործազուրկ անդամներին։ Ընդունելությունը կատարվում ե Աշխատանքի Բորսայի միջոցով։ Բացառիկ դեպքերում բարձր վորակի (կվալիֆիկացիայի) ու հատուկ տեսակի աշխատանքների համար աշխատավորներ կարող են հրավիրվել առանց Աշխատանքի Բորսայի, սակայն Միության համապատասխան կազմակերպության համաձայնությամբ։

Թե Աշխատանքի Բորսայի միջոցով և թե առանց Աշխատանքի Բորսայի գործի վերցրվածների մասին վարչությունն ընդունելուց հետո վոչ ուշ քան մինչև յերեք որը պարտավոր ե հայտնել տեղերի միության համապատասխան կազմակերպություններին, վորոնց իրավունք ե տրված ծանուցումն ստանալուց հետո յերեք որվա ընթացքում պատճառաբանված մերժումն (ատվոդ) անելու։ Յեթե վարչությունը համաձայն չլինի այդ «ատվոդ» անելուն հետ, հարցը տրվում ե հաշտարար-միջնորդ քննության։

ԾԱՆՈԹ. 1. Աշխատողներին առաջ քաշելու (վիդվիժենիե) և առաջ շարժելու (պրոդվիժենիե) նպատակով առանձին տնտեսական միավորներում ազատվող տեղերն առաջին հերթին տրվում են նույն այդ տնտեսություններից վերցրված՝ միության օրգանների կողմից առաջարկվող թեկնածուներին, յեթե այդ տեղերում դնելու համար ազատ աշխատողներ չկան Ագնեվթի մյուս միավորներում կամ տնտեսություններում։

2. Տեղ լինելուց՝ Ազնեվթն առաջին հերթին գործի է վերցնում միության անդամ այն աշխատավորներին, վորոնք առաջ հեռացրված են յեղել հիվանդության պատճառով գործի դուրս չգալու համար։

3. Ազնեվթի մեռած աշխատավորի կինը կամ յերեխաներից մեկն ու մեկը, ինչպես և մեծ ստաժ ունեցող բանվորների յերեխաներն աշխատանքի են վերցնվում միությունների անդամներին համահավասար կերպով։

§ 10. Ժամանակավոր բանվորներ ու ծառայողներ վարձելը թույլատրվում է միայն որենքով նախատեսված դեպքերում, վորի համար տեղեկացնվում է միության համապատասխան կազմակերպություններին, բայց վարձելուց հետո 3 որից վոչ ուշ։

§ 11. Թե ժամանակավոր և թե մշտական աշխատանքի համար ոտար տեղերում բանվորներ ու ծառայողներ ընդունելը կարող է կատարվել միայն նախապես միության հետ համաձայնության գալով, այդ ընդունելության կարգի մասին առանձին համաձայնություն կայացնելով։

§ 12. Աշխատանքի ընդունելու ժամանակ վարձվողին փորձի նշանակելու դեպքում՝ Ազնեվթի վարչությունը փորձվողին դնում է համապատասխան տարիֆային կարգում։

Այն աշխատավորները, վորոնց չեն հայտնել փորձելու հետևանքի մասին, որինական ժամանակն անցնելուց հետո (Աշխ. Որենքն. Կոդեքսի հոդ. 38) վերջնականապես ընդունված են համարվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Աշխատանքի Որենքների Կոդեքսի 38-րդ հոդվածով փորձելու համար սահմանած ժամանակամիջոցում աշխատողին հեռացնելը յենթակա չե Գնահատիչ-կոնֆլիկտային Հանձնաժողովի քննությանը։

§ 13. Ի լրացումն Աշխատանքի Որենքների Կոդեքսի 36, 37, 44-ից մինչև 49, 88-ից մինչև 90 հոդվածների՝ սահմանվում է հետևյալը.

ա) Արտադրությունը կամ շտատները կրճատելու, հավասար կվալիֆիկացիայի (վորակի) դեպքում առաջին հերթին հեռացվում են նրանք, վորոնք արհեստակցական միությունների անդամ չեն։

բ) Միայնակ կանանց, ինչպես ու իրանց խնամքին փոքր յերեխաներ և ուրիշ անձինք ունեցող կանանց, շտատը կրճատելու ժամանակ առավելություն է տրվում այն կողմից, վոր հավասար պայմաններ յեղած դեպքում՝ նրանց են թողնում գործում։

գ) Ձեռնարկությունը բոլորովին կամ մասնակի կերպով լիկվիդացիա անելու, ինչպես և շտատները ռացիոնալիզացիայի պատճառով կրճատելու հարցը լուծվում է միության համապատասխան կազմակերպությունների հետ նախորոք համաձայնության գալով, ըստ վորում առաջիկա մասսայական կրճատման կամ լիկվիդացիայի մասին միությանն իմաց է տրվում մի ամիս առաջ։

Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի համաձայն արձակվելու յենթակաների անձնական ցուցակը վարչությունը կազմում է ու հաղորդում միության համապատասխան կազմակերպություններին ու արձակվող բանվորներին վոչ ուշ, քան արձակվելուց 3 որ առաջ. իսկ յեթե գործից

հեռացնվում են ռացիոնալիզացիայի հետևանքով, ապա միութենական կազմակերպություններին այդ մասին հաղորդում են հեռացնելուց մի ամիս առաջ։ Յեթե միութենական կազմակերպությունները համաձայն չեն հեռացնվելու նշանակված աշխատողներից վորև է մեկի հեռացնելուն, ապա հարցը լուծվում է սովորական կոնֆլիկտային կարգով, ըստ վորում մինչև մատնանշված կարգով հարցը լուծելը՝ աշխատողը մնում է իր տեղում։

Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի համաձայն գործից հեռացնելը կարող է լինել այն ժամանակ, յերբ հնարավորություն չկա Ազնեվթի մի ուրիշ ձեռնարկություն փոխադրելու, կամ յերբ աշխատողը համաձայն չէ փոխադրվելու, ըստ վորում փոխադրվելուց հրաժարվելը նրան չի զրկում այս հոդվածի «դ» կետով հասնող հեռացվելու նպաստի իրավունքից։

դ) Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-ր հոդվածի «ա», «բ», «գ» կետերի համաձայն, ինչպես և ինվալիդության հետևանքով գործից հեռացնվողներին՝ գործից դուրս գալու նպաստ է տրվում նրա տարիֆային ամսեկան ռոճիկի կեսի չափ այն դեպքում, յերբ մինչև հեռացնելու մոմենտը յերկու շաբաթ առաջ է իմաց արված հեռացման մասին, և ամբողջ տարիֆային մի ամսեկան ռոճիկը, յեթե իմաց չի արված։ Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-րդ հոդվածի համաձայն՝ հեռացնելու մյուս դեպքերում նախորոք հայտնելը չի պահանջվում ու հեռացման նպաստ չի տրվում։

Հեռացնելու մասին հայտնելու մոմենտը համարվում է այդ մասին հաշվեգրքույկում (րասչյոտնի կնիժկա) գրված որը, և միաժամանակ էլ այդ մասին միության համապատասխան կազմակերպություններին հայտնելը։

ե) Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-րդ հոդվածի «ը» կետի համաձայն աշխատանքի ընդունակությունը ժամանակավորապես կորցրած վարձվածը հեռացնվում է աշխատանքի ընդունակությունը կորցնելու որից 4 ամիս հետո։ Իսկ յեթե հիվանդությունն առաջացել է Ազնեվթի ձեռնարկություններում ստացած վնասվածքներից (ուվեչիե), ինչպես և հղության ու ծննդի հետևանքով, ապա հեռացնելը թույլ է տրվում միայն 6 ամիս գործի դուրս չգալուց հետո։

զ) Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-րդ հոդվածի «ա», «բ», «գ», «ը», կետերի համաձայն, ինչպես և ինվալիդության ու զինվորական ծառայության կանչվելու հետևանքով գործից հեռացնելու դեպքում՝ աշխատավորները լրացուցիչ վարձատրություն են ստանում Ազնեվթի ձեռնարկություններում յերկար տարիներ անընդհատ ծառայելու համար,—3-ից մինչև 5 տարի ծառայողներն ստանում են իրանց տարիֆային ամսեկան ռոճկի կեսը, իսկ 5 տարուց ավելի ծառայածները՝ տարիֆային մի ամսեկան ռոճիկը։

ԾԱՆՈԹ. 1. Ծառայության սկիզբը համարվում է վերջին անգամ Ազնեֆթ մտնելու մոմենտը.

2. Վոչ Ազնեֆթի ձեռնարկություն փոխվելը, բացի միության ու քաղաքական կազմակերպություններում ընտրական պաշտոնների անցնելը, համարվում է ընդմիջում։

§ 14. Ռացիոնալիզացիայի հետևանքով շտատները կրճատելու պատճառով գործից հեռացնվողներին ուժեղացրած նպաստ է տրվում հետևյալ չափով։

ա) Բոլոր բանվորներն ու աշակերտները, ինչպես և աշխատավորները, վորոնք ծառայողների ու վարչական—տեխնիքական պերսոնալի ցանցն են անցած, ուղղակի արտադրության մեջ են գտնվում (նավթահանքում, գործարանում, արհեստանոցում) և բանվորական որվա տևողությամբ հավասարեցրված են բանվորներին,— հեռացման նպաստ են ստանում իրանց միջին աշխատավարձի յերկու ամսեկանը։

բ) Այն աշխատավորները, վորոնք ծառայողների ցանցով 6-րդ կարգն են անցնում, ինչպես և վարչական—տեխնիքական պերսոնալի ցանցով 1-ին և 2-րդ կարգն անցնողները, վորոնք չեն ընկնում այս հոդվածի «ա» կետում մատնանշած պայմանների տակ, հեռացման նպաստ են ստանում իրանց միջին աշխատավարձի մեկ ու կես ամսեկանը։

գ) Ներկա հոդվածի «ա» և «բ» կետերում մատնանշված պայմանների տակ չընկնող, ծառայողների ու վարչական—տեխնիքական պեր-

սոնալի ցանցն անցնող մնացած բոլոր աշխատողներին հեռացման նպաստ է տրվում նրանց միջին աշխատավարձի մի ամսեկանը։

Վերև մատնանշված հեռացման նպաստը տրվում է անկախ հեռացման մասին նախորոք հայտնելուց ու հեռացնվողների թվից, և տրվում է կոլլեկտիվ պայմանագրի § 13-ի «դ» կետի նախատեսած հեռացման նպաստի փոխարեն։ Հեռացման ուժեղացրած նպաստը փոխարինվում է հեռացման սովորական նպաստով, յեթե ռացիոնալիզացիայի հետևանքով հեռացնելու յենթակա աշխատավորը հրաժարվում է փոխադրվելու ըստ իր կվալիֆիկացիայի Ազնեֆթի մի ուրիշ ձեռնարկությունում աշխատելու։

ԾԱՆՈԹ.—Հիշյալ դեպքերում գործից հեռացվողները չեն զրկվում յերկար տարիների ծառայության համար նպաստ ստանալուց, համաձայն § 13-ի «զ» կետի։

§ 15. Արհեստակցական, քաղաքական, կոոպերատիվային ու խորհրդային կազմակերպություններում աշխատելու համար ընտրված աշխատավորները պահում են իրանց նախկին պաշտոններին վերադառնալու, կամ համապատասխան պաշտոն ստանալու իրավունքը, ըստ վորում այդ անձինք իրանց ընտրվելուց հետո ձեռնարկությունից վոչ մի ռոճիկ չեն ստանում։

§ 16. Հեռացրված աշխատավորին հասանելիք ամբողջ գումարը վճարվում է հեռացնելուց հետո հետևյալ որը. հակառակ դեպքում նրան պետք է վճարվի իր միջին աշխատավարձը, մինչև այն որը, յերբ փաստորեն հաշիվը կվերջացնվի։ Յեթե հաշիվը չի վերջա-

ցրրվել արձակված աշխատավորի պատճառով, ապա վճարման վերջնական ժամկետ (սրոկ) և համարվում գործը թողնելու օրը։

§ 17. Բոլոր դեպքերում գործից հեռացնելու մասին նախորոք միության համապատասխան կազմակերպությանը տեղեկություն է տրվում (Աշխատանքի Որենքների Կոդեքսի 161-րդ հոդված «գ» կետ)։ Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-րդ հոդվածի «գ», «դ», «յե», «զ» կետերի համաձայն գործից հեռացնելը կատարվում է Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի (Ր. Կ. Կ.) վորոշման համաձայն, ըստ վորում «դ» կետով՝ համաձայն ներքին կարգ կանոնի, ու տուգումների ցուցակի (տաբելի), վորոնք կցվում են ներկա պայմանագրին (հավելված № 4) և «յե» կետով՝ համաձայն Անդրկովկասյան Աշխատանքի Ժողկոմատի 1925 թվի հունվարի 16-ի տված բացատրության (հավելված № 5)։

§ 18. Տարիֆով բարձր կարգի աշխատավորին ցածր կարգի փոխելը կարող է տեղի ունենալ հետևյալ դեպքերում.

ա) Յեթե աշխատավորը տրված կարգի համար սահմանած համապատասխան աշխատանքին անպետք է, և յեթե այդ անպետք լինելը պարզվի աշխատանքի ընթացքում, աշխատավորի կարգի (րազրյադ) սկզբնական վորոշումից հետո։

բ) Յեթե բարձր կարգի համար համապատասխան աշխատանք չկա։

Փոխվելու համաձայնություն չտվողը կարող է արձակվելը, ըստ վորում նրան արձակման նպաստ է

տրվում համաձայն այս պայմանագրի § 13-ի «դ» կետի։

ԾԱՆՈԹ. 1. «ա» և «բ» կետերում հիշված դրության դեպքը սահմանում է Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը (Ր. Կ. Կ.).

2. Ցածր կարգում աշխատելու փոխադրվածները փոխադրվելուց հետո 2 շաբաթ ստանում են վոչ պակաս իրանց նախկին պաշտոնի միջին աշխատավարձի չափից։

§ 19. Արտադրության շահերն ի նկատի ունենալով՝ վարչությունն իրավունք ունի աշխատավորին առանց կարգը իջեցնելու փոխադրել մի ցեխից մյուսը, կամ մի բաժնից մյուս բաժինը, կամ մի տընտեսական միավորից մյուսը միևնույն ձեռնարկության սահմաններում, միևնույն կվալիֆիկացիայի աշխատանքը կատարելու։ Աշխատավորի կողմից փոխադրվելուց հրաժարվելը համարվում է աշխատանքից հրաժարվել և կարող է պատճառ դառնալ առանց նախազգուշացման հեռացնելու ու հեռացման նպաստ չտալու։

ԾԱՆՈԹ. 1. Ձեռնարկություն ասելով հասկացվում է մի ընդհանուր վարչությունով միացած տնտեսական միավորների գումարը, վորոնց գլուխ է կանգնած վարձելու և արձակելու իրավունք ունեցող անձնավորությունը։

2. Բալախանի-Սաբունչու ռայոնի կազմի մեջ մտնող Փութա նավթահանքը, Բիբի-Հեյբաթի ռայոնը մտնող Արտեմի կղզին ու Սուրախանու ռայոնը մտնող Կալան առանձին ռայոններ են համարվում։

Մ Ա Ս Ն III

ԱՆԵԼԻՔ ԳՈՐԾԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Անելիք գործի (վըրաբոտկա) նորմաները սահմանում է Ազնեվթի վարչությունը, և վորպեսզի բան-

վորները ծանոթանան նրանց հետ, 5 որ կախում են ձեռնարկություններում աչքի ընկնող տեղերում, ապա տրվում է հաստատության Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի, և հաստատվելուց հետո գործադրվում են աշխատանքներում:

ԾԱՆՈԹ. Աշխատանքի համար բացառիկ, անհետաձգելի դեպքերում, յերբ գործը 3 որից ավելի չի տևում, այդպիսի գործը թույլատրվում է Ազնվթի վարչության կողմից սահմանած զդելնի գնահատությամբ կամ վըրաբոտկայի (արած գործի) նորմաներով, վորոնք այդ դեպքում իրանց պարտադիր ուժը պահում են մինչև վոր հաստատվեն Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի կողմից: Մինչև Գն.-Կոնֆ. Հանձն.-ի կողմից նորմաների ու շինածի գնահատության հաստատումը՝ վճարվում է Գն.-Կոնֆ. Հանձն.-ի հաստատած գնահատությունների համաձայն, բայց վոչ պակաս քան գործը տալու ժամանակ հայտարարած գնահատումներից:

§ 21. Վըրաբոտկայի (անելիք գործի) այնպիսի նորմաներ են սահմանվում, վոր տեխնիքապես հնարավոր են և պետք է յելնել աշխատանքի պայմաններից ու բանվորական որվա լիովին բեռնավորումից, նորմաները սահմանվում են տեխնիքական հաշիվներով կամ ժամանակաչափով և կախված չեն աշխատանքը կատարելու ժամանակից (ցերեկվա, գիշերվա, տոն որվա, արտաժամյա, սվերխուրոչնի):

Կոլլեկտիվ պայմանագիրն իր ուժի մեջ յեղած ժամանակամիջոցում միայն այն դեպքում է թույլատրվում վերաքննել վըրաբոտկայի նորմաներն, զդելնի գնահատություններն ու աշխատանքի վորակը (կվալիֆիկացիա), յեթե սարքավորման մեջ տեխնիքական այնպիսի փոփոխություններ են կատարվել,

վորոնք ազդում են արտադրականության վրա. որինակ՝ սարքավորման կատարելագործում, արտադրական ու աշխատավորական գործառնությունների(ոպերացիա) մեթոդների բարելավում, հարմարությունների մեքենայացում և այլն:

Առանձին դեպքերում նույնպես թույլատրվում է կոլլեկտիվ պայմանագիրն իր ուժի մեջ յեղած ժամանակամիջոցում վերաքննել վիրաբոտկայի նորմաներն ու զդելնի գնահատությունները, գոյություն ունեցող ու ստուգված անկանոնությունները վերացնելու նպատակով:

§ 22. Պայմանագրի յերաշխավորած աշխատավարձի համար բանվորները պետք է կատարեն սահմանված վիրաբոտկայի նորման, աշխատանքի համապատասխան վորակով: Առանց հարգելի պատճառների վիրաբոտկայի նորման մի քանի անգամ չկատարելը, կամ առանց հարգելի պատճառների վատ գործ դուրս բերելը կարող է պատճառ դառնալ, վոր Գն.-Կոնֆ.-Հանձն.-ի վորոշմամբ՝ քանդվի աշխատավորական պայմանագիրն, ու հեռացնվի այդ պարտականությունները չկատարողը:

Մ Ա Ս Ն IV.

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՆՈՐՄԱՆԵՐՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 23. Բանվորների ու ցածր ծառայող պերսոնալի համար հետևյալ [illegible] տարիֆային ռոճիկն է

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ГСС Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна
36/91-66

սահմանվում մի նորմալ բանվորական օրվա համար, նայած կարգին (ռազրյադ).

Կարգ (ռազրյադ)	Կոէֆֆիցի-ենտ	Ռոճիկ
1	1,0	1—50
2	1,2	1—80
3	1,37	2—05
4	1,6	2—40
5	1,8	2—70
6	2,1	3—15
7	2,4	3—60
8	2,8	4—20

ԾԱՆՈԹ. 1. Բանվորական ցանցի I կարգում գտնըվող բանվորների համար օրեկան մի (1) ռուբլի 65 կոպեկ ռոճիկ է սահմանվում:

2. Վերևի շտանգշչիկ բանվորների համար ռոճիկ է սահմանվում օրեկան 2 ռ. 15 կոպեկ:

Հաշվետարական—գրասենեկային ու տնտեսական պերսոնալի ծառայողների, ինչպես և ցածր տեխնիքական հսկողության անձանց համար հետևյալ օրեկան տարիֆային ռոճիկն է սահմանվում մի նորմալ բանվորական օրվա համար, նայած կարգին (ռազրյադ).

Կարգ (ռազրյադ)	Կոէֆֆիցի-ենտ	Ռոճիկ
1	1	2—16
2	1,2	2—59
3	1,4	3—02
4	1,6	3—45
5	1,8	3—88
6	2.1	4—53
7	2,4	5—18
8	2,9	6--26
9	3,7	7—99
10	4,5	9..72
11	5,2	11—23
12	6	12—96

ԾԱՆՈԹ.—Տարիֆային ռոճիկը մի կարգով (ռազրյադով) ավելանում է 8-ժամյա բանվորական օրի փոխադրըված հաշվետարա-գրասենեկային աշխատավորների համար:

Հանքարդյունաբերական ուսմունքի (Գորպրոմուչ) և Ֆաբզավուչի աշակերտների, ինչպես և անհատական ու բրիգադային աշակերտության համար հետևյալ տարիֆային օրեկան ռոճիկներն են սահմանվում, նայած կարգին.

Կարգ (բաղդյաղ)	Կոեֆֆիցի-ենտ	Ռոճիկ
1	1,0	85
2	1,2	1—02
3	1,5	1—28
4	1,8	1—53
5	2,2	1--87
6	2,5	2—13

ԾԱՆՈԹ.—1-ին կարգի աշակերտների համար օրեկան ռոճիկ նշանակվում է 95 կոպեկ:

Ստանձնած պաշտոնի հետ կապված աշխատանքներն ու պարտականությունները կատարելու համար վարչական—տեխնիքական պերսոնալը վարձատրություն է ստանում, հաշված ամսեկան ռոճիկների հետևյալ տարիֆային ցանցով (սեռկա).

Կարգ (բաղդյաղ)	Կոեֆֆիցի-ենտ	Ռոճիկ
1	1	113
2	1,1	125
3	1,2	136
4	1,35	154
5	1,50	171
6	1,65	188
7	1,8	205
8	2,0	228
9	2,2	255
10	2,45	280
11	2,7	305
12	2,95	335
13	3,20	362
14	3,45	400
15	3,7	420
16	4,0	452

ԾԱՆՈԹ.—Հետևյալ աշխատավորները, վորոնք ըստ իրանց փաստական աշխատավարձի չեն տեղավորված ցանցում, պահում են իրանց ռոճիկները.

Հանքային ճանապարհների պետը (16 կարգ) 460 ր.
Բալախանու, Բինագադու, Ռոմանու և Սուրախանու նավթահանքային գրուպպաների կառավարիչները (15—16 կարգ), գազ ստանալու և օգտագործման բաժնի կառավարիչը (15 կարգ), նախագծման ու պլանավորման գլխավոր ինժիները (16 կարգ), նավթահանքերի դիրեկտորի օգնականը, վոր հորափորման գործին է նայում (16 կարգ) . . . . 470 ր.
Նավթ մաքրող գործարանների դիրեկտորի օգնականը (16 կարգ) . . . . 480 ր.
Ավտո-տրանսպորտի կառավարիչը (15 կարգ) 485 ր.
Նավթահանքերի դիրեկտորը . . . . 520 ր.
Հորափորման գլխավոր գրասենյակի կառավարիչը . . . . 570 ր.
Ավագ տեխնիքական դիրեկտորը . . . . . . 920 ր.

Ընդամենը 13 հոգի: Նրանց ռոճիկների հետագա փոփոխությունը պետք է համաձայնեցնվի միութենական օրգանների հետ:

§ 25. Տարիֆային ռոճիկները բոլոր աշխատողների համար ավելանում են.

ա) Բինագադու ռայոնում, Մարդաքյան, Բուզովնա, Խորդալան ու Խուրդալան—5 տոկոս:

բ) Շուբանու ռայոնում, Արտեմի կղզում, Կալայում և Փութայում աշխատողների համար—10 տոկոս:

գ) Մաստագիր, Դիկյա ու Ցաթմայի աշխատողների համար 15 տոկոս:

դ) Նովխանայում աշխատողների համար 20 տոկոս:

յե) Կարադաղ, Բյուռ-Դյոզ, Կըզըլ ռայոններում, Սալյանի բադվեդկաներում աշխատողների համար 25 տոկոս:

զ) Զայիլ-Դաղում աշխատողների համար— 30 տոկոս:

ԾԱՆՈԹ.—Բոլոր աշխատողներն ու աշակերտները, վորոնց տարիֆ է դրվում ըստ որեկան ռոճկի, մի ժամվա ռոճիկը վորոշվում է սահմանված նորմալ բանվորական որվա ժամերի քանակությունից յելնելով և այն կարգից (բազրյադից)—ըստ տարիֆի, վորին տրված աշխատավորն է պատկանում:

§ 26. Նայած կատարվող աշխատանքին, հիմնարկության վարչությունը աշխատավորներին տարիֆային կարգերի է բաժանում համաձայն ներկա պայմանագրին կցած տարիֆային տեղեկատուների (հավելված № 6, 7 և 8):

Այն դեպքում, յեթե տարիֆային տեղեկատուի մեջ չի նախատեսնված թե աշխատանքը վոր կարգին է վերաբերում, ապա հարցը լուծում է Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը (РКК):

ԾԱՆՈԹ. Աշխատանքների բնույթագծումը, վոր կցած է կոլեկտիվ պայմանագրին տարիֆային սպրավոչնիկների կողմից, աշխատողների բոլոր պարտականությունների սպառող չի հանդիսանում. այլ միայն պարտականությունների մի որինակելի ցուցակ է, աշխատավորներին ըստ կվալիֆիկացիայի ուղիղ բաժանելու համար:

§ 27. Ի լրացումն և ի զարգացումն Աշխատանքի Օրենքների Կոդեքսի 65 և 67-րդ հոդվածների՝ սահ-

մանվում է.—աշխատավարձ տալ ամիսը յերկու անգամ.

ա) ընթացիկ ամսվա 24-ից վոչ ուշ աշխատավորներին ավանս է տրվում նրանց ամսեկան տարիֆային ռոճկի 50 տոկոսը և բնակվարձը համաձայն ներկա պայմանագրի § 45-ի:

բ) վոչ ուշ քան հաջորդ ամսվա 10-ը տըրվում է ամբողջ հաշիվը սովորական, արտաժամյա ու զդելնի աշխատանքի համար, ինչպես և պրեմիալնին, փուտովոյը և աշխատավարձի բոլոր մյուս հասանելիքները, դուրս գալով ավանսը:

ԾԱՆՈԹ.—Աշխատավարձի բոլոր տեսակները տրվում են միմիայն ռոճկացուցակով (պլատյոժնի վեդոմոստ):

§ 28. Աշխատանքի զդելնի սիստեման ինչպես կանոն մտցնվում է մեքենայական արհեստանոցներում ու արտադրական բաժիններում այն գործերի վերաբերմամբ, վոր հնարավոր է նորմայացնելու: Նորմայացման դժվար յենթարկվող աշխատանքները վճարվում են համաձայն աշխատած ժամանակի: Իսկ ինչ վերաբերում է նավթահանքերում, նավթաթորիչ գործարաններում, պահեստներում կատարվող աշխատանքներին, վորոնք յենթարկվում են նորմայացման, տրվում են զդելնի այն դեպքում, յեթե այդ աշխատանքները կատարելու պայմաններով՝ զդելնի ձևը արտադրական տեսակետից նպատակահարմար լինի:

§ 29. Զդելնի գնահատությունը բացառապես աշխատանքի բազրյադով (կարգով) է վորոշում և վոչ թե աշխատանքը կատարող անձի բազրյադով, և վորոշվում է միորյա տարիֆային ռոճիկը վերարտակայի

սահմանված նորմայի վրա բաժանելով ու 25% (քսանուհինգ տոկոս) ավելացնելով։

ԾԱՆՈԹ. 1) Նոր սդելնի գնահատությունները պիտի սահմանվեն հաշվառելով հանգստյան օրվա նախորյակին չաշխատած յերկու ժամվա վճարը։

2. Ներկայումս գոյություն ունեցող վիրաբոտկայի նորմաները և գնահատումները պահպանվում են կոլեկտիվ պայմանագրերն իր ուժի մեջ յեղած ժամանակամիջոցում։ Կոլեկտիվ պայմանագրերն ստորագրելու մոմենտին պետք է վերաքննել վըրաբոտկայի նորմաները և գնահատությունները, վորոնցով ավելի արած վըրաբոտկան անցնում է 135%-ից (հաշվելու կոեֆֆիցիենտ ընդունելով 80%), վերաքննել այնպես, վոր այդ նորմաները հասցնվեն 135%-ի։ Միաժամանակ այն գնահատումները, վորոնցով ավելի վիրաբոտկան չի հասնում 80 տոկոսի, հասցնվում են մինչև 80%։

§ 30. Բոլոր աշխատավորների համար, վորոնք որով են վարձ ստանում, միջին աշխատավարձը բոլոր դեպքերում հաշվում է հետևյալ կերպով։

ա) Միջին որեկան աշխատավարձը վորոշվում է նախընթաց շրջանում ստացած փաստական աշխատավարձը (տարիֆային ռոճիկ, սդելնի աշխատանք, հանգստյան, տոն որերում աշխատանք կատարելու համար ստացած վճար, սիստեմատիկ արտաժամյա, պրեմիալ վճարումներ, կոմպենսացիա և այլն) բաժանելով պարտադիր կերպով աշխատանքի դուրս գալու որերից աշխատած որերի թվի վրա, ավելացնելով և այն որերը, վոր բաց է թողնված վոչ-հարգելի պատճառներով։

ԾԱՆՈԹ.—1) Սիստեմատիկ արտաժամյա աշխատանք ասելով պետք է հասկանալ այն արտաժամյա աշխատանքը, վոր աշխատավորը պարբերաբար կատարում է յերեք ամսվա ընթացքում, ընդհանուր առմամբ 24 ժամից վոչ պակաս 3 ամսում։

2. Գործի դուրս գալու պարտադիր որեր համարվում են՝ ժամանակով գործող աշխատավորների (պովրեմենշիկների) համար՝ ամսվա զբաղմունքի (ուրոչնի) որերը. վախտով աշխատողների համար՝ ամսվա բոլոր օրացուցային որերը, բացառությամբ շաբթեկան հանգստյան որերից, գրաֆիկով աշխատողների համար՝ վերջինիս նախատեսած որերը։

բ) Կիսամսյա միջին աշխատավարձը հաշվում է միջին որեկան աշխատավարձը 12,5 անգամ բազմապատկելով, իսկ ամսեկան աշխատավարձը հաշվվում է՝ միջին որեկան աշխատավարձը բազմապատկելով 25-ի վրա։

գ) Միջին որեկան աշխատավարձ վճարելը կիրառվում է միջին աշխատավարձ վճարելու բոլոր դեպքերում մինչև 2 շաբաթ։

Իսկ մի ամսվա կամ 12,5 որվա միջին աշխատավարձի վճարման բոլոր դեպքերում (արձակուրդ, հեռացման նպաստ, չոգտագործած արձակուրդի կոմպենսացիա և այլն) կիրառվում է կիսամսյա կամ մի ամսվա վճարման համապատասխան, համաձայն ներկա հոդվածի «բ» կետի։

դ) Միջին աշխատավարձը հաշվելու համար նախընթաց ժամանակաշրջան (ներկա հոդվածի «ա» կետ) համարվում է,—3 որից ավելի և մինչև 2 շաբաթ (բանվորական 12 որ) ժամանակի համար՝ վճարման նախընթաց ամիսը, իսկ 2 շաբթվա կամ դրանից ավելի ժամանակի համար՝ վճարման նախընթաց 3 ամիսները։

Մինչև 3 օր ժամանակի համար հաշիվ տեսնելիս՝ միջին օրավարձ հաշվում է, նայած ընթացիկ ամսվա մնացած օրերի փաստական աշխատավարձի։

ԾԱՆՈԹ.—Միջին աշխատավարձի մեջ չեն մտնում տանտեմանները, պարգևներն ու պատահական աշխատանքի համար տրված վարձատրությունը։

§ 31. Հանգստյան և դեկրետով հաստատված հեղափոխական վոչ—բանվորական օրերում, ինչպես և այդ օրերի նախընթաց օրը 6 ժամից ավելի կատարված աշխատանքը վճարվում է կրկնակի չափով։

Հանգստյան ու դեկրետով հաստատված հեղափոխական վոչ—բանվորական օրերում, ինչպես և այդ օրերի նախընթաց օրը 6 ժամից ավելի աշխատանք կատարած զդելշչիկներին՝ իրանց զդելնի աշխատավարձից բացի՝ լրացուցիչ կերպով վճարվում է նրանց լրիվ տարիֆային ռոճկով, աշխատած ժամանակի համար։

ԾԱՆՈԹ.—Զդելնի աշխատանքի ժամանակ՝ հանգստյան և հեղափոխական վոչ—բանվորական օրերի նախընթաց օրվա մեջ չաշխատած արտոնյալ ժամերի համար չի վճարվում։

§ 32. Հանգստյան առանձին օրերում (կրոնական տոներին) աշխատավորի սեփական ցանկությամբ գործի դուրս գալու համար վճարվում է ինչպես սովորական օրվա համար, իսկ յեթե գործի է դուրս գալիս վարչության կարգադրությամբ՝ կրկնակի վճար է տրվում։

Կրոնական տոներին վարչության կարգադրությամբ գործի դուրս յեկող զդելշչիկներին լրացուցիչ

կերպով վճարվում է բացի իրանց զդելնի աշխատավարձը, նույնպես և աշխատած ժամանակի տարիֆային ռոճիկը։

§ 33. Լի օրերում նորմալ բանվորական ժամանակից վարչության կարգադրությամբ ավելի կատարած աշխատանքի համար վճարվում է առաջին յերկու ժամվա համար մեկ ու կես անգամ ավելի, իսկ դրանից հետո կատարած աշխատանքի յուրաքանչյուր ժամվա համար՝ կրկնակի։

Այդ դեպքում զդելշչիկներին իրանց զդելնի աշխատավարձից բացի լրացուցիչ կերպով վճարվում է նորմալ ժամանակից ավելի աշխատած առաջին յերկու ժամվա համար մի ժամվա տարիֆային ռոճկի կեսը, և այնուհետև յուրաքանչյուր ժամի համար՝ մի ժամվա տարիֆային ռոճիկը։

§ 34. Ի զարգացումն Աշխատանքի Օրենքների Կոդեքսի 71 և 74-րդ հոդվածների՝ սահմանվում է.

Աշխատանքի բնույթից բխող հարմարություններ ու սարքավորումներ պատրաստելու համար, վորոնք նորմաներ ու գնահատում վորոշելու ժամանակ հաշվի մեջ չեն մտել, վճարվում է համապատասխան կարգի ռոճկաչափի համաձայն, յեթե աշխատավորի հետ ուրիշ համաձայնություն չի կայացրած։

§ 35. Յերկար տևող աշխատանքներ կատարելու դեպքում, վերջնական զդելնի հաշիվը տրվում է գործը վերջացնելուց հետո, ըստ վորում աշխատողին, մյուս աշխատավորների ամսեկան աշխատավարձը տալու հետ միաժամանակ ավանս է տրվում համապատասխան տրված ամսում կատարած աշխատանքի տոկոսի, բայց վոչ պակաս տարիֆային ռոճկից։

Վերջնական հաշիվը անելիս՝ աշխատավարձի գումարից պահվում են բոլոր ավանսներն ու պարբերական վճարումները:

Յեթե ավանսների գումարը վճարելիք աշխատավարձից ավելի լինի, ապա բոլոր ավելորդ վճարածները պահվում են հաջորդ վճարումներից այն հաշվով, վոր աշխատավորին տրվող գումարը պակաս չլինի տարիֆային ռոճկի 2/3-ից (յերկու յերրորդական):

§ 36. Յեթե զդելշչիկից անկախ պատճառներով (մահ, հիվանդություն, պետական ու արհեստակցական աշխատանքի կանչվել), կամ վարչության կարգադրությամբ, տրված վորևե պատվեր կիսատ է մնում, ապա պատվերի կատարված մասի համար վճարվում է փաստորեն գործադրած ժամանակի միջին աշխատավարձով:

§ 37. Վոչ հարգելի պատճառներով պատվերը կատարելուց հրաժարվելը (գործն սկսելուց հետո), աշխատավորին վճարվում է միայն նրան հայտնած զդելնի գնահատության՝ և նույն գործը վերջացնող մյուս աշխատավորին վճարած գումարի տարբերությունը, բայց համենայն դեպս վոչ պակաս իր (սկսողի) տարիֆային ռոճկից:

§ 38. Յեթե գործն անպետք է դուրս յեկել վոչ աշխատավորի մեղքով, ապա վճարվում է այդ գործի վրա գնացած ամբողջ ժամանակի համար՝ սահմանված զդելնի գնահատությամբ:

Յեթե գործն անպետք է դուրս յեկել աշխատավորի մեղքով, ապա չի վճարվում, բայց այդ գործի վրա աշխատավորի գործադրած բոլոր ժամանակի

համար նրա ռոճկաչափի 2/3-ը (յերկու յերրորդականը) յերաշխավորվում է:

ԾԱՆՈԹ.—Բոլոր այդ դեպքերում վարձատրության չափը պետք է հաստատե Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը:

§ 39. Աշխատանքի զդելնի վճարման դեպքում յեթե 30 րոպեից պակաս դադարներ են լինում վոչ աշխատավորի մեղքով, չի վճարվում. իսկ 30 րոպեից ավելին ու մինչև 3 որը վճարվում է միջին աշխատավարձով, յեթե զդելշչիկին ուրիշ զդելնի աշխատանք չի տրվում:

Մյուս կատեգորիաների աշխատավորների գործի դադարները, յեթե այդ գործը աշխատանքի արտադրականությանը խթան հանդիսացող խրախուսական ուրիշ ձևի վճարումներ ունի (որինակ՝ անցած վերստերի, կատարած րեյսների համար), այդպիսի գործի վճարումները կատարվում են միևնույն հիմունքներով:

§ 40. Այն ցեխի վորակյալ բանվորները, վորտեղ կատարվող աշխատանքները նորմայացնելու հնար չկա (ինստրումենտալնայա, մոդելնի), ինչպես և այն ցեխերի կամ գործարանի ոժանդակ բանվորները, վորոնք իրանց աշխատանքի թափով ազդում են իրանց սպասավորած զդելշչիկների արտադրականությանը, ապա յեթե զդելնի չեն աշխատում՝ իրանց հանձված աշխատանքները հաջող կատարելու դեպքում՝ իրանց ռոճկից բացի նայած իրանց կվալիֆիկացիային ու զդելշչիկների աշխատանքի վրա ունեցած ազդեցության չափին, վճար են ստանում,—

ա) 8-րդ կարգի բանվորը . 90%

7-րդ » » . 85%

6-րդ կարգի բանվորը . 80%
5-րդ » » . 50%
4-րդ » » . 35%

մեքենայական ցեխերի պլերաբոտկի միջին տոկոսից:

բ) Ձգելշչիկներին ծառայություն մատուցող 3-րդ կարգի վոչ-վորակյալ բանվորները ստանում են արհեստանոցի կամ գործարանի ավել—վիրաբոտկայի միջին տոկոսի 35 տոկոսը:

գ) Ինստրումենտալշչիկն ու բազմեռչիկն ստանում են մեխանիկական ցեխերի վիրաբոտկայի միջին տոկոսի 100 տոկոսը, մոդելշչիկը ձուլարանի ցեխի ավել—վիրաբոտկայի միջին տոկոսի 100 տոկոսը:

§ 41. Կոլեկտիվ պայմանագրին կցված ցուցակում (հավելված № 9) մատնանշված բանվորներին, վորոնք նորմայացրած բանվորական օր չունեն, բայց տարիֆային ռոճիկը՝ տոկոսային հաշվելում է տրվում լի և հանգստյան առանձին օրերում կատարած ամբողջ աշխատանքի համար, անկախ աշխատանքի վրա գործադրած ժամերի քանակությունից ու այդ աշխատանքը կատարելու ժամանակից, բացի նրանց այն աշխատանքից, վոր կատարում են շաբաթական հանգստյան օրերին ու դեկրետով հաստատած հեղափոխական տոներին, ինչպես և այդ օրերի նախօրյակին 6 ժամից ավելի աշխատած ժամերին. այդ աշխատանքն առանձին է հաշվվում, և վճարվում է իբրև արտաժամյա:

Կոլեկտիվ պայմանագրին կցված ցուցակում (հավելված № 10) մատնանշված ծառայողները, վորոնք նորմայացրած բանվորական օր չունեն ու տոկոսային

հավելում են ստանում, լի օրերում նորմալ բանվորական ժամանակից ավելի աշխատելու, ինչպես և հանգստյան առանձին օրերում, դեկրետով հաստատած հեղափոխական տոներին ու այդ օրերի նախօրյակին 6 ժամից ավելի աշխատած ժամերի համար վոչ մի լրացուցիչ վարձատրություն չեն ստանում: Իսկ հանգստյան օրերի և այդ օրերի նախօրյակին 6 ժամից ավելի աշխատած ժամերն առանձին են հաշվվում ու վճարվում են իբրև արտաժամյա:

Վարչական-տեխնիկական պերսոնալի ծառայողները, վորոնք հաստատուն ռոճիկներ են ստանում, լի օրերում նորմալ բանվորական ժամանակից ավելի կատարած աշխատանքի համար, ինչպես և հանգստյան առանձին օրերում, դեկրետով հաստատած հեղափոխական տոներին ու այդ օրերի նախօրյակին 6 ժամից ավելի աշխատած ժամանակի համար վոչ մի լրացուցիչ վարձատրություն չեն ստանում:

Նրանց շաբթվա հանգստյան օրերին աշխատանքի գնելը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, համաձայնության գալով միութենական համապատասխան կազմակերպությունների հետ և Աշխատանքի ժողկոմատի օրգանների թույլտվությամբ, միայն նրանց անպայման հանգստյան մի ուրիշ օր տալով ամենամոտիկ 6 օրերի ընթացքում:

ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 42. Ակնեվթն իրան պատկանող կամ վարձով վերցրած իր տներում, իր բոլոր աշխատավորներին, հնարավորության չափով նրանց աշխատանքի ռայոնում՝ ձրի, ապրելու համար միանգամայն հարմար

բնակարաններ է տալիս, ինչպես և վառելիք, լույս և ջուր այն նորմաներով, վոր մատնանշված է այս կոլլեկտիվ պայմանագրին կցած «Կոմունալ կարիքների բավարարման նորմաներ» հավելվածներում։

§ 43. Ագնեվթը պարտավորվում է աշխատավորներին տված բնակարանները ապրելու համար միանգամայն պիտանի, հարմար դրության մեջ պահել ու այնտեղ անհրաժեշտ նորոգություններ անել։

§ 44. Հանրակացարանները պետք է բավական քանակությամբ սեղաններ, նստարաններ, փոքրիկ պահարաններ և լվացարան ունենան։

Հանրակացարանում ապրող յուրաքանչյուր աշխատավորի առանձին մետաղյա մահճակալ է տրվում, իր տախտակներով կամ ցանցով ու մատրացով։

Ագնեվթը բավարար քանակությամբ ձրի վառելիք, լույս ու յեռացրած ջուր է տալիս։

Յուրաքանչյուր հանրակացարանի կից բավարար մեծությամբ պլիտա ունեցող առանձին խոհանոց պետք է լինի։

Հանրակացարանի սենյակները պետք է մաքուր պահվեն Ագնեվթի ուժերով ու նրա հաշվին։

§ 45. Յեթե Ագնեվթը հնարավորություն չունի իր աշխատավորներին ապրելու բնակարան տալու ու բնակարանային կարիքները հոգալու, ապա դրանց փոխարեն պետք է հատուցանե.—բնակարանային փող վճարե՝ միայնակներին 4 ր. 88 կոպեկ, իսկ ընտանիքավորներին՝ 9 ր. 75 կոպեկ ամսեկան։ Չհոգացված բնակարանային կարիքների,—վառելիքի, լույսի, ջրի հատուցումը տրվում է համաձայն այս պայմանագրին կցած

«Կոմունալ կարիքների բավարարման նորմաներում» մատնանշած գների (հավելված № 11)։

ԾԱՆՈԹ. ա) Ընտանիքավոր է համարվում այն աշխատավորը, վորի ընտանիքի անդամներն իր մոտ են ապրում։ Իսկ յեթե Ագնեվթում ծառայում են մի ընտանիքի մի քանի անդամները, վորոնք միևնույն բնակարանում են ապրում, ապա նրանցից յուրաքանչյուրը համարվում է իբրև միայնակ։

բ) Այս կոլլեկտիվ պայմանագրում հիշվող բոլոր դեպքերում ընտանիքի անդամներ են համարվում,—աշխատավորի կինը, աշխատավորի կամ նրա կնոջ ծնողները՝ յեթե նրանք աշխատանքի ընդունակ չեն ու գտնվում են նրա խնամքի տակ. աշխատավորի կամ նրա կնոջ մինչև 16 տարեկան յերեխաները. աշխատավորի կամ նրա կնոջ մինչև 16 տարեկան քույրերն ու յեղբայրները, վորոնք նրա խնամքի տակ են գտնվում. նրա խնամքի տակ գտնված յերեխաները, աշխատավորի կամ նրա կնոջ կարդացող քույրերն ու յեղբայրները նրա ընտանիքի անդամ են համարվում մինչև ուսումը վերջացնելը։

գ) Յեթե աշխատավորը հրաժարվի Ագնեվթի կողմից իրան տրվող, իր ընտանիքի չափերին համապատասխանող բնակարանից, ապա Ագնեվթն ազատվում է նրան բնակարանի փող վճարելու պարտականությունից։

§ 46. Ագնեվթի կողմից աշխատավորներին բնականով տված կոմունալ կարիքների,—վառելիքի, լույսի ու ջրի համար փոխադրաձ հաշիվների սիստեմ է սահմանվում, վորի համաձայն՝

ա) Յեթե աշխատավորը մի ամսում օգտագործե կոմունալ մթերքները ամսեկան նորմայի սահմանված չափով, ապա վոչ մի փոխադարձ հաշիվ չի արվում։

բ) Յեթե աշխատավորը մի ամսում ավելի պակաս կոմունալ մթերքներ բանացնե, քան

ամսեկան նորմայի համաձայն նրան հասնում է, ապա Ագնեվթը աշխատավորին վճարում է չօգտագործած մասի արժեքը։

գ) Յեթե աշխատավորը ավելի կոմունալ մթերքներ բանացնի, քան նրան հասնում է ամսեկան նորմայի համաձայն, ապա աշխատավորը պարտավոր է Ագնեվթին վճարել սահմանված նորմայից ավելի բանեցրածի համար։

ԾԱՆՈԹ. 1. Կոմունալ մթերքների առանձին տեսակների արժեքը բոլոր դեպքերում հաշվում է համաձայն այն գների, որ մասնանշված է «Կոմունալ կարիքների բավարարման նորմաներում»։

2. Փոխադարձ հաշիվների սիստեմը բացառապես այն տներում է մտցվում, վորտեղ Ագնեվթը առանձին հաշվեցույցներ (սչյոտչիկներ) է դրել (1 հաշվեցույցը վոչ ավելի քան չորս բնակարանի համար), հաշվելու թե վորքան էլեկտրականություն, ջուր ու գազ է բանացրված։

§ 47. Ընթացիկ ամսվա բնակարանային փողերն ու կոմունալ կարիքների բավարարումը պետք է տրվի ավանսի հետ միաժամանակ։

ՄԱՍՆ V.

ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ ՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ

Ի պարզացումն ծառայական գործուղումների (կոմանդիրովկա) մասին Խորհրդային Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ու Ժողկոմխորհի 1927 թվի հունվարի 24-ի վորոշման (հավելված № 12), սահմանվում է հետևյալը։

§ 48. Այն աշխատավորներին, վորոնք շահագործվող նավթահանքերի սահմաններում ժամանակավոր աշխատանք կատարելու համար ռայոնից ռայոն

կամ գործարանային ռայոն են ուղարկվում, Ագնեվթը պարտավոր է ճանապարհածախս տալ մինչև աշխատանքի տեղը գնալն ու վերադառնալը։

Մի վոր և է ռայոնից Ապշերոնյան թերակղզու վրա հետախուզական (րազվեդոչնի) տեղերում աշխատանք կատարելու համար ուղարկվող աշխատավորին բացի ճանապարհածախսի վճարվում է և օրապահիկ (սուտոչնի), իրանց փաստական ամսական աշխատավարձի մեկ վաթսուներորդ մասը (1/60) գործուղման (կոմանդիրովկայի) յուրաքանչյուր օրվա համար։

Հիշյալ չափով օրապահիկ, բացի ծախսերի հատուցումը, վճարվում է շահագործվող նավթահանքերի սահմաններում ռայոնից ռայոն ուղարկված, ժամանակավոր աշխատանք կատարող աշխատավորներին, յեթե ժամանակավոր աշխատանքի տեղում անընդհատ մի օրից ավելի է մնացել, առանց հնարավորություն ունենալու իր ապրելու տեղը վերադառնալ։

ԾԱՆՈԹ. ա) Առանձին ռայոններ են ճանաչվում. 1) Բիբի-Հեյբաթ. 2) Բալաքի ռայոն. 3) Ֆաբրիկ-Գործարանային ռայոն. 4) Սուրախանու ռայոն. 5) Բինագադու ռայոն. 6) Շուբանի. 7) Լենինյան ռայոն. 8) Զըխի ռայոն. 9) Կալա. 10) Փութա. 11) Մարդաքյան-Բուզովնա. 12) Արտեմի կղզին և այլ հետախուզական (րազվեդոչնի) տեղերը։

բ) Հիշյալ օրապահիկները չեն վճարվում՝ 1) այն դեպքում, յերբ ռայոնից-ռայոն պտտելը աշխատավորի մշտական պարտականությունների մեջ է մտնում. 2) յեթե գործուղման տեղը գործուղվողի մշտական ապրելու տեղն է հանդիսանում։

գ) Մինչև 18 տարեկան անչափահասներն ու ծծող կամ մանր յերեխաներ ունեցող կանայք չեն կարող առանց իրանց համաձայնության դեպի վոր և է տեղ գործուղվել։

§ 49. Յեթե իր մշտական աշխատանքի ռայոնից ռադիուսով (ուղիղ գծով—շառավիղ) հաշված, աշխատավորն 800 սաժեն և ավելի հեռու տարածության վրա է ապրում իր ծառայության տեղից, Ադնեվթը պարտավոր է ձրի տոմսակ տալու՝ գոյություն ունեցող հաղորդակցության ճանապարհներով յերթևեկելու համար (ելեքտրաքարշ, ելեքտրական յերկաթուղի, հանքային յերկաթուղի, ավտոբուս), համապատասխան իսկական գործի գնալու որերի, բայց վոչ ավելի քան մի անգամ՝ աշխատանքի որացույցային մի որին:

1) Լենինյան, Սուրախանու և Բինագադու ռայոններում աշխատողները ճանապարհի տոմսակներ են ստանում՝

ա) Յեթե ապրում են այդ ռայոններից մեկում և աշխատում են ուրիշ տեղ, այդ դեպքում տոմսակ ստանում են հանքային ու ելեքտրական յերկաթուղիների համար:

բ) Ելեքտրական յերկաթուղու տոմսակ, յեթե ապրում են Ստ. Ռազինի անվան բանշենում և 101-րդ հողամասում, կամ Բյուլ-Բյուլա և Ամիրաջան գյուղերում:

գ) Յերկաթուղու տոմսակ, յեթե քաղաքում կամ գործարանային ռայոնում է ապրում, և ելեքտրաքարշի տոմսակ, յեթե յերկաթուղային կայարանից մինչև իր ապրելու տեղն ռադիուսով (շառավիղով) 800 սաժեն է կամ ավելի:

2) Բիբի-Հեյբաթի ռայոնում աշխատողները ստանում են՝

ա) Հանքային յերկաթուղու կամ ելեքտրական յերկաթուղու և ելեքտրաքարշի տոմսակ,

յեթե ապրում են հանքային ու գործարանային ռայոնում և յեթե յերկաթուղու վերջին կայարանից մինչև աշխատանքի տեղը ռադիուսով 800 սաժեն է և ավելի:

բ) Հանքային յերկաթուղու և ելեքտրաքարշի տոմսակ՝ յեթե ապրելու տեղից մինչև աշխատանքի տեղը ռադիուսով 800 սաժեն է և ավելի:

3) Ֆաբրիկ-գործարանային ռայոնում աշխատողները՝

ա) Ելեքտրաքարշի տոմսակ են ստանում, յեթե ապրում են քաղաքում և նույն ռայոնում:

բ) Հանքային յերկաթուղու և ելեքտրաքարշի տոմսակ են ստանում, յեթե ապրում են հանքային շրջաններում:

ԾԱՆՈԹ.—1. Տոմսակները միայն աշխատավորներին և տրվում, և բացառապես աշխատանքի գնալու ու վերադառնալու համար:

2. Ճանապարհի տոմսակները տրվում են ամեն ամիս այդ ամսվա սկզբին:

3. Քաղաքի համար ճանապարհի տոմսակներ տրվում են բոլոր բանվորներին ու աշակերտներին, իսկ ծառայողներից նրանց միայն, վորոնք մինչև 6-րդ կարգն են ստանում, հաշված և 6-րդը:

4. Յեթե ապրելու տեղից մինչև ծառայության տեղը ելեքտրաքարշի մի քանի գիծ է անց կենում, ապա աշխատավորին տոմսակներ են տրվում բոլոր գծերով, յեթե այդ գծերից յուրաքանչյուրով նա պետք է անցնի 800 սաժենից ավելի:

5. Յեթե ելեքտրաքարշի յերկու գիծ կա և աշխատավորն իրավունք ունի դրանցից մեկի համար տոմսակ ստանալու, ապա նա ստանում է այն գծի համար, վորն ավելի հարմար է:

Մ Ա Ս Ն VI

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀԱՆԳՍՏՈՒԹ ՈՒՆ

Ի զարգացումն Աշխատանքի Որենքների Կոդեքսի 94-ից 96, 98-ից 102, 109-ից 112, 134-ից 136-րդ հոդվածների՝ հետևյալն է սահմանվում։

§ 50. Ազնեվթի ձեռնարկություններում նորմալ բանվորական օրը աշխատավորի առողջության համար առանձնապես վնասակար պայմաններում կրճատվում է այն արհեստների ու աշխատանքների համար, վոր ցույց են տրված այս պայմանագրին կցած ցուցակում (հավելված № 13)։

§ 51. Բանվորական ժամանակի տևողությունը գիշերը 1 ժամով կրճատվում է։ Հերթափոխների (վախտեննի) համար գիշերն աշխատած ժամերը հավասարեցնում են ցերեկվանի հետ, ըստ վորում գիշերն աշխատած յուրաքանչյուր ժամը համապատասխան կերպով ավելացնվում է. գիշերվա մի ժամի համար վճարվում է այնպես, ինչպես ցերեկվա 8/7 ժամ, յեթե նորմալ 8 ժամյա որե. իսկ յեթե որը 6-ժամյա է, ապա յուրաքանչյուր գիշերվա ժամի համար վճարվում է ինչպես 6/5 ժամ։

ԾԱՆՈԹ.—Գիշերվա ժամանակ է համարվում յերեկոյան ժամը 10-ից մինչև առավոտյան ժամը 6-ը։

§ 52. Բանվորների ու ծառայողների կողմից լի օրերին անհարգելի պատճառներով աշխատանքի դուրս չգալը համարվում է որաբաց (պրոգուլ)։

Բանվորական օրերին աշխատանքի յեկած բանվորներին ու ծառայողներին գործ չտալը չի կարող

որաբաց (պրոգուլ) համարվել և այդ օրերի համար նրանք պետք է ստանան միջին աշխատավարձի հաշվով։

§ 53. Հանքային յերկաթուղիների յերթևեկության հետ կապված աշխատավորների աշխատանքի ժամանակն ու հանգստությունը կարգավորվում է այս պայմանագրին կցած համաձայնությամբ (հավելված № 14)։

ԾԱՆՈԹ. Հանքային յերկաթուղիների աշխատավորների աշխատանքի դուրս գալու թիվն ու վճարումը կարգավորվում է աշխատանքի գրաֆիկներով, վոր կազմում է վարչությունը, համաձայն այս հոդվածում հիշած համաձայնության։ Աշխատանքի գրաֆիկները հաստատում է Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը (ՐԿԿ)։

Մ Ա Ս Ն VII.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

Ի լրացումն և ի զարգացումն Աշխատանքի Որենքների Կոդեքսի 86, 138—145 հոդվ. սահմանվում է։

§ 54. Սիստեմատիկ կերպով արտաժամյա աշխատանքներ կատարելն արգելվում է։ Այդպիսի աշխատանքներ թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, Աշխատանքի Ժողկոմատի թույլտվությամբ և միայն վարչության կարգադրությամբ։

§ 55. Աշխատավորների առողջության վրա վատ ազդող աշխատանքների դեպքում՝ Ազնեվթը պետք է չեզոքացնող, անվնաս դարձնող միջոցներ տա այն արհեստների համար, վոր թված է ներկա պայմանագրին կցած ցուցակում (հավելված № 15)։ Այդ միջոց-

ների փոխարեն դրամական հատուցում անելն արգելվում է:

§ 56. Այն աշխատանքները, վորտեղ աշխատողի շորերն արագ մաշվում են կամ վնաս են տալիս հենց իրան, աշխատողին, Ազնեվթը ձրիաբար հատուկ շորեր ու իրեր է տալիս, համաձայն ներկա պայմանագրին կցած սպեց-հագուստի ցուցակի (հավելված № 16): Դրանց տրվելու ժամանակը հաշվվում է աշխատավորն աշխատանքի մտած որից:

ԾԱՆՈԹ.—Սպեց-հագուստը ձեռնարկության սեփականությունն է, և յերբ տրվում է, ապա հաշվեգրքույկի մեջ է մտցնվում:

§ 57. Այնպիսի դեպքերում (հրդեհ, ֆանտան և այլն), յերբ փչանում կամ վոչնչանում են աշխատավորների սեփական շորերը կամ վառնամանները, դրանց փոխարեն կամ նորերն են տրվում վնասվածին, կամ փաստական արժեքն է վճարվում, ըստ վորով հատուցում (կոմպենսացիա) տալուց փչացած իրերը տրվում են ձեռնարկությանը: Հատուցում (կոմպենսացիա) տալու անհրաժեշտությունն ու չափը սահմանում է Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը (Ր. Կ. Կ.):

§ 58. Առանձնապես կեղտոտ աշխատանքներում աշխատողներին տրվում է սպեց-սապոն, համաձայն ներկա պայմանագրին կցած ցուցակի (հավելված № 17):

§ 59. Ազնեվթի ձեռնարկություններում ու հիմնարկություններում, վորտեղ անհրաժեշտ լինի՝ պետք է բավական քանակությամբ լվացարաններ շինվեն փակ շենքերում, սապոն, ջուր ու մաքուր յերեսսրբիչ-

ներ տրվի, ինչպես և ամաններ (բակեր) լինեն՝ յեռացրած ու բավականաչափ սառցրած ջրով:

§ 60. Ազնեվթը սնունդ ընդունելու համար աշխատավորներին առողջապահական-տեխնիքական պահանջներին համապատասխան շենք է տալիս, իսկ բաց ոդում աշխատողների համար՝ գոյություն ունեցող շենքերը—տեղերը հարմարեցնում է կերակուր տաքացնելու համար:

§ 61. Ազնեվթի բոլոր ձեռնարկություններում պետք է բավարար քանակությամբ բաղնիսներ լինեն լավին սարքավորած ու միանգամայն կարգին: Բաղնիս չունեցող ձեռնարկությունների աշխատավորներին Ազնեվթը մի աշխատավորին ու նրա ընտանիքի անդամին ամսեկան 5 տոմսակ է տալիս, Ազնեվթի մյուս ռայոններում գոյություն ունեցող բաղնիսները գնալու:

§ 62. Անմիջական աշխատանքի բոլոր տեղերում Ազնեվթը պարտավոր է աչքի ընկնող տեղից կախել ապահովության տեխնիկայի ու արդյունաբերական առողջապահության վերաբերող կանոններն ու հրահանգները, ինչպես և տրավմատիզմին վերաբերող ու դժբախտ դեպքերում առաջին ոգնությունը հասցնելու պլակատներ: Այդ պլակատներից Ազնեվթը ձեռք է բերում ու կախում 15.000 որինակ:

§ 63. Աշխատավորի մահվան դեպքում՝ նրա ընտանիքը բացի մինչև մահն աշխատավորին հասնող աշխատավարձը՝ ծառայած տարիների համար նպաստ է ստանում համապատասխան ներկա պայմանագրի 13-րդ հոդվածի «գ» կետի, ապա տարիֆային ռոճկի կես ամսվա չափով հեռանալու նպաստ և բացի դրա-

նից՝ աշխատավորի 2 ամսվա տարիֆային ռոճիկը, բայց վոչ պակաս բանվորական ցանցի 4-րդ կարգի աշխատավորի տարիֆային ռոճկի 2 ամսեկանից։

Յեթե աշխատավորի մահն առաջացել ե վնասվելու (ուվեչիե) հետեվանքով, կամ թե պատահել ե իր ծառայական պարտականությունները կատարելու ժամանակ, ապա լրացուցիչ նպաստ ե տրվում աշխատավորի տարիֆային ռոճկի չորս ամսեկանը, բայց վոչ պակաս բանվորական ցանցի 4-րդ կարգի աշխատավորի տարիֆային ռոճկի 4 ամսեկանից։

ԾԱՆՈԹ.—Հիշյալ փողերը տրվում են անկախ սոցիալական ապահովագրության նպաստից։

§ 64. Նորոգություն ե ոժանդակ աշխատանքներ կատարող բանվորները, վորոնք աշխատանքը կատարում են տեղերում, վորտեղ հիմնական աշխատավորները վնասակարության համար զանազան տեսակ կոմպենսացիաներ են ստանում (հատուկ սնունդ, կըրճատված բանվորական որ ե այլն), ապա աշխատանքի յուրաքանչյուր լրիվ որվա համար այդ տեղերում նույն կոմպենսացիան են ստանում, ինչ վոր հիմնական բանվորները։

§ 65. Բոլոր աշխատավորներին, վորոնք ձեռնարկությունում անընդհատ ծառայել են $5^1/_2$ ամսից վոչ պակաս, Ազնեֆթը պարտավոր ե ծառայության մի տարում մի անգամ հերթական արձակուրդ տալ կես ամիս տեվողությամբ։

ԾԱՆՈԹ.—18 տարեկանին չհասած բոլոր աշխատավորներին ե Ֆաբզավուչի ու Գորպրոմուչի դպրոցների աշակերտներին հերթական արձակուրդ ե տրվում մի ամիս տեվողությամբ։

§ 66. Աշխատավորներին իրավունք ե տրվում արձակուրդներ կուտակելու, բայց 2 տարուց վոչ ավելի, ըստ վորում իրար վրա կուտակած արձակուրդներն ոգտագործելու իրավունքը գալիս ե 1 տարի $5^1/_2$ ամիս անընդհատ ծառայությունից հետո։

ԾԱՆՈԹ.—Արձակուրդներ կուտակելու ցանկության մասին՝ աշխատավորը հայտնում ե վարչությանը, յերբ հայտարարվում ե Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի վորոշումը՝ տրված ձեռնարկության արձակուրդների կարգի մասին։

§ 67. Առանձնապես վնասակար պայմաններում մշտապես աշխատող աշխատավորներին հերթականի հետ միաժամանակ լրացուցիչ արձակուրդ ե տրվում կես ամիս տեվողությամբ։

Վնասակար արհեստների ցուցակը կցվում ե պայմանագրին (հավելված № 18)։

ԾԱՆՈԹ.—Վնասակար ձեռնարկություններում (արտադրություններում) $5^1/_2$ ամսից պակաս բան արած աշխատավորները, վորոնք փոխադրված են նորմալ պայմաններում տարվող աշխատանքների, նույնպես ե վնասատու ձեռնարկություններում ընդմիջումներով աշխատողները, վորպիսի ընդմիջումները առաջացել են նորմալ պայմաններում գտնվող աշխատանքների փոխադրվելով, լրացուցիչ արձակուրդ տրվում ե համաձայն վնասատու արտադրություններում փաստորեն աշխատած ժամանակի, հաշվելով այսպես.—վնասատու արտադրությունում աշխատած մի ամսին՝ մի որ արձակուրդ։

§ 68. Արձակուրդի ժամանակը, կարգն ու հերթը սահմանում ե վարչությունը միութենական համապատասխան կազմակերպությունների հետ միասին ե հաստատվում ե Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի (ՐԿԿ) կողմից։

Արձակուրդի ժամանակի համար Ագնեվթը վճարում է մինչև արձակուրդ գնալը՝ հաշվելով աշխատավորի վարձը նրա միջին աշխատավարձով ու արձակուրդի տևողությամբ:

ԾԱՆՈԹ. 1) Հիվանդության պատճառով կամ սանատորիաներում բժշկվելու համար, սահմանված կարգով աշխատավորներին տրված արձակուրդը հերթական ու լրացուցիչ արձակուրդի ժամանակի մեջ չի մտնում:

2) Մինչև 18 տարեկան պատանիներին արձակուրդ տրվում է մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը:

§ 69. Յեթե աշխատավորը հերթական արձակուրդ է գնում Բագուի սահմաններից դուրս, Ագնեվթը պարտավոր է նրան մի տարուց հետո (2 տարին մի անգամ) ճանապարհի տոմսակ կամ դրամական նպաստ տալ ճանապարհածախսի փաստական արժեքի չափով, բայց վոչ ավելի քան յերկաթուղով 1000 վերստի համար, կամ ջրով՝ 1500 վերստի համար Խորհրդային Միության սահմաններում, միայն գնալու կամ հետ դառնալու համար:

ԾԱՆՈԹ. ա) Այդ նպաստն ստանալու իրավունք ունին տարիֆով անցնող բոլոր բանվորներն ու աշակերտները,—մինչև 6-րդ կարգն էլ հաշված՝ ծառայողները, և վարչական—տեխնիքական պերսոնալի ցանցի I—III կարգը մտածները:

բ) Ճանապարհածախս ստացած աշխատավորը պարտավոր է ապացույց ներկայացնել, վոր գնացել է. հակառակ դեպքում տված ճանապարհածախսը պահվում է նրա աշխատավարձից:

§ 70. Յեթե աշխատավորն արձակուրդն օգտագործելու համար դուրս է գնում Բաքվի ու նրա ռայոնների սահմաններից, ապա փաստորեն ճանապարհին գտնվելու ժամանակը, բայց 2 շաբթից վոչ ավելի, արձակուրդի ժամանակի մեջ չի մտնում, միայն դրա համար վճար չի տրվում:

§ 71. Առանց հարգելի պատճառների այս պայմանագրի § 70-ով նախատեսած ուշանալու ժամանակից ուշ վերադառնալն Ագնեվթին իրավունք է տալիս ուշացողին հեռացնել առանց վաղորոք հայտնելու և առանց արձակման նպաստ տալու, հաշիվը վերջացնելով մինչև արձակուրդի վերջին օրը:

ԾԱՆՈԹ. Վերադառնալուն խանգարող հարգելի պատճառներ են համարվում՝

ա) Առողջբաժնի տեղական օրգանի վկայականով հաստատած հիվանդությունը:

բ) Աղետը, վոր աշխատավորին զրկել է ժամանակին ճանապարհվելու հնարավորությունից, և վոր հաստատում են իշխանության տեղական օրգանները:

գ) Ձերբակալվելը կամ դատարան կանչվելը, վոր հաստատվում են պատշաճ վկայականներով, և այլն:

§ 72. Հարգելի պատճառներով արձակուրդից ուշացողը ծառայության իրավունքից չի զրկվում, յեթե հիվանդության պատճառով ուշացել է վոչ ավելի քան 4 ամիս և մյուս դեպքերում էլ՝ վոչ ավելի քան 2 ամիս: Այդ հետաձգումների համար վճար չի տըրվում:

§ 73. Այս պայմանագրի §§ 65 և 67-ի համաձայն յերբ աշխատավորներն արձակվում են, անկախ հեռացման պատճառներից, նրանց հատուցում (կոմպենսացիա) է տրվում, յեթե հեռացման ժամանակին արձակուրդի իրավունք ունին, այն է $5\frac{1}{2}$ ամիս շարունակաբար ծառայել են: Հատուցումը տըրվում է չոգտագործված արձակուրդի համար միջին

աշխատավարձի համեմատ և նրան տրվելիք արձակուրդի տևողությամբ։

Հեռացվողին իր ծառայած ժամանակի համեմատ հատուցումն է տրվում, յերբ հեռացվողը մինչև արձակման օրը դեռ արձակուրդի իրավունք չունի. այդ հատուցումը ամեն մի ծառայած ամսի համար լինում է միորյա միջին աշխատավարձի չափով, յեթե նա կիսամսյա արձակուրդի իրավունք ունի և յերկորյա միջին աշխատավարձի չափով, յեթե մի ամսյա արձակուրդի իրավունք ունի։

ԾԱՆՈԹ.—Այն հեռացվողները, վոր յերկու շաբաթից պակաս են գործել, չոգտագործած արձակուրդի համար հատուցում պահանջելու իրավունք չունին։

Մ Ա Ս Ն VIII

ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՊՈՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 74. Այս կոլլեկտիվ պայմանագիրը ստորագրելու օրից սկսած մինչև 3 ամիս ժամանակամիջոցում Ազնեֆթը պարտավորվում է մանրամասն հրահանգներ մշակել և համաձայնության գալ Միության հետ, վորոնցով ճշտորեն պարզվեն ամեն մի ինժեներատեխնիքական պաշտոնյայի իրավունքներն ու պարտավորությունները։

§ 75. Աշխատանքի Օրենքների Կոդեքսի (КЗоТ) 47-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի հիման վրա ինժեներատեխնիքական աշխատավորները հեռացվելու դեպքում մի ամիս առաջ պիտի գրավոր կերպով նախազգուշացվեն։ Ինժեներատեխնիքական աշխատավորներին դուրս գալու նպաստը (վըխոդնոյ) տրվում է ընդհանուր հիմունքներով (կոլլեկտիվ պայմանագրի § 13)։

§ 76. Յերբ ինժեներատեխնիքական աշխատավորներին փոխադրում են ուրիշ պաշտոնի կամ Ազնեֆթի մի ուրիշ ձեռնարկ՝ առանց պաշտոնը կամ ռոճիկն իջեցնելու, այդ մասին ադմինիստրացիան միաժամանակ պիտի հաղորդի միության օրգաններին։

Բայց յերբ փոխադրությունը կատարվում է ռոճկի կամ պաշտոնի իջեցումով, ինչպես և հեռացման դեպքում պետք է նախապես համաձայնության գան միության կազմակերպությունների հետ (ինժ.-տեխ. սեկ.)։

§ 77. Տնտեսական օրգանը պարտավոր է.

ա) մի ամսյա արձակուրդ տալ ինժեներատեխնիքական աշխատավորներին, յեթե նրանց բանվորական օրը նորմայի չի յենթարկված.

բ) ավելյալ արտադրության կամ ցեխի բանվորների հիմնական կադրին հավասար արձակուրդ տալ այն ինժեներատեխնիքական աշխատավորներին, վորոնք գործում են վնասակար արտադրություններում և կրակի հետ գործ ունեցող ցեխերում։

ԾԱՆՈԹ.—Նորմայի չենթարկված բանվորական օր ունեցողների անվանացուցակը պիտի կազմվի տնտեսական օրգանի ձեռքով և այդ մասին համաձայնության պիտի գան միության հետ (ինժ.-տեխ. սեկ.) յերկու ամսվա մեջ։

§ 78. Յերբ տնտեսական օրգանը ինժեներատեխնիքական աշխատավորին մեղադրում է ան-

տնտեսության կամ արտադրական սխալների մեջ, ապա տնտեսական օրգանը նախ քան պահանջ ներկայացնելը կամ դատ հարուցանելը պիտի պատասխանատու հետախուզություն (էքսպերտիզա) նշանակի միության մասնակցությամբ (ին.-տեխ. սեկ.)։

§ 79. Ինժեներատեխնիքական աշխատավորների որակը բարձրացնելու միջոցների համար Ագնեվլթը պարտավորվում է գումարներ բաց թողնել այն չափով, ինչ չափով արդյունաբերական ֆինանսական ծրագիրն է այդ նպատակի համար հատկացրել։ Այդպիսի միջոցներն են՝ դեպի ներքին — Խորհրդային Միություն և արտասահման լինելիք գործողումները (կամանդիրովկա) և էքսկուրսիաները, կրկնողական կուրսեր կազմելը և դրանց համար ուղարկելը, գիտական-տեխնիքական համագումարների ու խորհրդակցությունների ուղարկելը, տեխնիքական գրադարանի կազմել ու լրացնելը, վճարովի զեկուցումներ կազմակերպելը և այլն։ Բաց թողած գումարները ծախսելու կարգը և այդ միջոցների գործադրությունը, ինչպես և ինժեներատեխնիքական աշխատավորներին գործուղելու կարգը անհրաժեշտորեն պիտի հարմարեցվի և գործադրվի միության մասնակցությամբ (ինժ.-տեխ. սեկ.)։

Վերոհիշյալ բոլոր դեպքերում գործուղվողներն ստանում են իրենց աշխատավարձը։

Մ Ա Ս Ն IX

ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ՅԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

§ 80. Վորակյալ բանվոր ձեռքերի պակասը նորմալ կերպով լրացնելու նպատակով Ագնեվլթի ձեռնարկներում և Գորպրոմուչի դպրոցներում պահպանվում է 28 թվի հունվարի 1-ին յեղած պատանիների ու աշակերտների քանակությունը մինչև այս պայմանագրի ժամանակամիջոցը լրանալը։

ԾԱՆՈԹ.—1. Գորպրոմուչի դպրոցների աշակերտները ապահովվում են (բրոնի մեջ են մտնում) մինչև դպրոցում ուսում ավարտելը։

2. Մեծացած ու բրոնից դուրս յեկած աշակերտները չեն արձակվում, այլ ձեռնարկների հաստատուն շտատների մեջ են ընդունվում։

§ 81. § 80-ում նշանակված արտադրության շտատը կրճատելու ժամանակ հասակավորների ու պատանիների հարաբերությունը չի փոխվում։ $1^1/_2$ տարուց ավելի յերկար սովորող աշակերտները շտատները կրճատելու պատճառով չպիտի հեռացվեն։

§ 82. Արտադրության մեջ կամ մինչև 6 ամիս Գորպրոմուչի դպրոցում սովորող աշակերտների սկըզբնական ռոճկաչափը հավասար է աշակերտական տարիֆային ցանցի առաջին կարգին։

Աշակերտներին բարձր կարգերի են անցկացնում ամեն 6 ամիսը մի անգամ, յերբ նրանք համապատասխան քննություն են բռնում միության ու Ագնեվլթի հաստատած հրահանգների ու ծրագրի համաձայն, վոր կցված է այս պայմանագրին (№№ 19 և 20 հավելված)։

ԾԱՆՈԹ.—1. Բացառիկ դեպքերում քննությունը կարող է կատարվել և նշանակված ժամանակամիջոցից առաջ։

2. Ագնեվլթի ձեռնարկներում ու հիմնարկներում գործող վոչ աշակերտ պատանիների վարձատրությունը կատարվում է բանվորների կամ ծառայողների տարիֆային ընդհանուր ցանցի համաձայն՝ ըստ իրենց կատարած աշխատանքի։

§ 83. Աշակերտության ժամանակամիջոցը 3 տարուց ավելի չպիտի լինի մետաղագործական աշակերտների համար և 2½ տարուց ավելի՝ մյուս արհեստների աշակերտների համար։

ԾԱՆՈԹ.— Աշակերտներին մի ձեռնարկից մյուսն անց կացնելիս պիտի հաշվի առնել առաջին ձեռնարկում սովորելու համար անց կացրած ժամանակը։

§ 84. Պատանիների աշխատանքի վճարը կրճատված բանվորական օրվա համար տրվում է այն չափով, ինչ չափով տրվում է համապատասխան կատեգորիայի աշխատավորին ամբողջ բանվորական օրվա համար։

§ 85. Ավարտած աշակերտները չպիտի հեռացվեն, այլ պիտի ընդունվեն ձեռնարկների հաստատուն շտատների մեջ։

§ 86. Ինքնուրույն կտորով աշխատանքների թույլատրվում են 5-րդ և 6-րդ կարգերի աշակերտները։ Այդ դեպքերում նրանց տրվում են հասակավոր բանվորների գնահատման հավասար նարյադները և վրան ավելացնում պատանի աշակերտների կրճատված բանվորական օրվա համար իրենց տարիֆային ռոճկաչափի համեմատ։

5-րդ և 6-րդ կարգի՝ արտադրությունների բրիգադներում կամ առանձին վարպետների հետ գործող աշակերտները կատարած գործի համար կտորով հատուցանելու դեպքում իրենց տարիֆային ռոճկաչափով 12%-ի հավելում են ստանում բրիգադի կամ վարպետի հետ միասին աշխատելու ժամանակի համար։

ՄԱՍՆ X

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

§ 87. Ազնեվթը պարտավորվում է պրոֆտեխնիքական հիմնարկները, այն է Գործրոմուշի դպրոցները, պրոֆտեխնիքական կուրսերը, բանվորական յերեկոյան դպրոցները և Բալախանիի Տեխնիկումը, վորոնք ծառայում են Ազնեվթի աշխատավորների ուսման համար, այդ բոլորը սարքավորել և նախահաշվային կարգով պահել։

§ 88. Պրոֆտեխնիքական կրթական հիմնարկների ցանցի պահպանության ծախքերի մեջ են մտնում հետևյալները.

1) Կրթական արհեստանոցների սարքավորումը, այդ արհեստանոցների աշակերտների գործնական աշխատանքների համար պետք յեղած գործիքներն ու նյութերը մատակարարելը, հրահանգիչների (ինստրուկտորների) և ադմինիստրատիվ—տնտեսական պաշտոնյաների վարձատրությունը և աշակերտների աշխատավարձը։

2) Դպրոցական տեսական պարապմունքների համար անհրաժեշտ շենքեր հատկացնելը, սարքավորումը, վառելիքը, լուսավորությունը, հավաքել-մաքրելը և այդ շենքերի պահպանությունը, անհրաժեշտ դասական պիտույքներ ձեռք բերելը, համապատասխան կաբինետ սարքելը և ուսուցիչների աշխատավարձը։

§ 89. Միության կուլտուր-կրթական կարիքների համար ինքն Ազնեվթը պարտավորվում է ամսե ամիս

աշխատավարձի ամեն տեսակի գումարների 1%-ի (մի տոկոսի) չափ վճարել միությանը։ Այս վճարը հատուցվում է աշխատավարձը տված ժամանակամիջոցներին։

§ 90. 8 ժամյա բանվորական օրվա պայմանում պրոֆտեխնիքական կուրսերի և բանվորական յերեկոյան դպրոցների ունկնդիրների բանվորական օրը կըրճատվում է 1 ժամով, իսկ Բալախանի Տեխնիկումի I և II կուրսերի ունկնդիրներինը բացի հերթապահներից (վախտեննի)՝ 2 ժամով։ Այդ դեպքում Ագնեվթը տարիֆային ռոճկաչափի համեմատ է վճարում պակաս աշխատած ժամերի համար՝ առանց նայելու աշխատանքի վարձատրության ձևին։

Մ Ա Ս Ն XI.

ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի լրացումն և ի զարգացումն Աշխատանքի Օրենքների Կոդեքսի (КЗоТ) 151-ից մինչև 167-րդ հոդվածների սահմանվում է.

§ 91. Կոմիտեների՝ աշխատանքներից չազատված անդամները անհրաժեշտության դեպքում աշխատանքից պիտի ազատվեն՝ ամեն անգամ ձեռնարկի ադմինիստրացիային այդ մասին հայտնելով։

§ 92. Սկզբնական ու միացյալ կոմիտեների և Միության Կենտրոնական վարչության համար Ագնեվ-

թը պարտավորվում է անվճար կերպով տալ պատրաստի շենքեր վառելիքի, լույսի ու ջրի հետ միասին, միացյալ կոմիտեների համար ուղղակի հեռախոսներ և սկզբնական կոմիտեների համար տնտեսական միավորների հետ կոմուտատորներով միացած հեռախոսներ, այլ և նա պիտի հավաքել-մաքրել տա սկզբնական կոմիտեների ու կարմիր անկյունների սենյակները, բայց այն պայմանով, որ դրա համար անհրաժեշտ չլինի առանձին աղախին վարձելը։

§ 93. Կոմիտեների պահպանության համար Ագնեվթը ամեն ամիս 1,7% (մի ամբողջ և յոթ տասներորդ տոկոս) է վճարում այն բոլոր գումարների համապատասխան, որ նրա ձեռնարկների ու հիմնարկների աշխատավորներն են ստանում նրանից իբրև աշխատավարձ։ Վճարումը կատարվում է միացյալ կոմիտեներին։

§ 94. Ագնեվթը ամեն ժամանակ գործից ազատում է միության այն անդամներին, որոնք կանչվում են պրոֆեսիոնալ, կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ կազմակերպությունների նիստերի համար։ Ագնեվթը կորցրած ժամանակի համար վճար է տալիս միջին աշխատավարձի չափով, որ չպիտի պակաս լինի նրա տարիֆային ռոճկաչափից. այդ առթիվ ամեն անգամ համապատասխան դոկումենտներ պիտի ներկայացվեն, որ իրոք նրանք կանչված են։

§ 95. Ներկա պայմանագիրը ցուցակագրվելուց հետո պիտի տպագրվի Ագնեվթի հաշվին և հանձնվի ի կարգադրություն Միության՝ 9.000 օրինակ ռուսե-

րեն լեզվով, 3.500 օրինակ թուրքերեն և 1.000 օրինակ հայերեն լեզվով, այլ և պլակատի ձևով 1.000-կան օրինակ յուրաքանչյուր լեզվով։

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վարչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ
Վարչության քարտուղար՝ Ո. Ա. ՁԵՅՆԱԼՈՎ
Տարիֆ-տնտ. բաժնի վարիչ՝ Մ. Ֆ. ՖՐՈԼՈՎ

ԱՋՆԵՎԹ

Վարչության նախագահ՝ Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎ
Վարչության նախ. տեղ. Կ. Ա. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ
Վարչության անդամ՝ ՅԱ. Վ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Աշխ. և եկոն. բաժնի կառավ. Բ. Մ. ՇԵՅՆԻՆ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված № 1
կոլեկտիվ պայմանագրի § 2-ին

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿՅԱԼ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՅԱԿԸ, ՎՈՐՈՆՑ ԻՐԱՎՈՒՆՔ Է ՏՐՎՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՎԱՐՁԵԼՈՒ ՅԵՎ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ

1. Ագնեվլթի վարչության նախագահ 1
2. Վարչության նախագահի տեղապահ . . . 1
3. Տեխնիքական ավագ դիրեկտոր՝ վարչության անդամ 1
4. Տեխսնարի դիրեկտոր՝ վարչության անդամ 1
5. Ֆինանսական մասի հսկող՝ վարչության անդամ 1
6. Նավթաթոր գործարանների վարչության դիրեկտոր 1
7. Ապրանքային վարչության դիրեկտոր . . 1
8. Գլխավոր հաշվապահ 1
9. Ագնեվլթի գործերի կառավարիչ 1
10. Նավթահանքային գրուպպաների կառավարիչներ 5
11. Գործարանների գրուպպաների կառավարիչներ 2
12. Հորափորման գլխավոր գրասենյակի կառավարիչ 1

13. Սուրախանիի, Բիբի-Հեյբաթի և Բինագադիի նորավորման գրասենյակների կառավարիչներ . . . .
14. Նավթահանքային ցերկաթուղիների պետ
15. Ավտո-Տրանսպորտի կառավարիչ . . . .

Ընդամենը . .

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վարչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ
Վարչության քարտուղար՝ Ո. Ա. ՋԵՅՆԱԼՈՎ
Տարիֆ-տնտ. բաժնի վարիչ՝ Մ. Ֆ. ՖՐՈԼՈՎ

ԱԶՆԵՎԹ

Վարչության նախագահ՝ Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎ
Վարչության նախ. տեղ. Կ. Ա. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ
Վարչության անդամ՝ ՅԱ. Վ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Աշխ.-եկոն. բաժնի կառավ. Բ. Մ. ՇԵՅՆԻՆ

Հավելված № 2
Կոլեկտ. պայմանագրի § 2-ին

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը վ ո ր ո շ ո ւ մ ե ն.—

1. Ժամանակավոր բանվոր և ծառայող են համարվում.—

ա) այն բանվորներն ու ծառայողները, վոր վարձվում են վորոշ ժամանակով ցերկու ամսվա սահմաններում, կամ վարձվում են անորոշ ժամանակով, բայց վոչ ավելի ցերկու ամսից.

բ) այն բանվորներն ու ծառայողները, վոր վարձվում են ցերկու ամսից ավելի, բայց վոչ չորս ամսից ավել ժամանակամիջոցով, վոր փոխարինեն ժամանակավորապես բացակայող աշխատավորներին, վորոնց պաշտոնը որենքի հիման վրա պահվում է նրանց համար:

2. Իբրև ժամանակավոր բանվոր ու ծառայող վարձվողները հենց սկզբից, աշխատավորական պայմանագիրը կապելիս, այդ մասին պիտի նախազգուշացվեն։

3. Աշխատանքի ընդհանուր օրենսդրության գործողությունը ժամանակավոր բանվորների ու ծառայողների վրա տարածվում է այն բացառություններով, վորոնք ներկա վորոշման հետևյալ հոդվածներում են վորոշված։

4. Վորոշ ձեռնարկում, հիմնարկում կամ տնտեսության մեջ գործող կոլլեկտիվ պայմանագիրը (տարիֆային համաձայնությունը) ժամանակավոր բանվորների ու ծառայողների վրա տարածվում է միայն այդ պայմանագրի (համաձայնության) նախատեսած դեպքերում ու սահմաններում։

5. Անկախ վարձվելու ժամանակամիջոցից ժամանակավոր բանվորներին ու ծառայողներին հաշվեգրքույկներ են տրվում, յեթե վարձված է ավելի քան յերկու շաբաթով, կամ փաստորեն յերկու շաբաթից ավել է գործել։

6. Վարձվողը կարող է քանդել աշխատավորական պայմանագիրը՝ հեռանալուց մի օր առաջ հայտնելով վարձողին։

7. Վորոշ ժամանակամիջոցով ժամանակավոր բանվորներ ու ծառայողներ վարձելիս վարձողը աշխատավորական պայմանագիրը կարող է քանդել— ա) յեթե ձեռնարկը, հիմնարկը կամ տնտեսությունը ամբողջովին կամ մասնակի լիկվիդացիայի յենթարկվի, ինչպես և յեթե ձեռնարկում, հիմնարկում կամ տնտեսության մեջ գործը կրճատվի. բ) յեթե ձեռ-

նարկում կամ տնտեսության մեջ արտադրական բնույթ ունեցող պատճառներով աշխատանքը կանգ առնի մի շաբաթից ավել ժամանակամիջոցով. գ) յեթե վարձվողը այն աշխատանքին, վորի համար վարձված է, անպետք լինի. դ) յեթե վարձվողը աշխատավորական պայմանագրով իր վրա դրած պարտականությունները կամ ներքին կարգավորման կանոնները չի կատարում. յե) յեթե վարձվողը պատշաճ իշխանության օրգանների կողմից քրեական պատասխանատվության յենթարկվի, իր կատարելիք գործի հետ անմիջապես կապված արարքների համար, ինչպես և յեթե վարձվողը կալանքի տակ լինի ավելի քան մի շաբաթ. զ) յեթե վարձվողը առանց հարգելի պատճառների գործի չի գալիս ամսական յերեք օրից ավել. է) յեթե վարձվողը մի շաբթից ավել գործի չի գալիս ժամանակավոր կերպով աշխատունակությունը կորցնելու պատճառով կամ յեթե ուրիշ հարգելի պատճառներով ավելի քան յերեք օր շարունակ բացակայում է։

ԾԱՆՈԹ.—Ներկա հոդվածում հիշած դեպքերում արձակելու համար չի պահանջվում գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովի նախնական վորոշումը, բայց վարձվողն իրավունք ունի արձակվելու դեմ կոնֆլիկտային կարգով առարկել, ըստ վորում անկանոն արձակման համար գանգատ պիտի տալ արձակման օրից վոչ ավելի ուշ քան յերկու շաբաթ։

8. Ժամանակավոր բանվորներն ու ծառայողները, վորոնք վորոշ ժամանակամիջոցով են վարձված և հեռացվել են հիմնարկի, ձեռնարկի կամ տնտեսության լիկվիդացիայի յենթարկվելու, գործը կրճատելու կամ մի շաբաթից ավելի այդ գործը կանգնեցնելու

պատճառով (7-րդ հոդվ. «ա» և «բ» կետեր), պետք է վարձողի կողմից նախազգուշացվեն հեռացվելուց յերեք որ առաջ: Յեթե նախազգուշացում չլինի, ապա նրանց պիտի տրվի դուրս գալու նպաստ յերեք որվա աշխատավարձի չափով:

Վորոշ ժամանակամիջոցով վարձված (7-րդ հոդվ. «գ», «դ», «յե», «զ» և «ե») ժամանակավոր բանվորների ու ծառայողների հեռացման մնացած բոլոր դեպքերում չի պահանջվում հեռացման մասին նախազգուշացում կամ հեռացման նպաստ:

9. Անորոշ ժամանակամիջոցով ժամանակավոր բանվորներ և ծառայողներ վարձելիս՝ վարձողն իրավունք ունի ամեն ժամանակ, առանց պատճառները բացատրելու, քանդել պայմանագիրը հեռացումից մի որ առաջ նախազգուշացնելով վարձվողին, կամ նախազգուշացում չլինելու դեպքում նրան մի որվա միջին աշխատավարձը տալով:

10. Յերբ վարձողը իր հանձն առած պարտավորությունները խախտելով քանդում է աշխատավորական պայմանագիրը, այն ժամանակ վարձվողն իրավունք ունի հեռացման նպաստ ստանալ յերեք որվա միջին աշխատավարձի չափով, յեթե վարձված է վորոշ կերպով մի ամսից ավելի ժամանակամիջոցով և մյուս դեպքերում ել—մի որվա միջին աշխատավարձի չափով:

11. Յերբ ժամանակավոր բանվորի կամ ծառայողի գործը մի շաբաթից ավել է շարունակվում, ապա վարձվողի պահանջով աշխատավարձը պիտի նրան վճարվի ամենաքիչը շաբաթը մի անգամ:

ԾԱՆՈԹ.—Այս հոդվածի ուժը չի տարածվում այն ժամանակավոր բանվորների ու ծառայողների վրա, վորոնք վարձված են ժամանակավորապես փոխարինելու բացակայող աշխատավորներին (1-ն հոդվ. «բ» կետ):

12. Հաշիվը ուղիղ չտեսնելու համար յեղած պահանջները պիտի ներկայացնվեն հաշիվը վերջնականապես փակելուց մինչև մի ամիս:

13. Յեթե վարձված է մինչև վեց որվա համար, այդ վեց որվա ընթացքում յեղած շաբաթական հանգըստյան ու տոն որերին և առանձին հանգստյան որերին աշխատանք կարող է կատարվել առանց գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովի և աշխատանքի տեսչության վավերացման. այդ դեպքերում ել աշխատավարձը պայմանավորված չափերից ավելի չի տրվում:

Այդ դեպքում ել պարտադիր չէ շաբաթական հանգստի և տոնական որերի նախընթաց որերը աշխատանքի ժամանակը կրճատելը:

14. Յեթե բանվորը կամ ծառայողը գործը չի կատարել վարձողի կարգադրությամբ, վոր գործը կանգնեցնի, ապա անցկացրած ժամանակի համար, բայց վոչ ավելի քան մի շաբաթ, աշխատավարձը հատուցվում է տարիֆային ռոճկաչափով:

Իսկ յեթե վարձվողը գործը չի կատարել իրենից անկախ պատճառներով, ինչպես և վարձողի կարգադրությամբ չի գործել մի շաբաթից ավել ժամանակ, ապա անցկացրած ժամանակի համար վարձատրության չափը սահմանվում է կողմերի համաձայնությամբ:

15. Յեթե ժամանակավոր բանվորները և ծառայողները գործը դադարեցնում են 1925 թ. սեպտեմբերի 18-ի օրենքով (Խորհրդային Միության Օրենքների ժողովածու 1925 թ. № 62, 463 յեր.) պարտադիր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու համար կանչվելու հետևանքով, ապա պաշտոնը և աշխատավարձը նրանց համար չի պահվում։

Պատշաճ դեպքերում միանվագ նպաստ է տրվում շաբաթական միջին աշխատավարձի չափով՝ մի ամսից ավելի գործողներին և յերեք օրվա միջին աշխատավարձի չափով—վեց օրից մինչև մի ամիս գործողներին։

Մինչև վեց օր գործողներին նպաստ չի տրվում։

16. Վարձողը պարտավոր չե աշխատավարձ վճարել վարձվողին այն դեպքում, յերբ վարձվողը գործից կտրվում է իբրև ներկայացուցիչ մասնակցելու համագումարներին, կոնֆերանսներին և լիազորների ժողովներին, վոր հրավիրում են պրոֆեսիոնալ և կոոպերատիվ կազմակերպությունները։

17. Յեթե վարձողի կարգադրությամբ ժամանակավոր բանվորներին ու ծառայողներին փոխադրում են աշխատանքի մի տեղից մի ուրիշ տեղ՝ վարձվողին վճարվում են տեղափոխության ծախքերը։ Հատուցման մյուս տեսակները, ինչպես և տեղափոխության ժամանակի աշխատավարձը վորոշվում են կողմերի համաձայնությամբ։

18. Վարձվողին պատկանող գործիքների մաշվելու հատուցումը կողմերի համաձայնությամբ կարող է մտցնվել աշխատավարձի մեջ։

19. Ժամանակավոր բանվորներն ու ծառայողները արձակուրդի կամ նրան փոխարինող հատուցման իրավունքով չեն օգտվում։

20. Խորհրդային Միության Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի հատուկ հրահանգի համաձայն ժամանակավոր բանվորներին ու ծառայողներին տրվում է սպեց-հագուստ (ձեռնոց, գոգնոց և այլն) և նախազգուշության անհրաժեշտ հարմարություններ (ոդաշնչության գործիք-ռեսպիրատոր, ակնոց և այլն), վոր պաշտպանվեն արտադրության վնասակարությունից կամ վտանգներից։

21. Ժամանակավոր բանվորների ու ծառայողների սոցիալական ապահովագրությունը կարգավորվում է Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի հատուկ վորոշումներով։

22. Ներկա վորոշման ուժը չի տարածվում հետևյալ դեպքերի վրա.—ա) յերբ ժամանակավոր բանվորը կամ ծառայողը աշխատավորական պայմանը չերկարացնելու հետևանքով 1-ն հոդվածի «ա» և «բ» կետերի ցույց տված ժամանակամիջոցներից ավելի է գործել. բ) յերբ արձակված ժամանակավոր բանվորը կամ ծառայողը նորից միևնույն ձեռնարկում, հիմնարկում կամ տնտեսությունում աշխատանքի է ընդունվում մի շաբաթից վոչ ավելի ընդմիջումից հետո, յեթե միայն ընդմիջումից առաջ և հետո, նրա աշխատելու ժամանակամիջոցները միասին առած, համապատասխան կերպով անցնում են յերկու ամսից կամ չորս ամսից։

Վերոհիշյալ յերկու դեպքում էլ բանվորը կամ ծառայողը իր և վարձողի մեջ աշխատավորական պայմանը յերևան գալու րոպեյից այլ ևս ժամանակավոր չի համարվում։ Սակայն յերբ ժամանակավոր բանվորը կամ ծառայողը մշտական գործի է անցնում, ապա դրանից առաջ յեղած Սոցիալական Ապահովագրության վճարների վերագումարումը (պերեսչոտը) չի կատարվում։

23. Սեզոնային աշխատանքներում զբաղված ժամանակավոր բանվորների ու ծառայողների վերաբերմամբ՝ բացի ներկա վորոշման 1—22 հոդվածներից գործադրվում են հետևյալ կանոնները. ա) կողմերի համաձայնությամբ բանվորական ժամանակի տևողությունը, աշխատանքի վճարման կարգն ու չափը կարող են սահմանվել տվյալ սեզոնային աշխատանքներում զբաղված համապատասխան կատեգորիաների մյուս աշխատավորների հետ հավասար հիմունքներով. բ) արտաժամյա աշխատանքներ թույլատրվում են միևնույն կարգով, վորպիսին պահվում է տվյալ սեզոնային աշխատանքներում զբաղված համապատասխան կատեգորիաների մյուս աշխատավորների վերաբերմամբ. գ) սեզոնային աշխատանքները վերջանալու հետևանքով յերբ հեռացնում են ժամանակավոր բանվորին կամ ծառայողին, ապա հեռացման մասին նախազգուշացում չի պահանջվում կամ հեռացման նպաստ չի տրվում։

24. Ներկա վորոշումը ուժի մեջ է մտնում նրա հրատարակության րոպեյից։ Միութենական Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտե-

ներին առաջարկվում է ներկա վորոշումը ամբողջովին մտցնել Միութենական Հանրապետությունների Աշխատանքի Օրենքների Կոդեքսների մեջ։

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի տեղապահ՝ Ա. ՑՅՈՒՐՈՒՊԱ

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ

Հավելված № 3
Կոլեկտ. պայմանագրի § 7-ին

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏԻՉ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

§ 1. Միության և Ադնեվթի մեջ կապված կոլեկտիվ պայմանագիրը և լրացուցիչ համաձայնությունները իրագործելու վրա հսկելու և պայմանագրի առթիվ ծագած վեճերն ու կոնֆլիկտները լուծելու համար Ադնեվթի ձեռնարկներում կազմակերպվում են Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովներ (РКК):

§ 2. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովներ կազմակերպվում են հետևյալ ձեռնարկներում.—

Բալախանի-Սաբունչու ռայոնում

1. Ռայոնի վարչությունում (ծառայում և նյութեղենի ու տրանսպորտի բաժնին).
2. Կոմմունալ բաժնում.
3. «Կալինինի անվան» մեխանիքական արհեստանոցում.
4. «Բուդյոննու անվան» մեխանիքական արհեստանոցում.
5. Կառուցողական գրասենյակում.
6. Գազային բաժնում.
7. Ապրանքային վարչությունում.

8. 10-րդ նավթահանքում (Խորազանի).
9. Խորհրդային I նավթահանքում:

Ռամանու ռայոնում

10. Նավթահանքային գրուպպայի վարչությունում (ծառայում և նյութեղենի ու տրանսպորտի բաժնին).
11. Կոմունալ բաժնում.
12. «Ստալինի անվան» մեխանիքական արհեստանոցում.
13. Կառուցողական գրասենյակում.
14. Ավտոտրանսպորտի գարաժում:

Լենինյան ռայոնի հորափորման բաժնում

15. Գլխավոր գրասենյակի կոմունալ բաժնում.
16. Բալախանիի գրասենյակում («Վելիկի Ոկտյաբր» մեխ. արհեստանոցի հետ).
17. Սաբունչու 1-ին գրասենյակում («Իլիչի անվան» մեխան. արհեստանոցի հետ).
18. Սաբունչու 2-րդ գրասենյակում («Ֆրունզեյի անվան» մեխան. արհեստանոցի հետ).
19. Ռամանու գրասենյակում («Կրասնի Ոկտյաբր» մեխան. արհեստանոցի հետ).
20. Իզոլիացիայի բաժնում («Էնգելսի անվան» մեխ. արհեստանոցում).
21. «Ռիկովի անվան» կենտրոնական մեխանիքական արհեստանոցում.
22. «Զինովևի անվան» կենտրոնական մեխանիքական արհեստանոցում:

Սուրախանու ռայոնում

23. Նավթահանքային գրուպպայի վարչությունում (հոգում է վարչության, կոմունալ բաժնի, կենտրոնական նյութեղենի պահեստի, Ավտո-գուժ-տրանսպորտի, 6-րդ, 7-րդ և 3-րդ նավթահանքերի մասին)

24. «Կալա» նավթահանքում.

25. Մեխանիկայի բաժնում.

26· Կառուցողական գրասենյակում (և խճուղիների բաժնի համար).

27. Գազային բաժնում.

28. Ապրանքային բաժնում.

29. Հորափորման 1-ն յենթաբաժնում (1-ն մեխան. արհեստանոցի հետ).

30. Հորափորման 2-րդ յենթաբաժնում («Ֆոմինի անվան» մեխ. արհեստանոցի հետ).

Բիբի-Հեյբաթի ռայոնում

31. Նավթահանքային գրուպպայի վարչությունում (հոգում է նյութեղենի ու տրանսպորտի բաժնի մասին).

32. «Իլիչ» նավթահանքում (Բուխտա).

33. 10-րդ նավթահանքում.

34. Ռայոնի կոմունալ բաժնում.

35. «Հոկտեմբերյան հեղափոխության անվան» կենտրոնական արհեստանոցում.

36. Տնտեսական հորափորման բաժնում.

37. Ելեքտրաբաժնում.

38. Գազային բաժնում.

39. Կառուցողական գրասենյակում.

40. Ավտոտրանսպորտի գարաժում.

41. Հորափորման բաժնում (1-ն մեխ. արհեստանոցի հետ).

42. Կանատային հորափորման բաժնում (2-րդ մեխ. արհեստանոցի հետ).

43. Հետախուզիչ հորափորման բաժնում:

Բինագադու ռայոնում

44. Նավթահանքային գրուպպայի վարչությունում (հոգում է նյութեղենի ու տրանսպորտի բաժնի մասին).

45. Կենտրոնական արհեստանոցում.

46. Հորափորման բաժնի փորող խմբերում.

47. Մեխանիքական արհեստանոցի և հորափորման բաժնի տնտեսական մասում:

Շուբանու ռայոնում

48. «Վոլոդարսկու անվան» 6-րդ նավթահանքում.

49. Փութայի նավթահանքում.

50. Կարադաղի հետախուզական գործերում.

51. Ջայիլ-Դաղի հետախուզական գործերում.

Նավթաթոր գործարաններում

52: Նավթաթոր գործարանների վարչությունում (հոգում է 1-ն գրուպպայի № 3 և № 4-ի ու Հրդեհաշեջ բաժնի մասին).

53. I գրուպպայի № 1 գործարանում.

54. II » գործարաններում.

55. I գրուպպայի գործարանների Մեխ.-նորմ-ավորումների բաժնում.

56. Ագնեվլթի Ապրանքային վարչությունում (հոգում և գագային վարչության և Գրիշա Ոկոլեանի անվան փարգավուչի գպրոցի մասին)։

Տրանսպորտում և Տեխնաբում

57. Հանքային յերկաթուղու վարչության և շարժման բաժնում.

58. Զաբրաթի դեպոյում.

59. Ագնեվլթի կենտրոնական գարաժում.

60. Ավտոբեմոնտի գործարանում.

61. Խճուղային բաժնում.

62. Ագնեվլթի գլխավոր Մագազինում և Տեխնաբում։

Քաղաքային ռայոնում

63. Ագնեվլթի գլխավոր գրասենյակում.

64. Ուտիլիզացիոն բաժնում։

Նավթային Հետախուզումներում

65. Խան Ղշլաղում.

66. Բար-Զանախում։

ԳՆԱՀԱՏԻՉ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 3. Գնահատիչ-Կոնֆլիկտային հանձնաժողովը քննում և հաստատում է վարչության կողմից առաջարկվող պատրաստելու (վըրաբոտկի) չափերը և կտորովի (զդելնի) գնահատումները.

ԾԱՆՈԹ.—Պատրաստելու չափերը և կտորովի գնահատումները մշակվում են Տեխնիկա-նորմայացման օրգանների, կամ ձեռնարկի ու հիմնարկի վարչության ձեռքով, վորոնք և առաջարկվում են ի հաստատություն Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի։

§ 4. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը կողմերի դիմումով ստուգում է, թե վարչության տված արհեստային փորձերը (պրոբները) վորքան համապատասխան են աշխատանքի բնույթին։ Նոր ընդունվողի կամ բարձր կարգերը փոխվելու համար փորձի յենթարկվելու ցանկություն ունեցողի աշխատանքը կատարելը, ինչպես և այդ աշխատանքի գնահատությունը կատարվում է բացառապես վարչության ձեռքով։

ԾԱՆՈԹ.—Փորձի յենթակա աշխատավորների վեճերը լուծվում են Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի ձեռքով, յեթե պետք է լինում վորոշել, թե նրանք վորքան պիտանի են բարձր կարգի փոխվելու։

§ 5. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը հաստատում է արձակուրդների կարգն ու հերթը։

§ 6. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը ստուգում է թե առանձին աշխատավորների և թե աշխատավորների խմբերի աշխատավարձի հաշիվը, յերբ դրանք դիմում են անում և տորին կոմիտեն էլ պաշտպանում է այդ։

§ 7. Ձեռնարկում կամ հիմնարկում կոլեկտիվ պայմանագրի և լրացուցիչ համաձայնությունների, ինչպես և ներքին կարգավորման կանոնների բա-

ցատրության կամ գործադրության վերաբերմամբ յեղած բոլոր վեճերը (կոնֆլիկտները) քննվում են և լուծվում Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի ձեռքով:

ԾԱՆՈԹ.—Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի իրավասության յենթակա չեն այն վեճերը, որ լինում են ընդդեմ կոլեկտիվ պայմանագրի եյության, որ պահանջում են փոխել նրա առանձին մասերը կամ լրացուցիչ պայմաններ մտցնել կոլեկտիվ պայմանագրի մեջ, ինչպես և այն կոնֆլիկտները, որ ծագում են աշխատանքի և տնտեսական ապահովագրության օրենքները խախտելու հողի վրա:

ԳՆԱՀԱՏԻՉ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

§ 8. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը կազմվում է հավասարության սկզբունքով չորս անդամից—յերկու ներկայացուցիչ Միության կողմից և յերկու ներկայացուցիչ ձեռնարկի կողմից:

§ 9. Կողմերը նշանակում են Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի ներկայացուցիչներին:

ԾԱՆՈԹ.—Յուրաքանչյուր կողմը ցանկացած ժամանակ կարող է յետ կանչել իր ներկայացուցիչներին և միաժամանակ նրանց փոխարինել ուրիշներով:

§ 10. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի բանվորների ու ծառայողների կողմից յեղած (Հանձնաժողովի բանվորական մասը) անդամները հաստատվում են համապատասխան միացյալ կոմիտեյի կողմից և կարող են յետ կանչվել միայն նրա համաձայնությամբ:

Գործկոմի (Ջավկոմի) վերընտրվելովը վերջանում են և նրանց ընտրած Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի անդամների լիազորությունները:

§ 11. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի անդամները գործում են աշխատանքի ժամերի ընթացքում և նրանց վճարում է Ազնեվթը միջին աշխատավարձի չափով:

§ 12. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը իր գործերը վարելու համար պիտի ունենա տեխնիքական քարտուղար, վորին վարձատրում է Ազնեվթը:

§ 13. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը առանձին տեխնիքական ապարատ չունի և իր կարիքների համար ոգտվում է հիմնարկի կամ ձեռնարկի ապարատով:

ԳՆԱՀԱՏԻՉ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԳՈՐԾԵՐԸ ՆԱՅԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 14. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում դռնբաց:

ԾԱՆՈԹ. - Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի վորոշումով կարող են տեղի ունենալ դռնփակ նիստեր:

§ 15. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում ըստ պահանջի, ըստ վորում յուրաքանչյուր կողմի ներկայացուցիչները մյուս կողմի պահանջովը պետք է ներկայանան արտակարգ նիստին:

§ 16. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը մտցրած բոլոր հարցերը պիտի լուծվեն ամենաուշը 72 ժամում (3 օրում)՝ սկսած հանձնաժողովը մտնելու րոպեյից:

§ 17. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովները մշտական նախագահներ ու քարտուղարներ չունին: Հանձնաժողովի նիստերում կողմերի ներկայացուցիչները հերթով նախագահում են և քարտուղարների պարտականություններն են կատարում: Միևնույն նիստում նախագահն ու քարտուղարը միևնույն կողմից լինել չեն կարող:

§ 18. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովը քննում է՝ հանքգործկոմների դիմումները, աշխատավորների խմբերի ու առանձին աշխատավորների՝ հանքգործկոմների միջոցով, իսկ վորտեղ հանքգործկոմ չկա լիազորների միջոցով արված դիմումները, նույնպես և վարչության դիմումները:

§ 19. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի ամեն մի կողմը իրավունք ունի նիստերին հրավիրել տեղյակ անձինք, թեև դրանք գործելիս չլինեն այդ ձեռնարկում կամ հիմնարկում:

Հրավիրված տեղյակ մարդիկ օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

§ 20. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովում հարցերը լուծելու ժամանակ կողմերը (բանվորական մասը և վարչության ներկայացուցիչները) հավասար ձայներ ունեն:

§ 21. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի քննած բոլոր հարցերը լուծված են համարվում, յերբ նրանց մասին միաձայն վճիռ է կայանում:

§ 22. Գնահատիչ-Կոնֆլիկտայնն Հանձնաժողովի այն վորոշումները, վոր կողմերի համաձայնությամբ են ընդունված, պարտադիր են յերկու կողմերի համար, բողոքի յենթակա չեն և պետք է գործադրվեն այդ Հանձնժողովի սահմանած ժամանակամիջոցում:

§ 23. Յերբ կողմերից մեկն ու մեկը հրաժարվում է Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի վորոշումները կամովին կատարելուց, ապա այդ վորոշումը գործադրելու շահագրգռված կողմը 48 ժամվա մեջ Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի վորոշումը ուղարկում է Աշխատավորական Դատարան՝ վորոշումը ի կատար ածելու:

§ 24. Յերբ Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովում համաձայնության չեն գալիս, ապա վիճելի խնդիրը՝ նրան վերաբերող բոլոր դոկումենտների և նյութերի հետ միասին միության միջոցով 48 ժամվա մեջ հետագա ընթացք է ստանում կոնֆլիկտների համար սահմանված կարգով:

§ 25. Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճեններն ուղարկվում են միությանը յերեք օրվա մեջ:

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վավչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ
Վարչության քարտուղար՝ Ռ. Ա. ՋԵՅՆԱԼՈՎ
Տարիֆ.-տնտ. բաժնի վարիչ՝ Մ. Ֆ. ՖՐՈԼՈՎ

ԱԶՆԵՎԹ

Վարչության նախագահ՝ Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎ
Վարչության նախ. տեղ. Կ. Ա. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ
Վարչության անդամ՝ ՅԱ. Վ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Աշխ.—եկոն. բաժնի կառավ. Բ. Մ. ՇԵՅՆԻՆ

Հավելված № 4
Կոլ. պայմանագրի § 17-ին

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ*)

(Ձեռնարկների համար)

1) Ձեռնարկների ներքին կարգավորումը վորոշվում է հետևյալ կանոններով.

2) Ներքին կարգավորման կանոնները պիտի հաղորդվեն ձեռնարկի բոլոր աշխատավորներին, վորի համար կախվում են նավթահանքի աչքի ընկնող տեղում, բաժանմունքներում, գրասենյակներում և գործի ուրիշ տեղերում:

3) Ներքին կարգավորման կանոնները պարտադիր են ինչպես ձեռնարկների բանվորների ու ծառայողների, այնպես էլ վարչության համար:

4) Աշխատավորներից վոչ մեկը չի կարող արդարանալ պատճառ բերելով, վոր տեղյակ չէ ներքին կարգավորման այս կանոններին:

ԾԱՆՈԹ.—Ներքին կարգավորման այս կանոնները տարածվում են նաև Փարզավուչի և Գորպրոմուչի արտադրության մեջ պրակտիկայով պարապող աշակերտների վրա:

---

*) Այս հավելվածի մեջ թված ներքին կարգավորման կանոնները և տուգանումների ցուցակը կյանքի մեջ են մտցրվում Խորհրդ. Ադրբեջանի Աշխժողկոմատի Կոլլեգիայի կողմից հաստատվելուց հետո:

5) Ներքին կարգավորման այս կանոնները կարող են փոփոխվել և լրացվել—

ա) Յերբ փոփոխվեն տիրող որենսդրությունները կամ տվյալ ձեռնարկում գործող կոլլեկտիվ պայմանագիրը:

բ) Յերբ փոփոխվեն աշխատանքների կատարման պայմանները կամ փոփոխվեն ձեռնարկների կազմակերպությունները:

6) Փոփոխությունները և լրացումները համաձայնեցվում են միության համապատասխան կազմակերպության հետ և հաստատվում են աշխատանքի տեսչի կողմից:

Փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում, յերբ հայտարարվում են պատշաճ տեղերում կախելով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

7) Բոլոր բանվորներն ու ծառայողները պարտավոր են գործի գալ և գործից հեռանալ՝ գործի կամ հերթակալության սկսելու և վերջացնելու համար սահմանված ճիշտ ժամանակին:

8) Նավթահանքերում, գործարաններում, արհեստանոցներում գործելու ժամանակը, ինչպես և հանգստի ու սնունդ ընդունելու ընդմիջումների ժամանակը — բանվորների բոլոր կատեգորիաների համար սահմանվում է ամեն մի ձեռնարկի համար՝ առանձին ցուցակով:

9) Բանվորները և ծառայողները գործի գալիս և գործից հեռանալիս պարտավոր են ճշտիվ կատարել

ձեռնարկում սահմանված հսկիչ (կոնտրոլի) կանոնները:

10) Գործը սկսելու համար նշանակված ժամանակից հետո գործի չեկողները ուշացած են համարվում: Ուշացողների ցուցակը առանձին պահվում է, որ տուգանումների ցուցակի տաբելի համաձայն տուգանման չենթարկվի:

Յերբ գործից ուշանում է ավելի քան 15 րոպե ապա ուշացողը կարող է գործի թողնվել միմիայն վարչության թույլտվությամբ:

11) Արգելվում է ինքնակամ կերպով աշխատանքից հեռանալը ինչ պատճառներով էլ որ լինի: Յերբ անհրաժեշտ է սահմանված ժամանակից առաջ աշխատանքից հեռանալ, բանվորը կամ ծառայողը պարտավոր է այդ մասին հայտնել վարչության և համապատասխան թույլտվություն ստանալ:

12) Վոչ հարգելի պատճառով բաց թողնված աշխատանքի ժամանակը նշանակվում է իբրև որաբաց (պրոգուլ) և հատուցման չի յենթարկվում:

13) Դատական կամ պետական այլ իշխանության, ինչպես և կուսակցական ու պրոֆեսիոնալ կազմակերպությունների կողմից կանչված աշխատավորները պարտավոր են կանչվելու որվա մասին առաջուց հայտնել ձեռնարկի վարչության և ներկայացնել իրենց կանչվելու մասին յեղած ծանուցումը:

Յերբ անհնար է վարչությանն առաջուց հայտնել ապա աշխատավորը պարտավոր է հետևյալ որը ներկայացնել արդարացնող դոկումենտը:

14) Հիվանդության կամ ուրիշ հարգելի պատճառով աշխատանքի գնալու հնարավորությունից զըրկ-

ված աշխատավորը պարտավոր է հնարավոր միջոցներ ձեռք առնել հայտնելու վարչության, իսկ աշխատանքի գնալուց հետո էլ բացատրություններ և համապատասխան դոկումենտներ ներկայացնել չգնալու պատճառների մասին:

Աշխատանքի չգնալը հարգելի է համարվում այն բոլոր դեպքերում, յերբ աշխատավորը հնարավորություն չունի աշխատանքի գնալու արգելքները վերացնելու, մասնավորապես ա) յերբ հիվանդ է ինքն աշխատավորը, բ) յերբ նրա ընտանիքի անդամներից մահացել կամ լուրջ կերպով հիվանդացել են, վորով խնամք տանելու համար ուրիշ անձեր չլինելով պահանջվում է այդ աշխատավորի ներկայությունը, գ) յերբ կարանտին է, դ) յերբ տարերային թշվառություն (հրդեհ, հեղեղում, բուք և այլն) է պատահում, յե) յերբ աշխատավորը պիտի կատարե քաղաքացիական և հասարակական պարտքը, ինչպես և յեթե իշխանության որգանների պահանջ կա՝ զինվորական ծառայության որենքով նախատեսնված:

15) Արտաժամյա աշխատանք կարող է տեղի ունենալ բացառիկ դեպքերում միայն վարչության կարգադրությամբ և աշխատանքի տեսչի թույլտվությամբ:

16) Արտաժամյա աշխատանքներն, անպայման, պարտադիր են հետևյալ դեպքերում.—

ա) յերբ հրդեհ է լինում, հեղեղում և տարերային ուրիշ թշվառություններ, վորոնք սպառնում են աշխատավորների կյանքին կամ Ազնեվլթի գույքին, կամ վորոնք կարող են ձեռնարկում աշխատանքը կանգնեցնելու պատճառ լինել:

բ) յերբ անհրաժեշտ է ավարտել սկսված աշխատանքը, վորի կանգնեցնելը կարող է նյութերի և մեքենաների փչանալու պատճառ լինել, ինչպես և վերջինների գործողությունը կանգնեցնել։

գ) Մեքենական կազմերի (մեխանիզմների) կամ սարքավորումների նորոգության և վերականգնման աշխատանքները կատարելիս, յերբ աշխատանքների կասեցումը (զադերժկան) կարող է զգալի քանակությամբ աշխատողների համար աշխատանքները դադարեցնելու պատճառ լինել։

դ) ամեն տեսակ վթարումների առաջն առնելու անհրաժեշտ աշխատանքները կատարելիս։

յե) յերբ անհրաժեշտ է աշխատանքներ կատարել ձեռնարկի գործողության կանգնելու առաջն առնելու նպատակով։

17) Առանց հարգելի պատճառների ամենորյա (ուրոչնի) աշխատանքներին կամ պարտադիր արտաժամյա աշխատանքներին չգնալը հանցանք է համարվում, վորի համար հանցավորը յենթարկվում է տուգանման՝ տուգանման ցուցակի հիման վրա։

18) Անընդհատ գործող ձեռնարկներում վարչությունը վորոշում է կաթսաները տաքացնելու և մեքենաները բանի գցելու աշխատանքների ժամանակի ցուցակը, վոր պիտի համաձայնեցվի հանքգործկոմի հետ և հաստատվի աշխատանքի տեսչի կողմից։

ՀԵՐԹԱԿԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

19) Հերթակալները (վախտեննի) չընդհատվող աշխատանքներում պետք է գործեն դեկրետով նշանակված հեղափոխական ու կրոնական բոլոր տոնե-

րին։ Գործը կարող է դադարել միայն վարչության պատշաճ կարգադրությամբ, վոր պիտի համաձայնեցրած լինի միության կազմակերպության հետ (միաց. կոմ., Հանքագ. Միության Կենտր. վարչ.)։

20) Յերբ փոխարինողը (սմենան) ուշանում է ավելի քան 10 րոպե, հերթակալը պիտի դիմի ամենամոտ պետին, վոր փոխարինող նշանակի և վոչ մի դեպքում առանց հանձնելու չպիտի թողնի հերթակալությունը։

Վարչությունը ամեն միջոց պիտի գործ դնի աշխատավորներին փոխարինելու։ Վարչությունը միայն բացառիկ դեպքերում կարող է աշխատավորներին պահել, բայց վոչ ավելի մի հերթից։

21) Աշխատավորը հերթակալությունն ընդունելով պիտի զննի մեքենական ամբողջ կազմերը, վորոնց հետ ինքը գործ է ունենալու, պրիբորները և այլն, նաև գույքը, վոր նրա պահպանության է յենթակա։ Յերբ մեքենաները և նախազգուշության պարագաները փչացած լինին, կամ գույքը պակաս լինի, աշխատավորը այդ մասին պարտավոր է անմիջապես հայտնել իր մերձավոր պետին։

22) Հերթակալներին թույլատրվում է փոխարինվել միմիայն վարչության համաձայնությամբ։

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ

23) Ամեն մի բանվոր ձեռնարկն ընդունվելիս ստանում է իր աշխատանքի համար անհրաժեշտ գործիքը, ինչպես և կոլեկտիվ պայմանագրով վորոշված սպեց հագուստն ու նախազգուշության առարկաները՝

վորոնք գրվում են բանվորի հաշվեգրքույկում, ինչպես և ձեռնարկի գործիքների գրքույկում։

ԾԱՆՈԹ.—Աշխատանքի համար իր գործիքներն օգտագործելը կարող է տեղի ունենալ միայն վարչության թույլտվությամբ և վարձատրվում է տիրող որենսդրության հիման վրա։

24) Կտորով (զդելնի) աշխատանքներ կատարելիս աշխատավորներին պատվիրաթերթ (նարյադ) է տրվում մատնանշելով համապատասխան զդելնի գնահատումները։ Բանվորը աշխատանքը պիտի կատարի սահմանված և նրան հայտարարված գնահատումների համաձայն։

Աշխատանքից հրաժարվել չի թույլատրվում մինչև իսկ այն դեպքում, յերբ բանվորը համաձայն չէ գնահատմանը։ Այդ դեպքում նրան իրավունք է տրվում Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովին բողոքարկել վարչության արարքի մասին։

25) Վարչությունը պարտավոր է հետևել, վոր ստանոկները և մեքենական կազմերը մինչև աշխատանքն սկսելը բոլորովին սարքին լինեն, այլ և վոր նրանց ճանապարհները փակված չլինեն, վորի համար կանխավ միջոցներ պիտի ձեռք առնի։

26) Աշխատանքի ընթացքում մաշված, փչացած կամ կոտրված գործիքները և ստանոկների ու մեքենաների փոխելի մասերը հնարավորին չափ անմիջապես պիտի փոխարինվեն նորերով։

27) Յերբ կոտրվում են ստանոկը, մեքենան կամ պատսպարող պարագաները, բանվորը պարտավոր է անմիջապես գործը դադարեցնել և այդ մասին հայտնել ամենամոտ պետին։

28) Ստացած գործիքները, պրիբորները, նախազգուշության պարագաները և այլն պիտի պահվեն սահմանված կարգի համաձայն։ Առանց վարչության թույլտվության արգելվում է այդ բաները տալ ուրիշ անձերի, ուրիշ բաժիններ կամ ձեռնարկից դուրս տանել։

29) Ընդհանուր ոգտագործման համար նշանակված գործիքները, ինչպես և գծագրությունները, շաբլոնները, մոդելները և այլն անմիջապես պիտի յետ դարձնվեն, յերբ այլևս նրանց պետքը չկա։

30) Աշխատավորները հեռացվելու կամ արձակուրդ գնալու դեպքում պարտավոր են հանձնել իրենց հանձնված ամբողջ գույքը։

31) Աշխատավորը պարտավոր է զգույշ վերաբերվել մեքենաների, ստանոկների, գործիքների և նրան թողնված մյուս գույքի, ինչպես և գործելու համար ստացած նյութերի նկատմամբ։

32) Կանոնի համաձայն վարչությունը բանվորներին պիտի մատակարարի սահմանված տեսակի սպեցհագուստ։

Բանվորները աշխատանքի պիտի կանգնեն սահմանված սպեցհագուստով։

Աշխատավորը առանց հարգելի պատճառի չպիտի աշխատանքի թույլատրվի առանց սպեցհագուստի։

Աշխատանքի տեղերում հատուկ արկղներ պիտի լինեն սպեցհագուստները պահելու համար։

33) Յերբ ստացվում է աշխատանքների բնույթի պահանջներին անհամապատասխան նյութ (վատ հատկությամբ, փոքր չափի և այլն), ապա բանվորը պարտավոր է անմիջապես այդ մասին հայտնել իր

մերձավոր պետին, վոր միջոցներ պիտի ձեռք առնի անպետք նյութը փոխելու պետքականով։

34) Յեթե աշխատանքները կատարելիս անպետք բան դուրս գա, ապա բանվորական պատվիրաթերթում (նարյադում) նշանակվում ե, թե վորքան ժամանակ ե գործ դրված այդ անպետք դուրս յեկած իրի պատրաստության համար, ինչ բնույթ ունի և անպետք լինելու պատճառները։

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

35) Վարչությունը, բանվորները և ծառայողները պարտավոր են խստությամբ պահպանել մեքենաների, ստանոկների, ապպարատների, շոգեկաթսաների և այլն նկատմամբ յեղած անվտանգության սահմանված կանոնները։

Անվտանգության տեխնիկայի կանոնները կախվում են ամեն մի ձեռնարկում։

36) Վարչությունը պարտավոր ե առաջին անգամ աշխատել սկսող աշխատավորներին ծանոթացնել աշխատանքի բնույթի, ինչպես և արտադրության վտանգավոր ու վնասակար մոմենտների հետ. վարչությունը պարտավոր ե գործիքներ, պրիբորներ և այլն ստացող աշխատավորներին ծանոթացնել վտանգավոր մասերի, ինչպես և նրանցից ոգտվելու կարգի հետ։

Ծանոթությունը պիտի տրվի նաև աշխատանքների բնույթը փոխվելու ժամանակ։

37) Բոլոր աշխատավորները պարտավոր են պահպանել անհրաժեշտ, կամ հատուկ կանոններով պատվիրված նախազգուշության միջոցները և սպառնացող վտանգի առաջն առնել. այս վերջինի մասին պիտի

հայտնեն մյուս բանվորներին և վարչական-տեխնիքական պաշտոնյաներին, ինչպես և պիտի հետևեն, վոր նախազգուշության պարագաները անվնաս և կարգին լինեն։

38) Աշխատանքն անմիջապես ղեկավարող վարչությունը ամեն որ հետևում ե, վոր մեքենաներն անվնաս լինեն և անվտանգ։ Բացի դրանից առնվազն ամիսը մի անգամ աշխատանքի պահպանության հանձնաժողովի ներկայացուցիչների հետ միասին դիտում ե ամբողջ ձեռնարկի մեքենաների շարժվող մասերի, ստանոկների, տրանսմիսսիաների և այլն կացությունը և նկատված պակասությունները հեռացնում մինչև նրանց բանի գցելը։

39) Դժբախտ դեպքերից խույս տալու համար վարչության արգելվում ե մեքենաների, ստանոկների, ապպարատների և այլն մոտ թողնել այն աշխատավորներին, վոր ա) անփորձ են և անծանոթ մեքենական կազմերին, բ) վոր զգաստ դրության մեջ չեն և գ) բոլոր նրանց, վորոնց աշխատանքը այդ մեքենական կազմի հետ կապված չե։

40) Արգելվում են.—

ա) ինքնագլուխ կերպով անվտանգության տեխնիկայի համաձայն սահմանված կարգից ու կանոններից դուրս բանի գցել մեքենաները.

բ) առանց հսկողության թողնել բանի գցած մեքենաներն ու ստանոկները.

գ) մեքենաների, ստանոկների, մեքենական կազմերի մասերի շարժման ժամանակ յուղելը, ամրացնելը, նորոգելը կամ ձեռք տալ շարժվող մասերին՝ նրանց շարժվելու ժամանակ.

դ) ընթացքի ժամանակ փոկերը կարել, հանել և հագցնել.

ե) առանց առանձին թույլտվության օգտվել տվյալ աշխատանքի համար չնախանշանակված մեքենաներից, գործիքներից.

զ) առանց վարչության գիտության աշխատել վնասված մեքենաների ու ստանոկների վրա.

է) կանգնել տալերի, կրանների, էլեվատորների և այլն տակ՝ դրանց գործելու ժամանակ, յեթե այդ կարող է վտանգ սպառնալ բանվորների կյանքին ու առողջությանը.

ը) կպչել հոսանքատար ապարատներին ու ելեքտրալարերին.

թ) առանց համապատասխան վարչության գիտության ու թույլտվության և առանց նախազգուշության համապատասխան միջոցները գործ դնելու՝ մաքրել այն շախտերը, ռեզերվուարները, ամբարները, վորտեղ կարող են վնասակար գազեր հավաքվել.

ժ) կտրել, փչացնել և վերցնել մեքենաների, տրանսմիսիաների և այլն պատվարները։

41) Վարչությունը պարտավոր է հետևել, վոր կանոնավոր կերպով կազմակերպվեն այնպիսի աշխատանքները, ինչպես են խառատի ստանոկների վրա ծանր առարկաներ պատրաստելը, շոգեմուրճերով գործելը և այլն, ինչպես և կանոնավոր կազմակերպվեն ծանրությունները բարձրացնելու աշխատանքները մանավանդ այնտեղ, վորտեղ բանվորների խումբ է զբաղված այդպիսի աշխատանքներով։

42) Աշխատավորները աշխատանքի ժամանակ պարտավոր են օգտվել նշանակված սպեցհագուստով կամ նախազգուշության պարագաներով (նախազգուշության ակնոցներ, ռեսպիրատորներ, ռետինի ձեռնոցներ և կրկնակոշիկներ, առանձնացնող ձեռնափայտեր, տախտակներ, կաթ և այլն)։

43) Աշխատելու ժամանակ յերբ աշխատավորին վորևէ դժբախտ դեպք է պատահում, աշխատավորը պարտավոր է անմիջապես այդ մասին հայտնել իր անմիջական վարչության և ճանապարհվել հիվանդանոց՝ բժշկական օգնություն ստանալու համար։

Յերբ վնասվողը ստացած վնասումի պատճառով չի կարող ինքն իրեն գնալ հիվանդանոց, ապա վարչությունը պարտավոր է նրան ճանապարհել։

44) Վարչությունը ամեն մի դժբախտ դեպքի մասին (տրավմատիզմի կամ պրոֆթունավորման) սահմանված կարգով պիտի հաղորդի աշխատանքի տեսչին և հանքգործկոմին, պարզի պատահած դժբախտ դեպքի պատճառը և միջոցներ ձեռք առնի, վոր հետագայում միևնույն պատճառով դժբախտ դեպքեր չպատահեն։

45) Կրակի համար բոլոր վտանգավոր տեղերում հրդեհը կանխելու համար պիտի կախվեն համապատասխան գրություններ։

46) Ձեռնարկում կամ նրա մոտ հրդեհ պատահած ժամանակ, յեթե ձեռնարկի գույքին, կամ շենքին վտանգ է սպառնում, ինչպես և տարերային այլ թշվառությունների ժամանակ ձեռնարկի բոլոր բանվորներն ու ծառայողները պարտավոր են ամեն ջանք գործ դնել, վոր դադարի կամ հեռացնվի վտանգը, ան-

պայման կատարելով տարերքների դեմ պայքարելու բոլոր կարգադրությունները և պահպանելով կարգն ու դիսցիպլինան։

ԿԱՐԳՆ ՈՒ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

47) Ձեռնարկում բոլոր աշխատողները՝ վարչությունը, բանվորներն ու ծառայողները պարտավոր են պահպանել դիսցիպլինա և ընդհանուր կարգ։

48) Բանվորները վոչ զգաստ վիճակում ձեռնարկը չեն թողնվում, իսկ յեթե գործի վրա են, անմիջապես հեռացնվում են վարչության ձեռքով։

49) Վարչական-տեխնիքական պաշտոնյաների բոլոր կարգադրությունները, վորոնք կապված են աշխատավորների այս կամ այն աշխատանքը կատարելու հետ, պարտավորիչ կերպով անպայման պիտի կատարվեն։ Կարգադրություններ չկատարելը կարող է առաջ բերել տուգանում՝ տուգանման ցուցակի համաձայն։

50) Արգելվում է բոլոր աշխատավորներին.—

ա) Թողնել իր աշխատանքների տեղը առանց կարևորության.

բ) աշխատանքի ժամանակ զբաղվել վորևե կողմնակի գործով—թերթեր կարդալով, խոսակցություններով, թղթախաղով կամ ուրիշ խաղերով, ինչպես և խանգարել մյուս աշխատավորների աշխատանքը.

գ) հետները բերել վոգելից խմիչքներ և կրակի կողմից վտանգավոր նյութեր.

դ) հերթակալության և առհասարակ աշխատանքի ժամանակ քնել.

յե) Կրակի կողմից բոլոր վտանգավոր տեղերում ծխել։

51) Բանվորներին ու ծառայողներին արգելվում է ձեռնարկում վորևե աշխատանք կատարել անձնապես իրենց կամ դրսի համար։

52) Ամբուլատորիաներ, ինչպես և ամեն տեսակ կազմակերպությունների հրավիրած ժողովներ, նիստեր և այլն աշխատանքի ժամանակ գնալը չի թույլատրվում, բայցի որենքով սահմանված դեպքերից կամ վարչության համաձայնությամբ։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

53) Բոլոր աշխատավորներն առողջապահական շահերի նկատումով պիտի կատարեն հասարակական առողջապահության ու սանիտարիայի բոլոր կանոնները, պիտի հետևեն շենքի մաքրության, չպիտի կեղտոտեն և պիտի կարգին ու մաքուր պահեն իրենց աշխատանքի տեղը։

54) Ձեռքերն ու յերեսները լվալու համար ձեռնարկներում պետք է լինեն լվացարաններ՝ սապոնով ու սրբիչով։

55) Բոլոր շենքերում պիտի ջրամաններ լինեն յեփացրած ջրով, վոր ամեն որ փոխվի. այդտեղ պիտի լինի և ջուր խմելու գավաթ, կլայեկած կամ սպիտակ թիթեղից։ Ջուրը պիտի պահվի ջրամաններում՝ սառացրած դրությամբ։

56) Բանվորական շենքերում թքամաններ պիտի լինեն բավարար քանակությամբ։

57) Ձեռնարկում սննդի համար հատկացրած շենքերը պիտի գոհացում տան առողջապահության պահանջներին:

58) Ձեռնարկներում պիտի բավարար չափով արտաքնոցներ լինեն և պահվեն բոլորովին կարգին ու մաքուր:

Արգելվում է այդ նպատակին չհատկացրած տեղերից օգտվել:

59) Վարչությունը պիտի գործադրի անհրաժեշտ բոլոր սանիտարա-տեխնիքական միջոցները և հեռացնի արտադրության բոլոր վնասակար մոմենտները: Աշխատանքները վերջանալուց հետո բոլոր արհեստանոցներում, բաժանմունքներում պիտի հավաք-տեղակ արվի, ինչպես և նրանք պիտի լավ օդափոխվեն և հողմահարվեն:

Յեթե ձեռնարկում աշխատանքը մի քանի հերթականությամբ է լինում, ապա հավաք-տեղակը և հողմահարումը պիտի կատարվի առանձին հերթերի միջև ընկած ընդմիջումներին:

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վարչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ
Վարչության քարտուղար՝ Ո. Ա. ՁԵՅՆԱԼՈՎ
Տարիֆ-տնտ. բաժնի վարիչ՝ Մ. Ֆ. ՖՐՈԼՈՎ

ԱՁՆԵՎԹ

Վարչության նախագահ՝ Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎ
Վարչության նախ. տեղ. Կ. Ա. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ
Վարչության անդամ՝ ՅԱ. Վ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Աշխ. և եկոն. բաժնի կառավ. Բ. Մ. ՇԵՅՆԻՆ

ՏՈՒԳԱՆՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

(Ձեռնարկների համար)

1) Ներքին կարգավորման կանոնները խախտելու դեպքում կարող են արվել հետևյալ տուգանումները.—

I*) հանդիմանություն, վոր արվում է ցեխում կամ բաժնում.*

II*) հանդիմանություն, վոր հայտարարվում է գործարանում և հաղորդվում է գործկոմին.*

III) *գործից հեռացում:*

2) Առաջին տուգանումը լինում է վարչության կողմից, յերկրորդը՝ վարչության կողմից և տուգանման պատճառի ու բնույթի մասին նախապես հայտնվում է գործկոմին. յերրորդ տուգանումը լինում է վարչության կողմից՝ բոլոր դեպքերում Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի վորոշմամբ:

3) Տուգանումների ներկա ցուցակի կարգով գործադրած հեռացումը կատարվում է առանց նախազգուշացման և առանց հեռացման նպաստը տալու:

4) Այն դեպքերում, յերբ հանցանքները հաշվեառելու ժամկետը (սրոկ) չի նշանակված, վերցնվում է մի տարի ժամանակ, վորից հետո հանցանքների ու արված տուգանումների հաշվեառը նորից է սկսվում:

Արված տուգանումները գրանցելու համար առանձին որագիր է պահվում:

5) Տուգանումները արվում են՝ հանցանքը յերևան գալուց անմիջապես հետո։ Տուգանման յենթարկել չի թույլատրվում, յերբ հանցանքը յերևան գալուց հետո մի ամիս է անցել։

6) Ձեռնարկների վարչական-տեխնիքական պաշտոնյաները հետևյալ տուգանումներին են յենթարկվում.—

ա) Յերբ առանց հարգելի պատճառների աշխատանք են նշանակում փչացած ստանոկների, մեքենաների, վառարանների և մյուս պարագաների վրա, վորի հետևանքով փչանում են նյութերը, արտադրության գործիքները կամ դժբախտ դեպք է պատահում. հանցավորը (վարպետ, վարիչ և վարչական ուրիշ պաշտոնյա) յենթարկվում է II—III տուգանումներին.

բ) Յերբ բավականաչափ հսկողություն չի լինում ստանոկների, մեքենաների անխափ լինելու մասին և միջոցներ ձեռք չեն առնում նրանց նորոգության համար, հանցավորը յենթարկվում է I—II տուգանումներին.

Յերբ սիստեմատիկ կերպով հանցանքը կըրկընվում է, մանավանդ յեթե հետևանքը դժբախտ դեպք է լինում—III տուգանում.

գ) Յերբ ստանոկների նորոգությունը հետաձգվում է, վորի պատճառով բանվորները գործելուց դադարում են, պատասխանատու անձը յենթարկվում է II—III տուգանումներին.

դ) Յերբ ժամանակին բանվորին նոր աշխատանք, նյութեր և գործիքներ չեն տալիս, վորով դադար (պրոստոյ) է առաջ գալիս հան-

ցավորի անփութության պատճառով — I-II-III տուգանումներ.

ե) Յերբ վատ վորակի նյութ և գործիք է տրվում, ինչ վոր առաջուց հայտնի է յեղել—I-II-III.

զ) Յերբ իր ժամանակին պահեստից անհրաժեշտ նյութեր ու հում մթերք չի տրվում, վորի հետևանքն է լինում աշխատանքի դադարը—II-III.

է) Յերբ հետաձգվում է գործիք մատակարարելը, վոր պատճառ է լինում բանվորների դադարին—II-III.

ը) Յերբ վարչական-տեխնիքական պաշտոնեյի կողմից (վորին հանձնարարված է) բավարար չափով հսկողություն չի լինում մեքենաների նախազգուշության պարագաների դրության վրա—I-II-III։

7) Յերբ ուշանում է և ժամանակից առաջ աշխատանքից հեռանում է առանց հարգելի պատճառների.—

1-ից մինչև	3	անգամ	ամսվա ընթացքում	I	տուգան.
4-ից	» 6	»	»	II	»
6-ից ավելի	»	»	»	III	»

և բացի դրանից բոլոր դեպքերում էլ ռոճիկ չի տրըվում որաբացի (պրոգուլի) համար.

8) Յերբ կամովին բացակայում է ձեռնարկից կամ աշխատանքի տեղից.

ա) 2 անգամ ամսվա ընթացքում II տուգան.

բ) 3 » » » III »

ԾԱՆՈԹ.—Վարչությունը միության հետ համաձայնության գալով կազմում է և ձեռնարկներում կախում այն աշխատանքների ցուցակը, վորոնցից բացակայել վոչ մի դեպքում չի թույլատրվում՝ հեռացման սպառնալիքով։

9) Վոչ հարգելի պատճառներով որաբացի (պրոգուլի) համար.—

ա) 2 անգամ ամսվա մեջ—II տուգանում

բ) 3 և ավելի անգամների համար ամսվա մեջ—III տուգանում։

10) Յերբ բանվորը կամ ծառայողը ապօրեն կերպով հրաժարվում է այն աշխատանքից, վորի համար վարձված է, ինչպես և արտաժամյա աշխատանքից հրաժարվելու համար, վորը նախատեսնված է աշխատանքի Օրենքների Կոդեքսով և թույլատրված է վորոշյալ կարգով.—

ա) առաջին անգամ II տուգանում

բ) յերկրորդ » III »

ԾԱՆՈԹ.—Յերբ աշխատելուց հրաժարվելու դեպքի հետևանքն է լինում զգալի քանակությամբ բանվորների կամ ծառայողների աշխատանքների կանգ առնելը կամ նյութերի ու մեքենաների փչանալը՝ գործադրվում է III տուգանում։

11) Վարչական-տեխնիքական պաշտոնյաների կարգադրությունները չկատարելու համար II-III տուգանում։

12) Յերբ առանց վարչության թույլտվության կողմնակի մարդկանց է թույլ տալիս կամ իր հետ բերում բանվորական շենքը, վորտեղ օտարների մուտքն արգելված է.—

ա) առաջին անգամ II տուգանում

բ) յերկրորդ » III »

ԾԱՆՈԹ.—Յերբ առանց վարչության թույլտվության կողմնակի մարդկանց է թույլ տալիս կամ իր հետ բերում այն շենքը, վորտեղ լինելը կյանքի համար վտանգավոր է—III տուգանում։

13. Յերբ առանց գործի մտն է գալիս և մյուս բանվորների կամ ծառայողների աշխատանքը խանգարում է.—

ա) մինչև յերեք անգամ II տուգանում,

բ) չորրորդ » III »

14. Յերբ չի հայտնում ստանոկը կամ մեքենան կոտրվելու մասին, ինչպես և աշխատում է փչացած ստանոկի վրա առանց վարչության կարգադրության, յեթե այդ խանգարումները առաջ են բերել նյութի, գործիքների կամ ստանոկի փչացում.—

ա) յերկու անգամ—II տուգանում

բ) յերեք և ավելի անգամներ—III տուգան.

15) Յերբ բանվորին կամ ծառայողին տրված սպեցհագուստը և նախազգուշության սարքերը չեն օգտագործվում—II-III։

16) Յերբ փչանում են ձեռնարկի մեքենաները, ստանոկները, ապարատները, նախազգուշության պարագաները և մյուս գույքը.—

ա) 1 անգամ . . . . . II տուգանում

բ) 2 և ավելի անգամ . III »

17) Մեքենաների հետ վարվելու կանոնները չըպահպանելու համար—I. նախազգուշության միջոցները խախտելու համար—II։

Յեթե հիշյալ հանցանքի հետևանքով դժբախտ դեպք է պատահել մյուս բանվորների հետ, կամ յեթե այդ կրկնվում է սիստեմատիքաբար—III։

18) Յերբ խախտում են այն կանոններն ու կարգադրությունները, վորոնց չկատարելով կարող է դժբախտ դեպք առաջ գալ—II, իսկ խախտման առանձնապես վտանգավոր լինելու դեպքում—III։

19) Յերբ գործիքները, պլիրորները, նախազգուշության պարագաները կորցնում է, յերբ այդ բաները մյուս բաժինների մարդկանց է տալիս, կամ առանց վարչության թույլտվության հետը տանում է.—

ա) մինչև 2 անգամ . . . . . I և II

բ) 3 և ավելի անգամ III

20) Յերբ աշխատանք է գործ դրվում իր պետքի համար, ու միևնույն նպատակով ձեռնարկի նյութը և ստորագրվածի աշխատանքն է ոգտագործվում—II-III։

21) Յերբ նշանակված տոկոսից ավելի անպիտան գործ է շինվում բանվորի սխալի պատճառով.—

ա) մինչև 2 անգամ . . . . I տուգանում

բ) 3 անգամ . . . . II »

գ) 3 անգամից ավել . . . III »

ԾԱՆՈԹ.—Յեթե անպիտան գործը թույլատրված տոկոսից ավելի է լինում վարչության սխալի պատճառով, ապա հիշյալ պատիժը տրվում է վարչության հանցավոր ներկայացուցիչներին։

22) Յերբ չեն հետևում հակահրդեհային միջոցներին, անփույթ են վերաբերվում կրակի հետ և ծխախոտ են ծխում այնպիսի տեղերում, վորտեղ ծխելն արգելված է.—

ա) 1 անգամ . . . . . . II տուգանում

բ) 1-ից ավելի անգամ . . III »

23) Յերբ բանվորներն ու ծառայողները վիրավորում են վարչության ներկայացուցիչներին կամ

վարչության ներկայացուցիչները վիրավորում են բանվորներին ու ծառայողներին—II-III։

Նույն անձանց գործողությամբ վիրավորելու համար—III տուգանում։

24) Յերբ աշխատանքի ժամանակ քնում է.—

ա) 1 անգամ . . . . . . II տուգանում

իսկ պատասխանատու աշխատանքների (կաթսաներ, շարժիչներ) ժամանակ—III,

բ) 2 և ավելի անգամ . . . . III։

25) Յերբ ձեռնարկն է գալիս կամ այնտեղ լինում է վոչ զգաստ վիճակում, բացի այն վոր անմիջապես հեռացվում է ձեռնարկից առանց այդ որվա համար վճար ստանալու՝

ա) 2 անգամ . . . . II տուգանում

բ) 3 » . . . . III »

Այն դեպքում, յերբ վոչ զգաստ վիճակում ձեռնարկ գալը և ձեռնարկում մնալը կապված է վտանգավոր հետևանքների հետ—III տուգանում։

26) Յերբ վոգելից խմիչքներ են բերում և խմում, ազարտ խաղեր են խաղում և կռվում.—

ա) 2 անգամ . . . II տուգանում,

բ) 3 » . . . . III »

27) Յերբ ոգտվելու նպատակով կեղծում են անցաթղթերը (պրոպուսկ), պատվիրաթերթերը (նարյադ), մարկաները, հիվանդանոցային տոմսերը և նման դոկումենտները այնպիսի մարդկանց տալիս, վորոնք դրանցից ոգտվելու իրավունք չունեն —III տուգանում։

28) Վերահսկողության կանոնները և աշխատանքի ժամանակի հաշվառը չգործադրելու համար—I-II տուգանում:

29) Յերբ այն անձինք, վորոնց այդ հանձնված է, ազդանշանի զանգ կամ սուլոց չեն տալիս շարժիչները (դվիգատել) բանի գցելուց առաջ կամ անմիջապես կանգնեցնելուց առաջ—III տուգանում:

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վարչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ
Վարչության քարտուղար՝ Ո. Ա. ՁԵՅՆԱԼՈՎ
Տարիֆ-անտ. բաժնի վարիչ՝ Մ. Ֆ. ՖՐՈԼՈՎ

ԱՁՆԵՎԹ

Վարչության նախագահ՝ Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎ
Վարչության նախ. տեղ. Կ. Ա. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ
Վարչության անդամ՝ ՅԱ. Վ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Աշխ.-եկոն. բաժնի կառավարիչ՝ Բ. Մ. ՇԵՅՆԻՆ

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Հիմնարկների համար)

1) Ներքին կարգավորման կանոնների հետ պետք է ծանոթացնել հիմնարկի բոլոր աշխատողներին: Դրա համար այդ կանոնները կախվում են աշխատողների մշտական աշխատանքի տեղում:

2) Ներքին կարգավորման կանոնները պարտադիր են թե ծառայողների և թե վարչության համար:

3) Ներքին կարգավորման կանոնների ամեն մի խախտումի կամ չկատարելու համար համապատասխան պատիժ է տրվում սրան կցած «Տուգանումների ցուցակի» համաձայն:

4) Աշխատավորներից վոչ վոք իրավունք չունի արդարանալու, թե ինքը չգիտե այս ներքին կարգավորման կանոնները:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

5) Բոլոր ծառայողներն, անկախ իրանց ունեցած պաշտոնից, պարտավոր են գալ գործի ու գործից հեռանալ դրանց համար ճիշտ սահմանված ժամանակներին:

6) Աշխատանքն սկսելու ու վերջանալու ժամանակը սահմանվում է Ազնեֆթի վարչության ընդհանուր կարգադրությամբ:

ԾԱՆՈԹ.—Բանվորական օրվա տևողությունը սահմանվում է համապատասխան Աշխատանքի ժողկոմատի գոյություն ունեցող օրինադրության ու վորոշումների։

7) Ծառայողները գործի գնալիս ու գործից հեռանալիս պարտավոր են սահմանված հսկողական կանոնները կատարելու։

8) Նրանք, վորոնք աշխատանքն սկսելու ժամանակից հետո են գործի գնում, համարվում են ուշացած։

Ուշացողների համար առանձին գրանցում է կատարվում՝ «Տուգանման ցուցակի» համաձայն տուգանք դնելու նպատակով։

Գործից կես ժամից ավելի ուշանալու դեպքում վարչությունն իրավունք ունի ուշացածին աշխատանքի չթողնել, և այդ դեպքում տված բանվորական օրը համարվում է որպես (պրոգուլ) առանց հարգելի պատճառի։

9) Արգելվում է վոր և է պատճառով գործից ինքնակամ բացակայելն և հեռանալը։ Սահմանված ժամանակից առաջ գործը թողնելու անհրաժեշտության դեպքում՝ ծառայողը պարտավոր է դրա համար վարչությունից համապատասխան թույլտվություն ստանալ։

10) Աշխատանքից ուշանալը, գործի ժամանակ բացակայելն ու առանց վարչության թույլտվության ժամանակից առաջ գործից հեռանալը համարվում են պրոգուլներ և տուգանումներից բացի, կարող են համապատասխան չափով դուրս գալ աշխատավարձից։

11) Անկախ կատարվող գործի տեսակից, 14-ից—16 տարեկան անչափահասների համար բանվորական

օրվա տևողություն է սահմանվում 4 ժամ, իսկ 16-ից—18 տարեկան պատանիների համար 6 ժամ։

ԾԱՆՈԹ.—Անչափահասներին ու պատանիներին ծառայության վերցնելիս վարչությունը պարտավոր է ճշտորեն պարզել նրանց հասակը՝ բանվորական օրվա տևողությունը սահմանելու համար։

12) Ծիծ տվող բանվորուհիների համար առանձին ընդմիջումներ են սահմանվում, կես ժամից վոչ պակաս և դա մտնում է բանվորական ժամանակի մեջ։ Յուրաքանչյուր բանվորուհու համար ընդմիջումների ժամանակը Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովն է սահմանում։

13) Արտաժամյա աշխատանք կարելի է կատարել միայն վարչության կարգադրությամբ, Աշխատանքի Տեսչի պատշաճ թույլտվության համաձայն։

14) Առանց հարգելի պատճառների սովորական կամ պարտադիր արտաժամյա աշխատանքի դուրս չգալը համարվում է պարտազանցություն, վորի համար մեղավորը պատժի է յենթարկվում համաձայն «Տուգանումների ցուցակի»։

15) Գործի դուրս չգալը հարգելի է համարվում այն բոլոր դեպքերում, յերբ աշխատավորը հնարավորություն չունի գործի դուրս գալու արգելքները վերացնելու, առանձնապես՝ ա) հենց իրա, աշխատողի հիվանդությունը, բ) նրա ընտանիքի անդամների մահն ու լուրջ հիվանդությունը, վոր ուրիշ հոգացողներ չլինելու պատճառով՝ աշխատողի ներկայությունն է պահանջում, գ) կարանտինը, դ) տարերային աղետը (հրդեհ, հեղեղում, և այլն), յե) աշխատողի կողմից քաղաքացիական ու հասարակական պարտականու-

թյուններ կատարելը, ինչպես և կառավարության պահանջով որենքում նախատեսված ուրիշ պարտադիր աշխատանքներ կատարելը։

16) Հիվանդության կամ մի ուրիշ հարգելի պատճառով գործի դուրս գալու հնարավորությունից զրկված աշխատավորը պարտավոր է միջոցներ ձեռք առնել այդ մասին տեղեկություն տալու վարչությանը, իսկ աշխատանքի գնալուց հետո իր բացակայության պատճառների հարգելի լինելու ապացույցներ պիտի ներկայացնի։

17) Բանվորական ժամերին պրոֆմիութենական պարտականություններ կատարելու համար ծառայողների բացակայությունը թույլատրվում է բացառապես Աշխատանքի Որենսգրքի 161-րդ հոդվածի կարգով։

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

18) Ծառայողները պարտավոր են ճշտությամբ ու ժամանակին կատարել իրանց վրա դրված պարտականություններն ու տանից տարկության կատարել իրանց պարտականության վերաբերյալ վարչության բոլոր կարգադրությունները։

19) Ծառայողները պարտավոր են քաղաքավարի վերաբերմունք ունենալ այցելուների, վարչական անձերի հետ ու իրար միջև, ինչպես և պատշած հանդարտություն պահպանել աշխատանքի ժամանակ։

20) Ծառայողները պարտավոր են խնամքով վարվել բոլոր այն նյութերի ու պատկանելիքների

հետ, վորոնցից ոգտվում են աշխատանքի ժամանակ։

Ծառայողներն աշխատանքը վերջացնելուց հետո փասեղաններից հավաքում և սահմանած տեղերում փակում են բոլոր թղթերը, գրասենեկային պարագաները, ապեցհագուստը և այլն, վորոնցով ոգտվում են աշխատանքի ժամանակ։

Գրող մեքենաներով, արիֆմոմետրներով և ուրիշ գործիքներով աշխատող անձինք այդ բոլորից բացի պարտավոր են հետևել նրանց մաքրությանը։

21) Գործիքներ և ուրիշ պարագաներ ու գույք յեթե փչանա ծառայողների պատճառով, ապա Աշխատանքի Որենսգրքի 83-րդ հոդվածի կարգով նրանք պարտավոր են հատուցանել պատճառած վնասը։

22) Արգելվում է.—

ա) տանից փարչության թույլավության իր հետ տանել հիմնարկի վոր և է գույքը ու գործի թղթերը.

բ) տանից փարչության թույլավության ոգտվել գործիքներից, գրող մեքենաներից և այլն, յեթե դա գործի պետքերի համար չէ.

գ) գործի ժամանակ լրագիր ու գրականություն կարդալը, վոր ընթացիկ աշխատանքի պահանջներից չի բղխում.

դ) բանվորական ժամերում անձնական ընույթ ունեցող զրույց անելը.

յե) աշխատանքի տեղը թողնելն ու անհարկավոր տեղից հիմնարկության դես-դեն գնալ, ման գալը և խում-խումբ հավաքվելը,

յեթե դա չի բղխում ծառայական պարտականություններից.

գ) այցելուներ ընդունելը, յեթե դա գործին չի վերաբերում.

ե) այցելուների հետ կոպիտ վարվելը և իրար հետ վիճելը, վոր խանգարում ե աշխատանքի նորմալ ընթացքը։

23) Ծառայողների վոչ զգաստ դրությամբ հիմնարկություն գալն ու վոգելից խմիչքներ հիմնարկության ներսում խմելը թույլ չի տրվում։

Վոչ զգաստ դրության մեջ յեղող ծառայողներին անմիջապես պետք ե հեռացնել հիմնարկությունից, և այդ դեպքում փաստորեն չաշխատած ժամանակը համարվում ե պարապ։

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24) Վարչությունը պարտավոր ե իր բոլոր կարգադրությունները, ցուցմունքները և նկատողությունները ծառայողներին քաղաքավարի ձևով անել։

25) Վարչությունը պարտավոր ե ամեն մի ծառայողի հայտնի դարձնել նրա վրա դրված պարտականությունները, ինչպես և այն, թե նա անմիջապես ում ե յենթարկվում։

Հիմնարկի վարչությունից պաշտոնական լիազորություն չունեցող անձինք չեն կարող ծառայողների գործին խառնվել։

26) Վարչությունը չպետք ե ծառայողից պահանջե այնպիսի աշխատանք կատարել, վոր նրա պարտականություններին չի վերաբերում (բացի Աշխատանքի

Որենսգրքի 36-րդ հոդվածում նախատեսվածներից), ինչպես և ծառայողից պահանջել, վոր նա ծառայական բնույթ չունեցող հանձնարարություններ ու աշխատանք կատարի։

ԾԱՆՈԹ.—Յեթե աշխատակիցը զբաղմունքների ժամերին ազատ ժամանակ ունի, ապա վարչության պահանջով նա պարտավոր ե ոգնել ծառայակիցներին, ինչպես և բացակայության ժամանակ փոխարինել նրանց այն դեպքում, յեթե աշխատանքները միանման են։

27) Վարչությունը միաժամանակ պետք ե հիմնարկության աշխատավորներին տա աշխատելու համար անհրաժեշտ բոլոր նյութերը, պրիբորները և գրասենեկային պարագաները։ Ծառայողներն ել իրանց հերթին պետք ե ժամանակին հայտնեն վարչությանը, թե ինչ ե հարկավոր։

28) Վարչությունը պարտավոր ե ծառայողներին սահմանված կարգով հաշվեգրքույկներ (րասչյոտնի կնիժկա) տալ և աշխատավարձը տալիս՝ համապատասխան գրանցումն անել այդ հաշվեգրքույկում։

29) Աշխատավարձը վճարվում ե կոլեկտիվ պայմանագրում մատնանշված ժամանակներում։

Աշխատավարձը վճարվում ե բանվորական ժամանակում, առանց գործի ընթացքը խանգարելու։ .

30) Մինչև աշխատավարձը տալը հինգ որ առաջ աշխատավորները պարտավոր են ներկայացնել իրանց հաշվեգրքույկներն ու նրանց փոխարեն տալոն ստանալ։

Հաշվեգրքույկները՝ հասանելիք աշխատավարձն այնտեղ մտցնելուց հետո՝ վերադարձվում են աշխատավորներին, աշխատավարձը վճարելուց մի որ առաջ։

Աշխատավարձի հաշվի մեջ նկատված ամեն մի սխալի համար աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել վարչությանը, համապատասխան ուղղումներն անելու համար։

Հաշվեգրքույկը կորցնելու դեպքում՝ աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել վարչությանը, վորը կորցրածի տեղ նոր հաշվեգրքույկ է տալիս։

ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

31) Հերթական արձակուրդների ցուցակները, վորտեղ յուրաքանչյուր աշխատավորի արձակուրդի ժամանակն է մատնանշվում, Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի կողմից հաստատվելուց անմիջապես հետո կախում են, վոր աշխատավորները ծանոթանան դրանց հետ։ Արձակուրդի ժամանակը կարելի է փոխել աշխատավորի ու վարչության համաձայնությամբ։

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

32) Այն շենքը, վորտեղ աշխատանքն է կատարվում, պետք է համապատասխանի սանիտարական-առողջապահական կանոններին։

33) Հիմնարկությունը պետք է լվացարան ունենա, բավականաչափ սապոնով և մաքուր սրբիչներով։

34) Շենքի մեջ պետք է բավական քանակությամբ, մաքուր ու կարգին պահվող արտաքնոցներ լինեն։

35) Բոլոր ծառայողները պարտավոր են մաքրություն պահպանել, չկեղտոտել և մաքուր ու կարգին պահել իրանց տեղը։

ՏՈՒԳԱՆՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

(Հիմնարկությունների համար)

1. Ներքին կարգավորման կանոնները խախտելու դեպքում հետևյալ տուգանումներն են սահմանվում.

I) Հանդիմանություն.

II) Հանդիմանություն, վոր հայտարարվում է Ազնեֆթի վարչության հրամանում.

III) Գործից հեռացում։

2. 1-ին հոդվածի I և II կետերում նախատեսված տուգանումները տրվում են վարչության կարգադրությամբ, միաժամանակ յուրաքանչյուր առանձին դեպքում հաղորդելով տեղկոմին։

III կետում նախատեսված տուգանումը տրվում է՝ բոլոր դեպքերում Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի վորոշման համաձայն։

3. Տուգանումների այս ցուցակի կարգով կիրառումը կատարվում է առանց նախազգուշացման և առանց հեռացման նպաստ վճարելու։

4. Այն դեպքում, յեթե հանցանքները հաշվելու ժամանակը չի մատնանշված, վերցնվում է մի տարի ժամանակ, վորից հետո հանցանքների ու տրված տուգանումների հաշվեառը նորից է սկսում։

Արված տուգանումները գրանցելու համար առանձին որագիր է պահվում։

5. Տուգանումները տրվում են § 1-ում մատնանշված կարգով. բայց ներքին կարգավորման կանոնների առանձնապես լուրջ խախտումների դեպքում կարելի է անմիջապես յենթարկել III տուգանման։

6. Տուգանումները տրվում են հանցանքի յերևան գալուց անմիջապես հետո։ Տուգանման յենթարկել չի թույլատրվում, յեթե հանցանքը յերևան գալու րոպեյից հետո մի ամիս է անցել։

ՏՈՒԳԱՆՈՒՄՆԵՐ

7. Առանց հարգելի պատճառների գործից ուշանալը.—

ամսեկան 1-ից 3 անգամ I տուգանում.
» 4-ից 6 » II »
» 6-ից ավելին III »

8. Հիմնարկությունից ինքնակամ կերպով բացակայելն ու առանց վարչության թույլտվության ժամանակից առաջ գործից հեռանալը՝

ա) ամսվա մեջ 2 անգամ II տուգանում
բ) » » 3 » III »

9. Առանց հարգելի պատճառների գործի դուրս չգալու համար՝

ա) ամսվա մեջ 2 որ—II տուգանում
բ) » » 3 և ավելի որ—III տուգան.

10. Ապօրինի կերպով հրաժարվելն այն գործից, վորի համար վարձված է աշխատավորը, նույնպես և Աշխատանքի Որենքների Կոդեքսի նախատեսած ու

սահմանած կարգով թույլատրված արտաժամյա աշխատանքից հրաժարվելու համար՝

ա) առաջին անգամը II տուգանում
բ) յերկրորդ » III »

11) Աշխատանքի գալու և աշխատանքից հեռանալու ժամանակ հսկողության կանոնները խախտելու համար՝

ա) 2 անգամվա համար I տուգանում.
բ) 3 » « II »
գ) 3-ից ավելի անգամ III »

12) Կողմնակի ընթերցումների, անձնական բնույթ կրող զրույցների և ուրիշներին գործից հետ քաշելու համար՝

ա) մինչև 3 անգամը II տուգանում.
բ) 3-ից ավելի » III ».

13. Գործի ժամանակ ծառայական պարտականություններին չվերաբերող աշխատանք կատարելու համար՝

ա) առաջին անգամը II տուգանում.
բ) յերկրորդ » III »

14. Առանց վարչության թույլտվության հիմնարկության իրերից կամ գործերի թղթերից տանելու համար՝

ա) մինչև 2 անգամը II տուգանում.
բ) 2 անգամից ավելին III »

15. Վոչ զգաստ դրությամբ գործի գալու կամ հիմնարկության ներսում վոգելից խմիչքներ խմելու համար՝

ա) առաջին անգամը II տուգանում.
բ) յերկրորդ » III »

16. Վարչության որինական կարգադրությունները չկատարելու համար՝

ա) առաջին անգամը II տուգանում.

բ) կրկնորդ » III »

17. Յեթե ծառայողները վիրավորում են վարչության ներկայացուցիչներին, կամ վարչության ներկայացուցիչները ծառայողներին, տալ II-III տուգանում։

Նույն անձանց գործողությամբ վիրավորելուն համար—III, առանց Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովին գանգատ ներկայացնելու իրավունքի։

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վարչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ
Վարչության քարտուղար՝ Ո. Ա. ՋԵՅՆԱԼՈՎ
Տարիֆ.—տնտ. բաժնի վարիչ՝ Մ. Ֆ. ՖՐՈԼՈՎ

ԱՁՆԵՎԹ

Վարչության նախագահ՝ Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎ
Վարչության նախ. տեղ. Կ. Ա. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ
Վարչության անդամ ՅԱ. Վ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Աշխատ.—Էկոնոմ. բաժնի վարիչ՝ Բ. Մ. ՇԵՅՆԻՆ

Հավելված № 5
Կոլեկտ. պայմանագրի § 17-ին

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂԿՈՄԱՏԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1925 թ. հունվարի 16-ի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՔՆԵՐԻ ԿՈԴԵՔՍԻ 47-րդ ՀՈԴՎԱԾԻ «ՅԵ» ԿԵՏԸ և 68-րդ ՀՈԴՎԱԾԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ի փոփոխություն Անդրկովկասյան Աշխատանքի ժողկոմատի 23 թ. հունիսի 2-ի բացատրության և Անդրկովկասյան Աշխատժողկոմատի 24 թվի հուլիսի 23-ի № 106 վորոշման (Անդրկովկասյան Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունում աշխատանքի մասին գործող որենսդրության ժողովածու, յերես 100) Անդրկովկասյան Աշխատանքի ժողկոմատը հետևյալ կարգն է սահմանում Աշխատանքի Որենքների Կոդեքսի 47-րդ հոդվածի «յե» կետը և 68-րդ հոդվածը գործադրելու մասին։

1) Վարձողը իրավունք ունի պահել աշխատավորին հասնելիք վարձատրությունը, մինչև վոր որինական ուժ ստանա արդարացնող վճիռը կամ վորոշում լինի դադարեցնել գործը հետևյալ դեպքերում.—

ա) յերբ դատական պատասխանատվության յենթարկված լինելու պատճառով աշխատավորը կալանավորված է, ինչպես և ադմինիստրատիվ կարգով կալանավորված ժամանակ.

բ) յերբ աշխատանքից հեռացված է դատական և քննիչ իշխանությունների վորոշմամբ:

ԾԱՆՈԹ.— Հիշյալ դեպքերում վարձատրությունը պահելու համար Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի համաձայնությունը չի պահանջվում:

2. Վարձողն իրավունք ունի գործի շահի պատճառով աշխատավորին գործից հեռացնելու և վարձատրությունը չտալու, յեթե բռնվի այնպիսի քրեական—պատժելի արարքի մեջ, վոր անմիջապես կապ ունենա իր գործի հետ կամ խոստովանի, վոր այդպիսի արարք է ունեցել:

Այդպիսի դեպքերում գործից հեռացնելու և վարձատրությունը չտալու համար պիտի նախապես համաձայնության գան Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի հետ և այդ այնքան ժամանակով պիտի լինի, մինչև վոր հարցը լուծվի դատական կարգով:

ԾԱՆՈԹ.—Յերբ աշխատավորը իր գործի հետ կապ չունեցող դեպքում քրեական—պատժելի արարք է ունենում, չպետք է վարձողի կողմից գործից հեռացնվի, մինչև վոր այդ պահանջեն դատական և քննիչ իշխանությունները:

3) Յերբ վարձողի ձեռքով հեռացվածի համար արդարացնող վճիռ կայացնվի կամ գործը դադարեցնվի 2-րդ հոդվածի կարգով, այն ժամանակ վարձողը պարտավոր է լրիվ վարձատրել այն ամբողջ ժամանակի համար, վոր անցել է վճարը դադարեցնելու ժամից մինչև արդարացնող վճիռ կայանալը կամ գոր-

ծը դադարեցնելը: Բացի դրանից վարձողի պահանջով աշխատանքից հեռացվողներին նորից պիտի գործ տրվի հավասար նախկին գործի վճարին ու վորակին, թեկուզ աշխատանքի վերադառնա յերկու ամիս անցնելուց հետո:

4. Յերբ 1-ին հոդվածում հիշած անձերի մասին վորոնք կալանքի տակ են կամ գործից հեռացված են անմիջապես իրենց գործի հետ կապ ունեցող քրեական—պատժելի արարքի մեջ մեղադրվելով, արդարացնող վճիռ է կայանում կամ նրանց գործը դադարեցնում են, ապա վարձողը պարտավոր է վարձատրություն տալ կալանավորությունից կամ հեռացնելու բոպեյից սկսած վոչ ավելի քան յերկու ամսվա համար:

Յեթե դատական կամ ադմինիստրատիվ որգանների ձեռքով այդ մարդկանց համար հանցանք համարվող գործողությունը կապված չլինի անմիջապես իրենց գործի հետ, ապա վարձողը Գնահատիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովի համաձայնությամբ կարող է վարձատրություն տալուց ազատվել աշխատավորի նաև գործի չգալու առաջին յերկու ամսվա համար:

5. Յերբ մեղադրական դատավճիռ է լինում կամ ադմինիստրատիվ կարգով տուգանքի է յենթարկվում, անց կացրած ժամանակի համար վճար չի տրվում: Այս կանոնը գործադրվում է և այն դեպքերում, յերբ կատարվում են աշխատանքի հետ թե կապ ունեցող, և թե կապ չունեցող քրեական—պատժելի արարքներ կամ հանցանքներ:

6. Աշխատավորական պայմանագիրը միայն այն ժամանակ կարելի է քանդել առանց հարցը Գնահա-

ռիչ-Կոնֆլիկտային Հանձնաժողովում քննելու և առանց արձակման նպաստ տալու, յերբ դատական-քննիչ օրգանների պահանջով կալանավորվելուց կամ աշխատանքից հեռացվելուց անցնում է յերկու ամսվա ժամանակամիջոցը, այլ և յերբ օրինական ուժ է ստանում, թեև յերկու ամսից էլ առաջ, մեղադրական դատավճիռը (բացի վոչ ադմինիստրատիվ տուգանավորումը):

7) Կալանքի տակ լինելը կամ գործից հեռացվելը չի ընդհատում այն ժամանակամիջոցը, վոր տիրող կանոնների համաձայն անհրաժեշտ է գործազրկության նպաստի իրավունք ստանալու համար, բայց այդ միայն այն դեպքում, յերբ հետևում է արդարացնող դատավճիռ կամ յերբ գործը կարճվում է:

8. Ներկա վորոշումը գործադրվում է և այն բոլոր դեպքերի համար, վորոնք մինչև սրա հաստատվելը դեռ ևս լուծված չեն:

Անդրկովկասյան Աշխժողկոմ՝ Ս. ՅԱԿՈՒԲՈՎ

Կազմբաժնի վարիչ՝ Ս. ԳԱԴԱԲՐԵԼԻՁԵ

Հավելված № 6
Կոլեկտիվ պայմանագրի § 26-ին

ՎՈՐԱԿԱՆ (ԿՎԱԼԻՖԻԿԱՑԻՈՆ) ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՏԱՐԻՖԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ

I-Ն ԿԱՐԳ

Բաղնիսպաններ—սրապահություն են անում բաղնիքներում, լվանում են, մաքրում-հավաքում են, հետևում են վառելիքին, կոնտրոլի են յենթարկում բաղնիք յեկողների տոմսերը, պահպանում են հագուստները, ծառայում են նաև բաղնիքներին կից լվացքատներին:

Թղթատարներ (ռասիլնիներ)—դրսի և ներսի, զանազան հանձնարարությունների համար, թղթեր են տանում Ազնեվթի տնտեսական բոլոր միավորներին:

Պահապաններ—նավթահանքերն ու գործարանները պահպանելու համար:

Հեռախոսողներ (տելեֆոնիստներ)—միայնակ հեռախոսի մոտ:

Հավաքող-մաքրող կանայք (ուբորշչիցա)—հավաքում-մաքրում են սենյակները, լվանում հատակները, թեյ են պատրաստում և բաժանում:

2-ՐԴ ԿԱՐԳ

Դռնապաններ (դվորնիկներ)—Հավաքում-մաքրում են բակերը, փողոցները և արտաքնոցները, բնակարանները վառելիք են տանում:

Ձիապաններ (կոնյուխներ)—հավաքում են, մաքրում, ձիերին ջուր և կեր են տալիս: Հավաքում-մաքրում են գոմերը և ձիերի ախոռները (ստոյլա), սայլով դուրս են տանում աղբը (նավոզ): Կերը (ֆուրաժ) ախոռանոց են բերում. ձիերին պայտելու են տանում: Լվանում են կառքերը: Կառապաններին են կանչում:

Կառապաններ (կուչերներ)—Ճանապարհվելու ամեն պատրաստությունները տեսնում և խնամում են ձիերին: Գոմերն են մաքրում-հավաքում, յերբ այդ գործը նրանց է հանձնվում:

Ձիաքարշի կոնդուկտորներ—Ուղեցույցներն են դարձնում, վագոններն են տորմոզ անում, ոգնում են բեռը բարձելիս կամ թափելիս:

Վագոններ լվացողներ—Վագոններն են լվանում դրսից և ներսից:

Սայլապաններ (պոդվոդչիկներ, արաբաչիներ և դրոգալներ)—Ձիերը կառավարելու հետ կապված բոլոր աշխատանքներն են կատարում. բարձում են, բեռն են թափում և զանազան ապրանքներ տանում: Խնամում են ձիերին: Գոմերն են մաքրում-հավաքում, յերբ այդ գործը նրանց է հանձնվում:

Լվացարարներ (պրաչկաներ):

Բանվորներ—ա) Գործարանային և նավթահանքային. անտեսության զանազան ոժանդակիչ

գործերի համար.—շինությունները են հավաքում-մաքրում, նյութեղենն են տեղափոխում, բեռը բարձում, թափում և նավթահանքային ու գործարանային այլ և այլ գործեր կատարում.

բ) Նյութեղենի (մատերիալնի) պահեստների—փոքր պահեստներում պահեստի գործակատարի ցուցմունքով զանազան նյութեղեն (մատերիալ) ընդունելու և բաց թողնելու համար.

գ) ղըռի աշխատանքների համար.

դ) յերկաթուղու ճանապարհի նորոգության համար.

յե) ռեզերվուարների համար.

զ) ճանապարհների համար:

Վառելիք և ջուր բաժանողներ—Վառելիք և ջուր են բաց թողնում մարկաներով:

Պահապաններ:

Հեռախոսողներ—Մինչև 10 նոմերների կոմուտատորների մոտ:

Տարտալշչիկներ—Նավթ են քաշում նավթահորերից և շախտերից լերյոդկաներով և բարաբաններով, ինչպես և ուղղակի ձեռքով:

Մաքրողներ (ավտոմոբիլը լվացողներ)—Լվանում են ու մաքրում ավտոմոբիլները, հավաքում-մաքրում են գարաժի շենքը:

3-ՐԴ ԿԱՐԳ

Աղբատարներ (ասենիզատորներ)—Մաքրում են աղբահորերը, կանալիզացիայի խողովակները, շամբոները և այլն:

Գուդրոնշչիկներ—Նավթաթոր գործարանների մաքրող բաժանմունքներից հավաքում-հանում են թթու գուդրոնը և մաքրում են գուդրոնի ամբարները։

Շոգեկաթսաների հնոցապաններ (կոչեգարներ)—Մինչև 6 ատմոսֆերայի ցածր ճնշման կաթսաների համար են հոգում, մաքրում և բանի գցում (շուրավատ անում)։ Հետևում են փորսունկաներին և նրանց լավ վառվելուն։

Կուբերի հնոցապաններ (կոչեգարներ)—Փորձառուները. — մաքրում և բանի են գցում (շուրավատ անում) թորման (պերեգոննի) կուբերը, հետևում են շոգու՝ տաքության փորսունկաների կանոնավոր վառվելուն, բատարեյի փորսունկի կողմի կացությանն ու մաքրությանը, կամարների (սվոդ) դրության և օջախի դարսվածքին, ծխնելուզով ծուխը բարձրանալուն։ Կանոնավորում են վառելիք տալը և ձգումը (տյագան)։ Կարողանում են վորոշել տեսակաբար կշիռը (ուդելնի վես), բռնկման աստիճանը, կըպչուն լինելը և այլն։ Աշխատում են սգոնշչիկների հսկողությամբ։

Կաթսա և կուբ մաքրողներ—Շոգու կաթսաները մաքրում են ոկնուցքից (նակիպ), ինչպես և նավթաթոր կուբերը այրված կոքսի մնացորդներից։

Ավագ ձիապաններ—Հերթապահ ձիապանների գործին են ուղղություն տալիս։ Հոգում են վոր ձիերը պատրաստ լինեն ժամանակին դուրս գալու։ Հետևում են ձիերի դրության։

Մասլյոնշչիկներ—ա) Նավթահանքերի, գործարանների և այլն.—հետևում են մոտորների, նասոսների,

տրանսմիսիաների, շոգեմեքենաների, կոմպրեսորների և այլն լավ յուղվելուն և կանոնավոր գործելուն։ Կարում են փոկերը (ռեմեն)։

բ) Պերեկաչկայի մասլյոնշչիկներ։

Նավթամթերքներ լցնողներ և դատարկողներ—Ցիստերները, բիդոնները, բոչկաները նավթամթերք են լցնում և դատարկում։

Կիր այրողներ—Կիրն են այրում։

Ջուլվածքի կողքերը կտրողներ (աբրուբշչիկներ)։

Ժելոնշչիկի օգնողներ—Օգնում են ժելոնշչիկին։

Կրովելշչիկի օգնողներ—Օգնում են տանիքները ծածկողներին աշխատելու ժամանակ։

Վոչ մետաղագործ վարպետների օգնողներ։

Սայլապաններ (պոդվոդչիկներ)—Կառավարում են 4 և ավելի ձիեր՝ հոգում են ձիասարքի և սայլի մասին։

2-րդ կատեգորիայի հրդեհաշեջներ—Կացիններով աշխատողներ, խողովակների վրա աշխատողներ։ Որպահություն են անում թռուցիկ խմբերում։ Հետևում են հակահրդեհային գործիքների, մաշինների մաքրությանը՝ մասնակցելով անմիջապես այդ գործերին։ Ակտիվ կերպով մասնակցում են հրդեհները հանգցնելուն։

Բանվորներ—ա) Հորափորման մասում փորելու բոլոր աշխատանքները կատարում են փորելու վարպետի, կլյուչնիկի կամ փորողի (բուրիլշչիկի) ցուցմունքով։

բ) Նավթահանքային և գործարանային մեխանիքական արհեստանոցներում միշտ աշխատում են արհեստավորների հետ. հմուտ են գործիքներին. գործում են Աղնեվթի Ադրանքային և Գազային վարչությունների գծերի վրա.

գ) Ծանրությունների համար, վոր միացած հատուկ խմբերով և բրիգադներով աշխատում են զանազան տեխնիքական հարմարություններով.

դ) Մեծ պահեստներում.

յե) Խորաքաշ նասոսների բանվորներ և սորմուզ անողներ, կոմպրեսորների խողովակներն ու խորաքաշ նասոսները իջեցնում և բարձրացնում են.

զ) Ասֆալտի, ախգոլի, բենզինի, վազելինի, գազային, ասվոտային սուրրոգատների, նավթի և թթվուտային բաժինների.

է) Նավամատույցներում և լցնելու կայարաններում.

ը) Ողային գծի.

թ) Գլխավոր տուները մաքրող.

ժ) Որսադնոց խողովակների վրա աշխատող վորակյալ բանվորներին ոգնողները (պոդրուչնիկները), ոգնում են գործին և քաշում են յերկաթի թերթերը.

ժա) Պարտեզների համար, վորոնք փորձված են և միշտ աշխատում են պարտիզպանների հետ.

ժբ) Նավթաթոր գործարանների թորման մաքրող բաժանմունքներում աշխատող.

ժգ) Հորերում ճնցքեր ծակելու համար.

ժդ) Լաբորատորներում աշխատող:

Տեսակների բաժնող-գրադուսնիկներ —Սգոնչչիկի հսկողության տակ տեսակների են բա-

ժանում հեղուկի մնացորդները, նավթաթոր գործարանների ընդունելու մասերում վորոշում են նավթամթերքների տեսակարար կշիռը և դիտողությունները գրի են առնում: Թափվելու դեպքում կեղտոտած մթերքները առանձնացնում են:

Ուղեփոխներ—Յերկաթուղու ճանապարհի վրա են աշխատում ուղիները փոխելու հրահանգի համաձայն:

Ազդանշան տվողներ (սիգնալիստներ)— Նավթահանքային ճանապարհների վարչատանը:

Ավագ պահապաններ—Ստուգում են հերթապահների պոստերը. բացակայող հերթապահների տեղն են բռնել տալիս ժամանակին: Անհրաժեշտ տեղերում պահապաններ են նշանակում կամ պահպանությունն են ուժեղացնում:

Ճանապարհի պահապաններ—Հետևում են վոր կարգին լինեն յերկաթուղու ճանապարհները և հեռագրի ու հեռախոսի շենքերը և այլն:

Կարող ճանապարհների պահապաններ —Պահպանում են յերկաթուղին կարող ճանապարհների անցքը:

Հեռախոսողներ—10—50 նոմերների կոմուտատորների մոտ:

Տարտալշչիկներ—Գազ տվող և արագ քաշվող նավթահորերի մոտ:

4-ՐԴ ԿԱՐԳ

Բոլտերը կտրողներ—Ստանոկներում ամեն լայնության ու մեծության բոլտեր, գայկաներ, վինտեր և բեզբաներ կտրել:

Զափողներ (զամերշչիկներ) — Գործարաններում և նավթ փոխադրող կայարաններում հետևում են ռեզերվուարները լցնելուն ու բաց թողնելուն. բաց են թողնում ջուրն ու ցեխը, չափում են ռեզերվուարների նավթամթերքը, վորոշում են նրանց տեսակարար կշիռը (ուդելնի վես) և պատրաստի աղյուսակներով վորոշում են քաշը: Յերկաթուղու մասում չափում են ցիստերները:

Կրասեր կոնդուկտորներ—Ծառայություն են անում յերկաթուղու վրա ավագ կոնդուկտորների ղեկավարությամբ:

Կոչեգարներ շոգեկաթսաների մոտ—Նայում են, մաքրում և բանի գցում 6 ատմոսֆերից վեր ճնշումի շոգեկաթսաները:

Կրանի վրա աշխատողներ (ելեքտրովագոնետչիկներ) — Աշխատում են կրանների և սայլակների (վագոնետկա) վրա:

Ղըռի վարպետներ—Նայում են ղըռը յեփելուն, ղըռում են և ասֆալտում են տանիքները, փողոցները և այլն:

Մասլյոնշչիկներ —ա) Դիզելների և տուրբոգեներատորների վրա.

բ) մի շենքում դրած յերկու նավթամոտորների գազմոտորների վրա.

գ) ելեքտրական կայարաններում, վոր միաժամանակ հոգում են և շչիտների մասին:

Քարողներ—Քարում են խճուղիները (շոսեներ):

Կռանողներ (մոլոտոբոյեցներ)—Աշխատում են դարբինների և կոտելշչիկների հետ:

Մետաղագործ արհեստավորների ոգնողներ:

Պերեշիվշչիկներ—Հսկում են և ճանապարհները նորոգում արտելի գլխավորի ցուցմունքով:

1-ն կարգի հրդեհաշեջներ — Կացինով, տրուբաներով աշխատողներ (տապորնիկներ, տրուբնիկներ), բաժանմունքների մեծերը:

Ավագ բանվորներ — ա) Զանազան կոչումների, — նավթահանքերում, գործարաններում, պահեստներում և այլն. ղեկավարում են բանվորների խմբերի աշխատանքը.

բ) Նատրի գործարանի, վիսկոզինը պահելու և նավթաթոր գործարանների զտող բաժինների ավագները (ստարշիները):

Ոբստադնոյ խողովակների նշանողներ—Կաթսայի թերթերի ծակերի տեղերն են նշանում և շաբլոնի միջոցով գծագրում են թերթերի վրա:

Ուղեփոխներ (ստրելոչնիկներ)—Աշխատում են յերկաթուղիների ուղեսլաքի (ստրելկայի) վրա վորոշ հրահանգների համաձայն Սպիտակ քաղաքի, Սաբունչու, Սուրախանու և Զաբրաթի կայարաններում:

Սվերլիլշչիկներ—Հասարակ գործերում:

Պարտիզպաններ—Խնամք են տանում բույսերի վրա և տնկում:

Տեսակների բաժնող գրադուսնիկներ—Նույնը ինչ վոր 3-րդ կարգում. կերոսինի գործարաններում առնվազն 25 կուբերով և յուղի այն գործա-

րաններում, վորտեղ առնվազն 7 տեսակ նավթամթերք են ստանում։

Հյուսողներ (սարաստիլչիկներ)—Պոդյոմնի և այլ կտրած կանատները հյուսելով կցում են իրար։

Ապակի դցողներ։

Վագոնները յուղողներ—Յուղ են քսում բուքսերին, կապվող գործիքներին և այլն. նայում են վոր լավ յուղվի։

Ազդանշան տվողներ (սիգնալիստներ)—Կանգնում են Սպիտակ քաղաքի և Սուրախանու տրամվայի գծերի կցվող մասերում։

Տորմոզ անողներ—Շտանգային, պտուտավոր և կանատային հորափորումների ժամանակ. կառավարում են փորող ստանոկները և շարժիչները (դվիգատելները) փորելու սովորական աշխատանքների ժամանակ։

Հեռախոսողներ—50 և ավելի նոմերների կոմուտատորների մոտ։

Խողովակ կտրողներ (տրուբորեզներ)—Զանազան տրամագծի խողովակները համապատասխան ստանոկներով կտրում են։

Ուչյոտչիկներ և նավթամթերքներ բաժանողներ—Ընդունում և բաժանում են նավթամթերքները շոգեկառքերի և ջերմատարների համար։ Վառվող և ոծելու նյութերի հաշիվն են անում։

Տամպողներ—Գործում են ստանոկների վրա և գայկա, բոլտ, զակլյոպկա պատրաստում։

5-ՐԴ ԿԱՐԳ

Արտելի վերակացուներ (ստարոստաներ)—Ճանապարհների վրա աշխատող բանվորների աշխատանքներն են ղեկավարում։ Պետք է լավ տեղյակ լինեն ճանապարհի աշխատանքներին և սիգնալիզացիային։

Բետոնշչիկներ—Բետոնային և յերկաթբետոնային մանր աշխատանքներ են կատարում։

Վագրանշչիկներ—Զանազան չափի վագրանկայի վրա են աշխատում։

Վալցովշչիկներ—Կաթսայի թերթերն են կռացնում ձեռքի կամ մեքենաներով շարժվող (պրիվոդնոյ) վալցերով։

Դոլբեժնիկներ (մեքենայով ծակողներ)—Միջակ բարդ գործերում, զանազան ձևի ստանոկներով են աշխատում։ Հասկանում են գծագրածները։

Ծնշողներ (Դավիլշչիկներ)—Նշան արած թերթերը ձեռքի կամ մեքենաներով շարժվող պրեսներով ծակոտում են։

Ժելոնշչիկներ—Նոր ժելոնկաներ են պատրաստում և նորոգում հները։

Թիթեղագործներ (ժեստյանշչիկներ)—Յերկաթի բարակ և հաստ թերթերից ծածկոց, վեդրո, բիտոն և այլն են պատրաստում։

Զակլյոպշչիկներ—Յերկաթի տաքացրած ձողերից կաթսաների զակլյոպկաներ են պատրաստում վոտքի կամ մեքենաներով շարժվող ստանոկներով։

Պատրաստում են գործիքները և նորոգում են իրենց ստանոկը:

Զինկովշչիկներ—Յերկաթի թերթերի ծակսերն են կտրում լայնացնում ձեռքի կամ մեքենայով շարժվող ծակող ստանոկներով, նավթահանքերում էլ ձեռքի 'տրեշչոտկաներով խողովակների ծակսերն են կտրում լայնացնում:

Կլյուչնիկներ—Փորող վարպետի բացակայությամբ փորող պարտիայի հերթակալությունն են ղեկավարում: Կարողանում են աշխատել սամոպադներով և հասարակ ֆրեյֆալներով:

Բարտաշներ—Բարը հասարակ կերպով տաշում են: Շենքի փայտի հասարակ աշխատանքներն են կատարում, հիմքը դնում և այլն:

Կրովեշչիկներ—Զոնտերն են պատրաստում: Տանիքները, կարնիզներն են թիթեղով պատում: Ժելոբներ, հասարակ ծնկներ են շինում: Թե հասարակ և թե բարդ տանիքները ծածկում են կղմինդրով (չերեպիցա) տոլով և եդերնիտով:

Տեխսնաբի կրանի վրա աշխատողներ:

Շոգեկառքերի կոչեգարներ — Գիտեն շոգեկառքի կաթսաների շինվածքը. Նայում են, մաքրում և բանի գցում այդ կաթսաները, շոգեկառքերի և ջերմատարների մաներների ժամանակ դեպոյի ճանապարհների ուղեսլաքներն են փոխում. ծանոթ են տեխնիքական շահագործման կանոնների հետ:

Ավագ կոնդուկտորներ. — Գնացքների շարժման ժամանակ գնացքի պետի պաշտոնն են կատարում:

Ոքսադնոյ խողովակները իրար հետ արացնողներ (կլեպալշչիկներ)—Վալցի և մամլած թերթերից շինած ոքսադնոյ խողովակները սառը զակլյոպկաներով իրար են ամրացնում, առանձին խողովակները միացնում են ծնկներ (կոլենո) շինում և բաշմակներ պատրաստում:

Կռանահարներ (մոլոտոբոյեցներ) —

ա) Շոգե մուրճերով.

բ) տաքացնողներ, վորոնք գիտեն մետաղների տաքանալու պայմանները:

Ներկարարներ—Սոսնձային ներկերով ներկում են սվաղած մակերևույթները, կրով ու կավճով սպիտակացնում են հարթ մակերևույթները, ներկում են կտուրները: Գիտեն կազմել գույների պարզ բաղադրություններ (կոլերներ):

Մոտորիստներ վագոնետկաների վրա—Կառավարում են մոտորային վագոնետկան. տեղյակ են ներքին այրման շարժիչին (դվիգատելին):

Կրեկինգ գործարանի հսկողներ— Հըսկում են հեղուկատու նասոսների ճշգրիտ աշխատանքի վրա՝ խիստ հետևելով կոնտրոլային պրիբորների ցուցմունքներին:

Կտրողներ—Կաթսաների թերթերն են կտրում շաբլոնի համեմատ կամ արած նշաններով:

Հյուսներ—Հասարակ հատակներն են տախտակում, առաստաղների տախտակներն են խփում և միջապատեր են պատրաստում ծեփելու համար: Նորոգում են վիշկաները, ոճորքները և կտուրների փայտի մասերը: Պատրաստում են նասիլկաներ, կոզլաներ, տաչկաներ և այլն:

Ջերմատարների մեքենավարների օգնականներ — Մանրամասն գիտեն ջերմատարների կառուցվածքը, բոլոր մասերի նշանակությունը և պահանջած խնամքը։ Յուղում են բոլոր մասերը։ Գիտեն սիգնալիզացիան և տեխնիքական շահագործման կանոնները։

Զտողների օգնականներ — Նավթաթոր գործարանների զտման խոշոր բաժանմունքներում, վորտեղ հերթապահ զտողներ կան և այն տեղերում, ուր հերթապահ զտողներ չկան։ Գիտեն, զտման պրոցեսը և կարող են զտողների գործը կատարել նրանց կարճատև բացակայության ժամանակ։ Հասկանում են նավթամթերքների ֆիզիքական հատկությունները։

Հրաչափներ (պիրոմետրշչիկներ) — Կրեկինգ-գործարաններում հետևում են, վոր գործը կանոնավոր գնա և խողովակները տաքացնող վառարանները լավ վառվեն։

Վառարանագործներ — Սենյակների ու խոհանոցների վառարաններն ու սովորական ծխնելույզներն են շինում. Նորոգում են ամեն տեսակի վառարաններ. հիմքերն են դնում, կաթսաները ամեն կողմից ծեփում են և այլն։

Կրեկինգ-գործարանի ոպերատորի 2-րդ օգնականներ — Գործում են ոպերատորների և նրանց առաջին օգնականների ցուցմունքով. կարգավորում են գործարանի ապարատուրի լեզվակները (կլապանները) և ոդանցքները։

Ավագ հրդեհաշեջներ — Կացինով աշխատողներ, խողովակով աշխատողներ. խմբերի պատասխա-

նատու ղեկավարներ թե հրդեհները հանգցնելու և թե տնտեսական աշխատանքների ժամանակ։ Հետևում են հրդեհաշեջ ինվենտարի մաքրության և անկորուստ մնալու վրա։

Կրեկինգ-գործարանի կանոնավորողներ (ռեգուլիրովշչիկներ) — Զտիչները (ֆիլտր) միացնում են կամ բաժանում։ Զտիչները դատարկում են, մաքրում և այլն։

Բանդողներ (սորոգալշչիկներ) — Զանազան գործերի համար, վոր առանձին դժվար սարք չեն պահանջում։

Փականագործներ (սլեսար) — ա) Մեխանիքական արհեստանոցներում հասարակ աշխատանքների վրա. որինակ տրանսմիսիաների պոդշիպնիկները, հասարակ նասոսային լեզվակները սարքողներ, արմատուրի յերեսը հղկողներ.

բ) խողովակներ անց կացնողներ, վոր զանազան լայնության խողովակներ են միացնում, ոձապտույտ և սառեցնող խողովակներ են պատրաստում, խողովակներ են կտրում, ծռում. զազվիժկա և ծորակներ են նորոգում.

գ) նավթահանքայինները, տրանսմիսիաների, տարտալնի բարաբանների և այլն նորոգություն անող,

դ) ելեքտրիկները, շպլոնների համաձայն փաթթում են։

Սվերլիլշչիկներ — Ծակելու զանազան գործեր են կատարում ուղղահայաց, շառավիղային և այլ ստանոկներով։ Ինքնուրույն կերպով սրում են սվերլոն և ուղղում են մյուս գործիքները։

Վագոններ կցողներ — Գնացքները կազմողների առաջնորդությամբ աշխատում են գնացքներ կազմելու վրա։

Հյուսողներ նորափորման մասում — Տալի և պադյոմնի կանատները հյուսելով կարկատում են։

Պարաիզպաններ — Միևնույնը ինչ որ 4-րդ կարգում, բայց մեծ փորձառությամբ։

Տրակտորիստներ — Գործում են ռետինի ակներով «Ֆորդզոնների», «Գոնոմակների» և «Արաների» վրա։ Ընթացիկ նորոգությունն են անում։ Գիտեն մոտորը կանոնավորել։

Խառատներ (տոկարներ) — Մասսայական վոչ բարդ գործերում նմուշների և եսքիզների համեմատ ուղղում են գործիքը։ Խնամք տանում ստանոկի մասին։

Կրեկինգ-գործարանի ֆլորիդինիստներ — Ֆլորիդինով լցնում են (զարյադ) զտիչները, ածում են ռեգեներատների մեջ. լերյոդկան են կառավարում. ռեգուլիրովշչիկին ոգնում են զտողի կարգադրությամբ։

Ձեկանշչիկներ — Կաթսաները, ռեզերվուարները և խողովակները չեկանկա են անում։

Շոֆֆերներ — Գործում են մինչև 25 ուժ ունեցող զանազան մարկաների 4 տեղանի մարդատար ավտոմոբիլների վրա. գիտեն մոտորը կարգավորել և քշելու կանոնները. ընթացիկ նորոգությունն են կատարում։

Թամբագործներ — Ամեն տեսակ ձիասարք, թամբեր և այլն կարկատում են և պատրաստում, փոկերը կարում։

Ծեփողներ — Ծեփում են հարթ պատերը և լուսամուտների բացվածքները։ Գաջ են պատրաստում, հասարակ ծեփ են անում, կարկատում են, քանոնով մաքուր ծեփ են անում, ֆասադները զարդարում և կարնիզները դուրս բերում։

Վողորկողներ (շլիֆովալշչիկ)։

6-ՐԴ ԿԱՐԳ

Ակկումուլյատորշչիկներ — Ակկումուլյատորները նորոգում են և լցնում (զարյադ)։

Բրիգադիրներ խոր նասոսների վրա — Գործում են անմիջապես բրիգադի հետ։

Տակառագործներ (բոնդար) — Զանազան մեծության տակառներ են պատրաստում, նորոգում, սոսնձում են։

Հորափորներ — Վարպետը բացակայելիս ղեկավարում են հերթական փորող խմբի աշխատանքները, փորում են, նասոսների գործելուն են հետևում։ Փորողների գործին մասնակցում են՝ հավասար բանվորներին։

Վուլկանիզատորներ — Ռետինն են հալում և կամերաների ծածկոցները նորոգում, մաքրում են թափած մակերևույթը։

Դուրբեժնիկներ — Զանազան կազմվածքի ստանոկներով ամեն տեսակի գործեր են կատարում։

Քարտաշներ — Ֆասադի վրա են աշխատում սպիտակ քարով և գունավոր սյուներով։

Պայտառներ (կովալներ) — Ընդունված ձևի ու տեսակների պայտեր են շինում և

պայտերի համար անհրաժեշտ գործիքներ պատրաստում։ Ձիեր են պայտում։

Դարբիններ — Պատրաստում են գարբնոցային և կաթսաների վերաբերյալ գործիքներ, շպոնկաներ, ժելոնկայի աղեղ, սկոբ, բոլտ, ժելոնկայի ող, կապաններ և այլն։

Անվագործներ (կոլեսնիկներ)—Անիվներ, դրոգներ, սայլեր են նորոգում, պատրաստում։ Հագցնում են ռետինե շիներ և կտորներից շիներ կազմում։

Կլյուչնիկներ—Նույնը ինչ որ 5-րդ կարգում մեծ փորձառությամբ։

Կաթսայագործներ—Նորոգում են կաթսաները։ Պատրաստում են զանազան տարողության ռեզերվուարներ, դոներ, պատուհանի վանդակներ, սարապիլաներ և այլն։

Ձուլողներ և շիշելնիկներ—Ձևավորում ու թափում են անկյունաչափներ, տրոյնիկներ, կրեստովիկներ, գազվիժկաների վոչ բարդ մասեր, տուփեր, վտուլկաներ և այլն. ձևավորում են և պատրաստում շիշկաներ։

Մագնետչիկներ—Նորոգում են մագնիտո, դինամո-մեքենաներ և ավտոմոբիլների ստարտերներ։

Ասիդոլ պատրաստող վարպետներ։

Ներկարարներ — Մաքուր ներկում են յուղաներկերով նոր ավազած տարածությունները, ներկում են պատեր և առաստաղներ։

Պաստառողներ (ոբոյշչիկ)—Կառքերի և ավտոմեքենաների։

Զտողներ (ուշխատիել)—Հետևում են նավթամթերքներ զտելուն. պատասխանատու են գործի ճիշտ ընթացքի համար։ Հետևում են նավթամթերքները մի տեղից մյուսը մղելուն։ Պիտի կարողանան որոշել տեսակարար կշիռը, մածուցիկությունը, գույնը և այլն։ Որագրում նշանակում են ռեագենտների, դիստիլատների և մաքրած արտադրությունների մուտքն ու ելքը։

Վագոնները զննողներ—Զննում են գնացքների վագոնները կայարաններում, վագոնների պակաս-պրատը լրացնում են և չեն թողնում, որ գնացքում պակասավոր վագոն լինի։ Փորձված փականագործներ (սլեսարներ)։

Շոգեկառքերի մեքենավարների օգնականներ—Պետք է շոգեկառքի հոգսը քաշն կանգնած տեղը և գնալիս. պիտի յուղեն բոլոր մասերը։ Պիտի մանրամասն իմանան շոգեկառքի կազմությունը։ Պիտի իմանան տեխնիքական շահագործման և ազդանշաններ տալու կանոնները։

Գազի գործարանի պիրոմետրշչիկ—Հետևում են հում նյութի պիրոգենիզացիային՝ գազի փոխելու համար, պրոցեսի ջերմության չափին, գազի լվացմանը սկրուբերներում, հնոցների մաքրելուն և այլն։

Զոդողներ (պայալշչիկ)—Աշխատում են արճիճով, կատարում են նորոգումներ և շինում են արճճե նոր պրիբորներ և ապարատներ։

Վառարանագործներ—Հատկապես գործում են զանազան կազմություն ունեցող բարդ տեխնիքա-

կան հնոցներ շինելու վրա և կաթսաները ծեփում են ամեն կողմից (ոբմուբովկա)։

Խարտոց քարթողներ (պիլոզուբ)—Ամեն տեսակի խարտոցների ատամ են քարթում։

Ելեքտրոմոնտյորի օգնական — Պիտի ծանոթ լինեն ուժային և լուսավորող գործերին և կանոններին՝ ելեկտրահոսանքի թե բարձր և թե ցածր լարումի ժամանակ։ Ելեքտրոմոնտյորը բացակայելիս պիտի նրան փոխարինեն։

Հյուսներ—Բարձր (8 սաժենից ավելի) և բարդ հիմնական փայտե կառուցումներ պետք է անեն։ Հանքափոր վիշկաներ պիտի շինեն և նորոգեն՝ վերևում և ներքևում։ Ստանոկների և փայտի մասերի բարդ աշխատանքներ պիտի կատարեն։ Պիտի կարողանան դռներ, փեղկեր և այլն շինել մաքուր կերպով։

Ռադիատորշչիկներ—Ռադիատորներ պիտի նորոգեն։

Գնացք կազմողներ—Գնացքներ են կազմում կայարանի հերթապահի ցուցմունքներով։ Նրանք նաև վագոնները կցում են միմյանց։

Նավթ թորողներ (սգոնշչիկի)—Պատասխանատու են դիստիլատների ճիշտ մշակման, նրանց վորակի և ապարատուրայի ուղիղ աշխատանքի համար։ Պիտի կարողանան վորոշել տեսակարար կշիռը, մածուցիկությունը, գույնը և այլն։ Պիտի պահեն աշխատանքների որագիրը։

Փականագործներ—ա) Ելեքտրիկներ ինքնուրույն կերպով պատրաստում են մեքենաների առանձին մասեր, կարողանում են ստուգել մոտորը, տեղ-

յակ են միացումների վոչ բարդ ուրվագծերին։ Ինքնուրույն ոբմոտկաներ են անում.

բ) Մեխանիքական, նորոգում են հորափոր ստանոկները, պտտեցվող և կենտրոնախույս նասոսները, ֆրեյֆալները, յասսիրը. պատրաստում են պլաշկաներ, ֆրեյզերներ, մետչիկներ և ավելի բարդ շտամպներ։ Գործում են գծագրությունների համաձայն.

գ) Մեծ փորձառություն ունեցող խողովակ անցկացնողներ, վոր կարողանում են գծագրությունների համաձայն գործել. նորոգում են զադվիժկաները և գոյություն ունեցող բոլոր տրամագծերի ծորակները։ Պատրաստում են ոձապտույտ (զմեյեվիկներ) և հաստապատ խողովակներ զանազան տրամագծերի, նաև անց են կացնում խողովակներ ամեն տեսակի և ամեն բնույթի.

դ) Հանքայիններ, վորոնք կոմպրեսորի և նասոսների խողովակներ են իջեցնում հորն ու այնտեղից հանում.

յե) Նշանում են մեքենաների, կաթսայի սարքկարգի զանազան մանր մասերը, գծագրությունների համաձայն, թե յերկաթե պլիտաների վրա և թե աշխատանքի տեղում.

զ) Հերթապահ փականագործներ, վոր առաջ կոչվում եին «մեքենապետի օգնական»։

Սվարշչիկ—Զոդում են ժելոնկաները, մանր ռեզերվուարները, խողովականցքերը և մեքենաների յերկրորդական մասերը։

Ռանդողներ (ստրոգալշչիկ)—Կատարում են զանազան տեսակի ռանդելու գործեր։ Ռանդում են սկոբներ, շաբլոններ, ռիսկներ և այլն. կարգի

են բերում ստանոկն աշխատելու համար։ Գործում են գծագրությունների համաձայն։

Տրակտորիստներ—Գործում են «Սերժանտ»-ի վրա և շարժիչ լեբյոդկաներով։ Ընթացիկ նորոգությունն են անում։ Պիտի իմանան կանոնավորել և կարողանան կառավարել։

Խառատներ (տոկար)—Խառատում են միանները, միանային ողերը, շտոկները, էքսցենտրիկ ողերը, կոնաձև մուֆտերը, կլապանները, շպինդելները, էքսցենտրիկ գլանները և այլն։ Պատրաստում են հասարակ կալիբրները։ Գործում են զանազան ձևերի կազմվածք ունեցող ստանոկների վրա։ Պահանջվում է ճշգրիտ աշխատանք, պիտի ինքնուրույն կերպով սազացնեն, կարողանան ջոկել հարկավոր գործիքը։ Պիտի կարողանան գործածել չափելու գործիքները։ Պիտի հասկանան գծագրությունները։

Ֆրեյզերովշչիկներ — Զանազան աշխատանքներ են կատարում գծագրությունների համաձայն, չափելու գործիքների և բաժանող պրիբորների օգնությամբ։

Վազելինի գործարանի ֆիլտրովշչիկներ—Զտելուց առաջ պիտի փոշի պատրաստեն։ Պիտի հետևեն զտող և էքստրակցիոն բաժանմունքների ապարատների գործելուն։ Պիտի վորոշեն արտադրածի գույնը։ Ֆիլտրները պիտի պատրաստեն գործի գցելու համար, բեռնավորեն և օդ փչեն։ Պիտի պահեն կենտրոնացրած մազութի և դուրս յեկած վազելինի հաշիվը։ Պիտի պահեն էքստրակցիոն բաժնի նյութեղենի փոշու, բենզինի հաշիվը։

Սվաղողներ—Ամենից բարդ գործեր կատարողները։

Շոֆֆերներ—Գործում են նստելու մեքենաների վրա—25 ուժից բարձր և մեկ տոննանոց «ֆորդերի» վրա։ Ընթացիկ նորոգությունը պետք է անեն։

Ելեկտրականության անցկացնողներ (Նորոգողներ)—բարձր և ցածր լարում ունեցող ելեքտրագծերի նորոգումը և սարքումը։ Լուսավորող գործիքների նորոգում։

7-ՐԴ ԿԱՐԳ

Հորափորներ—Նույնը, ինչ վոր 6-րդ կարգում, միայն մեծ փորձառությամբ։

Բրիգադի վարպետներ—ա) Խորաքաշ նասոսների, վորոնք մի նավթահանքի սահմաններում ղեկավարում են մի քանի բրիգադների աշխատանքները.

բ) Ղեկավարողներ փականագործների խմբի՝ բարդ մեխանիզմներ (կոմպրեսոր, նավթամատոր և և այլն) սարքողներ և նորոգողներ։

Գործիքներ շինողներ (ինստրումենտալշչիկ) — Պատրաստում են շտամպներ և ամեն տեսակի գործիքներ՝ ճշգրիտ, գծագրություններում ցույց տվածի համաձայն, ապա մխում են, նաև բաց են թողնում։

Կառք շինողներ — Մեծ փորձառությամբ պատրաստում են նոր կառքեր և կառքի փոքեր։

Մխողներ—(կալիլշչիկ) Մխում են դուրեր և կորաններ (րեզեց) ադաջրի և արճճի վաննաներում։

Պայտող-դարբիններ — Կատարում են բարդ, պատասխանատու աշխատանքներ, թե բժիշկների հատուկ պատվերներով (սմբակի զանազան հիվանդությունների ժամանակ) և թե պայտերին վերաբերող սովորական պահանջներով: Պայտում են ձիերին զանազան պայտերով: Ինքնուրույն կերպով պատրաստում են աշխատանքի համար անհրաժեշտ գործիքներ:

Կաթսայագործներ—Կատարում են բարդ կաթսայագործական աշխատանքներ շոգեկաթսաները սարքելու և պատասխանատու նորոգման համար:

Դարբիններ — Պատրաստում են գծագրություններով և նմուշներով միջին մեծության մասեր մեքենաների և շարժիչների մասեր և այլն: Նորոգում են հանքափորական և վորսացող գործիքներ: Մխում են զուբիլ և կտրաններ:

Ձուլողներ և կաղապարողներ (շիշեկնիկ)—Ձուլում և թափում են զանազան ձևի և ուղղաձիգ գործվածքներ, օրինակ՝ զանազան չափի խողովակներ, կորպուսներ, զավլիժկաներ և վենտիլներ անամեջ միաններ նասոսների համար և այլն:

Պղնձագործներ—Գծագրությունների համաձայն զանազան մասեր են շինում (շտուցերներ և այլն): Շինում են զանազան ամաններ, վաննաներ խողովակներ կարմիր և դեղին պղնձից, ամեն չափի և ձևի, զանազան տրամագծի և շրջանների ոդակներ և այլն: Կազմում են զանազան պլիպոյներ և մետաղները մաքրելու համար դեղեր, զանազան զոդումներ են կատարում այդ պլիպոյներով: Զանազան շաբլոններ են շինում:

Մոդել շինողներ — Բարդ ձուլվածքների համար մոդելներ են շինում:

Ջերմատարների մեքենավարներ — կառավարում են ջերմատարները, ծանոթ են ազդանշանների և տեխնիքական շահագործման կանոններին: Գիտեն ներքին վառման շարժիչների կառուցվածքը, աշխատանքը և նորոգումը:

Տավոտ պատրաստող վարպետներ:

«Կոնտակտ» պատրաստող վարպետներ:

Պատասողներ—Նույնը, ինչ վոր 6-րդ կարգում, միայն մեծ փորձառությամբ:

Զոդողներ—Նույնը, ինչ վոր 6-րդ կարգում, միայն մեծ փորձառությամբ:

Վառարանագործներ — Վառարանների և անհիդրիտի գործարանի փոշու կամերների առանձնահատուկ աշխատանքներ կատարողներ գործարանային և ծխատար խողովակներ կառուցողներ:

Կրեկինգ գործարանի ոպերատորի առաջին ոգնական — Դեֆլեգմատորի, կամերի սառցարանների աշխատանքին հետևող և այլն:

Հրդեհաշիջային մեխանիկներ—Հսկում են, վոր ամեն տեսակի հրդեհաշեջ գործիքները և սարքավորումները կարգին դրության մեջ լինեն, կատարում են դրանց մանր նորոգությունները: Հըրդեհի տեղն են գնում ավտոնասոսների հետ:

Զոդ բաժանմունքների արճճով զոդողներ:

Հյուսներ—Արտելի ավագներ, մինչև 15 հոգուց բաղկացած հյուսների խմբեր ղեկավարողներ:

Սուրրոգատի վարպետներ—Մշակում են նավթե սապոն «սուրրոգատ»: Հաշվեգրքի մեջ են մտցնում մնացորդների, պատրաստի սուրրոգատի և ամանեղենի յելքն ու մուտքը:

Նավթ թորողներ—Նույնը, ինչ վոր 6-րդ կարգում, միայն մեծ փորձառությամբ:

Կռողներ (սվարշչիկ)—Զոդում են մեքենաների կարևոր մասեր և բարդ գործվածքներ զանազան մետաղներից, բացի ծովային լատունից և ալյումինից:

Ռանդողներ—Նույնը, ինչ վոր 6-րդ կարգում, միայն մեծ փորձառությամբ:

Փականագործներ—ա) Ելեքտրիկներ, մեծ փորձառությամբ, ելեքտրոմոտորներ նորոգողներ, մոտորի մեջ յեղած ճապավածները վորոշել կարողացող, ուրվագծի համաձայն մոտորն ոբմոտկա անող.

բ) Մեխանիքական, լավ իմանում են գծագրությունները և նշանելը, ներքին վառման շարժիչները, կոմպրեսորներ նորոգում և կարգի են բերում. պիտի կարողանան վորոշել պողպատի տեսակները և մխել.

գ) Որապահի ականագործներ, վոր առաջ կոչվում եին «մեքենավարի ոգնական».

դ) Նշանողներ (րազմետչիկ). պիտի լավ հասկանան բարդ գծագրությունները, մեքենաների բարդ մասերը պիտի կարողանան նշանել և իմանան կառուցվածքները:

Ատաղձագործներ (ստոլյար)—Գծագրություններով և նկարներով պիտի բարդ ատաղձագոր-

ծական աշխատանքներ կատարեն: Հղկել և լաք քսել շինած իրերին:

Խառատներ—Կատարում են ճշգրիտ գործեր. ստուգում և տաշում են ծնկնավոր վալերը, ներքին վառման շարժիչների գլանները, մխանները և զսպանակները, կրկնակի տաշումներ նրանց համար, պատրաստում են կոնաձև կալիբրներ, շինում են կրկնամուտ բեզլա, ֆրեյֆալներ, յասսեր և այլ բաներ փորում և տաշում են: Պիտի գիտենան գծագրություններ և ուրվագծեր հասկանալ:

Հեռախոսի վարպետներ—Հեռախոսի կոմուտատորներ են դնում և նորոգում, կատարում են դրանց հետ կապված ոդային գծի աշխատանքները: Սարքում և նորոգում են հեռախոսներ, հեռագրական, ազդանշանային և փոխանցնող ապարատներ և այլն: Պիտի հասկանան ապարատների գծագրությունները և ուրվագծերը:

Տրակտորիստներ— Գործում են բեռնատար մեքենաների և առանց պատաշղթաների լեռյողկաներով տրակտորների վրա, գործում են տեղափոխության համար բանեցվող անիվավոր տրակտորների վրա: Ընթացիկ նորոգությունն անում են: Կարողանում են մոտորը կարգի բերել: Կարողանում են մեքենան կառավարել:

Ցրեյդերովշչիկներ — Զանազան ճշգրիտ աշխատանքներ են կատարում զանազան կառուցվածքի հորիզոնական և ուղղահայաց ստանոկների վրա, ինքնուրույն կերպով հասկանում են գծագրությունները:

Տոփֆերներ—Գործում են բեռնատար մեքենաների վրա մինչև 5 տոնն (ներառյալ) բեռ վերցնող (վորոնց գոնե առաջին յերկու անիվները պիտի ունենան պնևմատիկներ): Իմանում են մոտորները կարգի բերել, քշելու կանոնները և կատարում են ընթացիկ նորոգությունը:

Ելեքտրոմոնտյորներ—ա) Սարքում են ելեքտրոմոտորներ և լուսավորելու սարքավորումներ, տորյերկրյա և օդային կաբելներ են անց կացնում: Պատրաստի ուրվագծերով նորոգում են մոտորները:

բ) Հանքերում, վոր հսկում են լուսատու և ուժատու սարքավորումներին, կատարում են ընթացիկ նորոգումներ: Գործում են նավթահանքի մասշտաբով:

գ) Վահանահսկիչներ (շչիտովոյ):

8-ՐԴ ԿԱՐԳ

Գործիքներ շինողներ—Գործիքային մասի արհեստավորներին ղեկավարում են և պատասխանատու են նրանց աշխատանքների համար: Պիտի կարողանան վորոշել պողպատի տեսակները, փորձել և մխել: Կատարում են պատասխանատու գործեր և գործածում են ամենաճիշտ չափող գործիքներ: Պատասխանատու են գործիքների մասի ինվենտարի պահպանության համար: Պահում են գործիքների յելք-մուտքի և բաժանման հաշիվների գիրքը:

Դարբիններ—Գծագրությունների համաձայն պատրաստում են սռանիկների, մեքենաների և շարժիչների միջին և խոշոր մասեր, մխում են հորատորության և վորսալու ամեն չափի գործիքներ. կարգի

են բերում առանձնապես պատասխանատու գործիք-
ներ:

Զուլողներ և կաղապարողներ— Հատուկ
ձևերի և առանցքային բարդ գործվածքների ձևավո-
րումը և ձուլումը, օրինակ՝ մոտորների գլուխներ,
մխաններ, գլաններ, կենտրոնախույս նասոսների կոր-
պուսներ և սկավառակներ (դիսկ), յերկմարմին յե-
ռանկյունի խողովակներ, անկյունաչափեր, վենտիլներ
և այլ բարդ ապարատուրաներ:

Մոնտյորներ—ա) Ղեկավարում են շոգեկառ-
քերի միջին և ընթացիկ նորոգությունը.

բ) Շարժիչներ, տուրբիններ, կոմպրեսորներ են
դնում և նորոգում, աշխատանքներ են կատարում
գծագրություններով, ծանոթ են հանքերում, գործա-
րաններում և մեխանիքական արհեստանոցներում գոր-
ծող բոլոր մեքենաների աշխատանքներին:

Մոդել շինողներ:

Շոգեկառքերի մեքենավարներ— Պիտի
կարողանան կառավարել և խնամել շոգեկառքը:Ման-
րամասն պիտի իմանան նրա կառուցվածքը և մասե-
րը, նաև տեխնիքական շահագործումն ու ազդանշան-
ները:

Կրեկինգ-գործարանի օպերատորներ—
Հետևում են գործարանի ամբողջ ապարատուրայի աշ-
խատանքին: Պահում են աշխատանքի օրագիրը:

Ջտողներ—ա) Ցուղի գործարանների,—մեծ
փորձառությամբ՝ պիտի կարողանան զանազան տեսա-
կի և առանձնահատուկ յուղեր զտել.

բ) Կերոսինի խոշոր գործարաններին,- պիտի կա-
րողանան լուսատու յուղեր պատրաստել առանց ավագ
զտողի օգնության։

Ավագ հյուսներ—ա) Ավագներ—պիտի կա-
րողանան հանքափորության գլխավոր գրասենյակի
ստանողները սարքելիս պատասխանատու ղեկավար
լինել.

բ) 15 և ավելի հյուսների խմբի ավագ ղեկավար-
ներ։ Պիտի կարողանան փոխարինել տասնապետներ-
ին։

Փականագործներ—Ներքին վառման շար-
ժիչների և ամեն սիստեմի կոմպրեսորների հիմնական
նորոգման վրա աշխատողներ։ Պատրաստում և սար-
քում են ամեն տեսակի ճշգրիտ և բարդ մեխանիզմներ,
ինքնուրույն կերպով ղեկավարվում են գծագրու-
թյուններով և ճշգրիտ չափող գործիքներով ու գոր-
ծիքներով։ Ինքնուրույն կերպով կատարում են ան-
հրաժեշտ նշանումները (ռազմետկա) և պատրաստում
են անհրաժեշտ հարմարությունները ու գործիքներն՝
աշխատանքները կատարելու համար։

Նավթ թորողներ—ա) Յուղային բատարեյ-
ների և ոճապտույտ խողովակների վրա աշխատողներ,
մեծ փորձառությամբ, գործում են ինքնուրույն (ա-
ռանց ավագ թորողի).

բ) 30 կուբից փոչ պակաս ունեցող կերոսինի
բատարեյների վրա ինքնուրույն աշխատողներ (ա-
ռանց ավագ թորողի), մեծ փորձառությամբ։

Խառատներ—Մեծ վորակավորումով, ճշգրիտ
աշխատանքներ կատարողներ, օգտվում են չափելու
գործիքներով, սուզում և տաշում են գլուխներ,

ծնկնավոր վալեր, ներքին վառման մեծ ուժի շարժիչ-
ներ, արագությունների և մասերի տուփեր, վոր կապ-
ված են առանձնապես բարդ սարքավորման հետ։ Զա-
նազան սիստեմի խառատային ստանոկների ընթացքի
(խոդովոյ) պտուտակներ են պատրաստում, անծայր
պտուտակներ են պատրաստում, բազմապտույտ բեզ-
բաներ են շինում։ Գործում են գծագրություններով։

Տրակտորիստներ—Պատաշղթայավոր լեբյոդ-
կաներով տրակտորների վրա գործողներ (40 ուժից ավե-
լի), մոտորների կանոնավորումն իմացողներ։ Կատա-
րում են ընթացիկ նորոգում, թե հաստատուն և թե
շարժական (տրանսպորտի) աշխատանքների ժամա-
նակ։ Կարողանում են մեքենան կառավարել։

Շոֆֆերներ—ա) 3 տոննանոց և ավելի վեր-
ցնող բեռնատար մեքենաների վրա աշխատողներ։
Իմանում են մոտորի կանոնավորումը, ճամբորդու-
թյան կանոնները և պատրաստում են մեքենան ճամ-
բա ընկնելու համար։ Կատարում են ընթացիկ նորո-
գումներ.

բ) Ծանրություններ բարձելու լեբյոդկաներով
«Մակ»-երի վրա աշխատողներ, հետևվում են ծանրու-
թյունները բեռնելուն և դատարկելուն.

գ) «Պերկենսի» լցնումները կատարող «Մակ»-եր
վրա աշխատողներ։ Միաժամանակ մասնակցում են
լցումների աշխատանքերին։

Ելեկտրամոնտյորներ— Միևնույնը, ինչ
վոր 7-րդ կարգումն է, բայց մեծ փորձառությամբ։

Հավելված № 7
Կոլեկտիվ պայմանագրի § 26-ին

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԻՖԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ

1-Ն ԿԱՐԳ

Կշռողներ (վեսովշչիկ)—Կշռում են վագոններն ու բեռները, ստուգում են փաստաթղթերը։

Կոնտորշչիկ — ա) Արտագրում են տեղեկագրեր, ցուցակներ, աղյուսակներն ու արտագրական աշխատանքներ են կատարում։ Գրասենեկային վոչ բարդ աշխատանքներ են կատարում. որինակ՝ պահանջաթղթեր ու հաշվեգրքույկներ են գրում։

բ) Արհեստանոցների ցեխերում արհեստավորների համար պատվերներ ու նյութերի պահանջներ են գրում։

Գործակատարներ — Տնտեսական, մատերյալնի, գործարանային, հանքային և այլն։

Գրանցողներ (ռեգիստրատորներ)—Ինքնուրույն կերպով յելից ու մտից մատյաններն են պահում և ստացված թղթերը կցում-կարում։

Տաբելշչիկներ (նշանակողներ)—Տնտեսական առանձին միավորներում. տեղերում ստուգում են աշխատավորների ներկա լինելը, նշանակելով նրանց

գալն ու գնալը։ Վճարելու ռոճկացուցակի համար նյութ են պատրաստում։ Տեղեկություններ են տալիս բանվորական ժամանակը հաշվեառնելու վերաբերմամբ։

2-ՐԴ ԿԱՐԳ

Գործակալներ (ագենտ)—Ամեն տեսակի նյութեղեն (մատերիալ) ու բեռներ ստանալու և ուղարկելու պատասխանատու հանձնարարություններ են կատարում։

Արխիվարիուսներ—Վարչությունների արխիվն են պահում, թղթերը կարգին ու լավ պահելու պատասխանատվությամբ։ Թղթերը գործին կարել, ցուցակներ կազմել և բերանացի ու գրավոր տեղեկություններ տալ։

Տասնապետներ (դեսյատնիկներ)—Բանվորների խմբի աշխատանքն են ղեկավարում տեխնիքական տեսչության ցուցմունքներով։

Կանտորշչիկ — ա) Ռոճիկ տալու և հաշվետվական ցուցակներ ու տաբելներ են կազմում, ընթացիկ բնույթ կրող տեղեկություններ են պատրաստում և տալիս։ Հաշվետարի կամ հաշվապահի հսկողությամբ՝ հաշվի գրքեր են պահում, դրամարկղային, ապրանքային և ուրիշ որդերներ են գրում.

բ) Վարչությունների վիճակագրական բյուրոներում. հավաքական տվյալներ են կազմում վիճակագրողի հսկողությամբ (հաշվառող - վիճակագրերից)։

Ապրանքային վարչությունների և նավթաթորիչ գործարանների վարչության վերահսկողներ— Ջննում են ցիստերները, հսկում են նավթը մղելուն (կաչատ անելուն), չափում են ու մղած նավթամթերքների քանակության հաշիվն անում։

Գնացքների վերահսկողներ (կոնտրոլյոր) —Գնացներում ստուգում են տոմսակներն, արձանագրություններ են կազմում։

Լաբորանտների օգնական— Ցարգավուչի հատուկ գպրոցն անցածներ։ Կարողանում են նավթ ու նավթամթերքներ թորելու հասարակ աշխատանքներ կատարել, և ծանոթ են լրիվ հսկողության։

Գործակատարներ — ա) Նյութեղենի (մատերիալնի) — գործարանի ու հանքային պահեստներից և յենթապահեստներից նյութեր են ընդունում ու բաց թողնում։ Նյութերի գիրքն են պահում։ Կենտրոնական պահեստներում նրանց հանձնված է նյութերի վորոշ տեսակներ, վորոնց հաշվետարում են թերթիկներով կամ ամբարային գրքերով.

բ) Գործարանային և Ազնեվթի Ապրանքային վարչության։ Ռեզերվուարներն են չափում ըստ տեսակարար կշռի, վորոշ տեմպերատուրայի (ջերմության) և ծավալի. նավթի ու նավթամթերքների բենզինային նմուշներ են վերցնում. գիտեն խողովակների ցանցը (նեֆտեպրովոդ)։ Նավթամթերքներ են ընդունում ու բաց թողնում. սկզբնական անդորրագրեր են տալիս և այն.

գ) Տնտեսական. նայում են բակերին, բնակարանների նորոգությանը, գոմերին, տնային գրքերն են պահում, նյութեր են ընդունում, պահում ու բաց թողնում և տնտեսական ուրիշ գործեր են կատարում.

դ) Հանքային և գործարանային. հերթականներ։

Մեքենագրողներ (ռեմինգտոնիստներ) — Թղթեր, տեղեկագրեր և ուրիշ գրություններ արտագրելու վերաբերող ամեն տեսակ աշխատանքների արագ և ինքնուրույն իրագործում։

Գրանցողներ (րեգիստրատոր) — Նույնը, ինչ վոր I կարգում, րեգիստրացիոն թերթիկներ տանելով հանդերձ։

Տաբելշչիկներ (նշանակողներ) — Նույնը, ինչ վոր I կարգում։ Խոշոր տնտեսական միավորներում՝ պատվերների ամեն մի տեսակի վրա գործադրված ժամանակն են նշանակում։ Հաշվում են բանվորական թերթիկները, նարյադներն ու պատվերները։

Հեռագրողներ (տելեգրաֆիստ) — Աշխատում են հեռագրական ապարատների վրա։

Տնվարիչներ (տների կոմենդանտներ)— Պահում են տան բնակիչների, ազատ բնակարանների, տների գույքի (ինվենտարի) հաշիվը։ Հետևում են տների ու տնվորների վերաբերմամբ պետական որգանների կայացրած պարտադիր վորոշումները ժամանակին կատարելուն, ապրողների կողմից ժամանակին բնակարանային վարձ մտցնելուն, բնակարանները սարքին դրության մեջ մնալուն։

Գ ծ ա գ ր ի չ ն ե ր - պ ա տ ճ ե ն հ ա ն ո ղ ն ե ր — Գծագրածներից պատճեններ են հանում տուշով և լուսապատճենով։

3-ՐԴ ԿԱՐԳ

Ա ր խ ի վ ա ր ի ո ւ ս ն ե ր—Նույնը, ինչ վոր յերկրորդ կարգում, միայն աշխատանքի ավելի մեծ ծավալով։

Գ ո ր ծ ա կ ա լ ն ե ր—Նույնը, ինչ վոր յերկրորդ կարգում, խոշոր վարչություններում աշխատանքի ավելի մեծ ծավալով։

Գ ա ր ա ժ ի ո ր ա պ ա հ ն ե ր—Ճամբուղիներ (պուտյովկա) են տալիս և ընդունում. պահում են ավտոմոբիլների որեկան կատարած աշխատանքի հաշիվը. ընդունում են ավտոմոբիլների համար արված դիմումները (այն գարաժները, վորտեղ մինչև 75 մեքենա կա)։

Տ ա ս ն ա պ ե տ ն ե ր—Տեխնիկական հսկողության ցուցմունքներով աշխատանքներին են հսկում ու ղեկավարում. Կարողանում են աշխատանք կատարել նշանացույցով, հարթաչափով, ուղղորդով և ձողերով։

Գ ա ն ձ ա պ ա հ ն ե ր. Հիմնարկություններում անձնական պատասխանատվությամբ, իրանց որվա դրամական գործառնության սահմաններում՝ մուտքի ու յելքի գործողություններ են կատարում, ինչպես և ապրանքներ դուրս գնելու առևտրական գործառնություններ են անում։

Թ ղ թ ա կ ի ց ն ե ր (կորրեսպոնդենտներ) — Միջակ հիմնարկների։ Թղթեր են կազմում, ստացվող թղթակցությունների, գրությունների վերաբերմամբ

ամեն տեսակ ստուգող տեղեկություններ են հավաքում։ Թղթերն ի մի են խմբում՝ գործերին կարելու համար։

Հ ա ն ք ա յ ի ն յերկաթուղու վարչության փոքր կայարանների պետի ոգնականներ — Ընդունում, ուղարկում են գնացքները։ Նրանք միևնույն ժամանակ ճամբորդներին տոմսակ ծախելու գանձապահներ են։

Ա վ ա գ գ ո ր ծ ա կ ա տ ա ր ն ե ր (վոչ հերթական)—
ա) Մեծ պահեստներում նյութեղենի գործակատարներ.

բ) Վարչությունների տնտեսական մեծ բաժանմունքների տնտեսական գործակատարները.

գ) Մեծ նավթահանցքներինը.

դ) Գործիքների գործակատար. հորափորման գույքի հաշիվը են պահում և ռայոնի սահմաններում ինքնուրույն կերպով հոր փորելու գործիքներ են ուղարկում և ընդունում։

Ն յ ո ւ թ ե ղ ե ն ի գործիքների պահեստի վարիչի ոգնական—Պարտավոր են լավ ծանոթ լինել տեխնիքական նյութերի հետ։ Պատասխանատու են հանքերին ու գործարաններին կանոնավոր կերպով նյութեր ու գործիքներ մատակարարելու համար։

Մ ե ք ե ն ա գ ր ո ղ ն ե ր—Նույնը, ինչ վոր յերկրորդ կարգում. կարողանում են լավ դասավորել տեքստային ու թվական նյութերը. աշխատում են լատինական տառեր ունեցող մեքենայի վրա։

Ա վ ա գ մ ե ք ե ն ա գ ր ո ղ ն ե ր — Բաժանում են աշխատանքը մեքենագրողների միջև, ստուգում են

կատարած գործերը: Կարող են զանազան սիստեմի մեքենաների վրա գրել:

Վիճակագրողներ (ստատիստիկ) — Տանում են ոժանդակ գրքերը, թվական հում տվյալներն են խմբավորում, վիճակագրական տեղեկություններ են կազմում:

Քարտուղարներ—Տանում են արձանագրությունները, հաշվետվությունները, անհրաժեշտ նյութեր են պատրաստում:

Հաշվետարներ (ուչետվոդ)—Ղեկավարում են գրասենեկային աշխատանքները՝ վճարման ցուցակներ, նյութերի, նավթի ու նավթամթերքների մուտքի ու յելքի վերաբերյալ տեղեկություններ կազմելիս Վարչություններում ու բաժիններում ոժանդակ գրքեր են տանում, ծախսերի առանձին-առանձին տեսակների համեմատ հաշվետվական տեղեկություններ են կազմում և այլն:

Տաբելշչիկ-հաշվետարներ.—Մեքենայական արհեստանոցներում տանում են տաբելը, հաշվում են բանվորական թերթիկները, նարյադներն ու պատվերները: Կազմում են վճարման ցուցակը:

Նավթի ու ջրի հաշվառողներ (ուչյետչիկ) — Նավթահորերի չափումներ են կատարում: Վորոշում են, թե հորում յեղածի վոր մասն է նավթ, վոր մասը ջուր. վորոշում են հորի տված նավթի քանակությունը:

Տնվարիչներ—Նույնը, ինչ վոր յերկրորդ կարգում, միայն աշխատանքի ավելի մեծ ծավալով:

Անասնաբույժ բուժակներ (ֆելդշեր):

Բժշկական բուժակներ:

Ժամանակաչափեր (խրոնոմետրաժիստ)—Ամեն մի գործի համար գործադրվող ժամանակն են չափում:

Գծագրիչներ — Ամեն տեսակ գծագրական աշխատանքներ են կատարում:

4-ՐԴ ԿԱՐԳ

Գործակալներ—Հատուկ գիտելիքներով ու ստաժով, տրեստներից ու մասնավոր շուկայում առնըվող տեխնիքական և այլ մթերքների վորակական ու քանակական ընդունմն են կատարում, նույնպես և ինքնուրույն կերպով տեխնիքական նյութեր են գնում:

Կենտրոնական արխիվի արխիվարիուսներ Ուսումնասիրում և կարգի են բերում արխիվային նյութերը, հսկում են նրանց թափելու և փոխադրելու ու դարակներում դասավորելու վրա: Արխիվի վարիչի ու նրա ոգնականների հսկողությամբ անվանացուցակ են կազմում:

Տեխսնաբի ոտարյերկրյա արխիվի արխիվարյուսներ:

Ճանապարհի վարպետներ— Հսկում են յերկաթուղու գծի վրա կատարվող աշխատանքներին: Պատասխանատվություն ճանապարհի նորմալ դրության և ազդանշաններին: Բանվորական ուժի ու նյութերի հաշվառում:

Գարաժի որապահներ—Նույնը, ինչ վոր 3-րդ կարգում, մինչև հարյուր մեքենա ունեցող գարաժում:

Ավագ տասնապետներ — Ղեկավարում են տասնապետների աշխատանքը, հսկում են աշխատանքներին, բանվորներին համապատասխան գործի են դնում։ Հոգում են՝ ժամանակին աշխատանք կատարելու տեղը նյութեր հասցնելու, աշխատանքի ժամանակը և նյութերն են հաշվառում, պատասխանատու են նյութերը կանոնավոր ծախսելու ու գործիքներն անկորուստ պահելու համար։

Ինվենտարիստներ— Ինվենտարի ցուցակներ, գրքեր ու ամսեկան հաշվետվություններ են վարում ու կազմում։ Պատասխանատու են ինվենտարի ելքն ու մուտքը գիրք մտցնելու կանոնավորության համար։

Թղթակիցներ—գործատարներ— Նույնը, ինչ որ 3-րդ կարգում, միայն աշխատանքի ավելի մեծ ծավալով՝ խոշոր տնտեսական միավորներում։

Ավագ գանձապահներ — Պատասխանատու են հիմնարկությունների դրամարկղային գործառնությունների կանոնավորության համար։ Պահում են դրամարկղի գիրքն ու դրամարկղի շրջանառական տեղեկագիրը. Պատասխանատու են իրանց վստահված դրամական գումարների ամբողջության համար։

Լաբորանտ— պրակտիկներ— Վոչ բարդ աշխատանքներ կատարելում ստաժ ունեցողներ. աշխատում են լաբորատորիայի վարիչի ղեկավարությամբ։

Հանքային յերկաթուղիների վարչության կայարանների պետեր — Ջափարիձե, Շմիդտ, Բինաղադի և Բիբի-Հեյբաթ։

Ավագ գործակատարներ (վոչ հերթական)—Տնտեսական, նյութեղենի, գործիքների, մեծ ստաժով ու աշխատանքի ծավալով։

Կայարանապետների ոգնականներ — Մեծ կայարաններում, գնացքներն ընդունել, ուղարկել ու կազմել։

Վիճակագրողներ (ստատիստիկ)— Հում նյութերի մշակում, աղյուսակներ կազմել և գումարումներ տալ ու դիագրամմաներ նկարել։

Ավագ հաշվետարներ— Գործարանների ու բաժանմունքների հաշիվների, տեղեկագրերի, հաշվետվությունների վերաբերյալ բարդ աշխատանքներ են կատարում ինքնուրույն կերպով։ Վարչությունների հաշվապահությունում հաշվեկշիռներ ու մեմորիալ որդերներ են կազմում և հաշվապահական ամեն տեսակ գրքեր են պահում։ Ղեկավարում են կոնտորշչիկների ու հաշվետարների աշխատանքը։

Հանքային յերկաթուղիների վարչության գնահատիչներ (տակսիրովշչիկ)—Լավ ծանոթություն յերկաթուղային տարիֆի հետ, փաստաթղթերի վրա նշանակում են գները, ամփոփումներ են կազմում։

Տեխսնաբի գնահատիչներ—Լավ ծանոթություն յերկաթուղային ու ծովային տարիֆի հետ։ Փոխադրական փաստաթղթերն ստուգում են։

Անասնաբուժական բուժակներ (ֆելդշերներ)։

Բժշկական բուժակներ։

5-ՐԴ ԿԱՐԳ

Պահեստի վարիչներ — Գործիքների, նյութեղենի պահեստի, մեծ փորձառությամբ։ Լավ ճանաչում են գործիքները, նյութերը. գիտեն հաշվապահությունը։ Իրանց վրա է տնտեսական միավորներին ժամանակին նյութեր ու գործիքներ մատակարարելու, նյութերն անկորուստ պահելու և գործառնությունների ձևակերպման ուղիղ լինելու պատասխանատվությունը։

Տեխնարբի գլխավոր մագազինի գրասենեկային պիտույքների պահեստի վարիչ։

Մաքսատնային պահեստի վարիչ — Ընդունում ու բաց է թողնում մաքսատնային ապրանքները. հաշվեառում է այդ ապրանքները. պատասխանատու է բաց թողածի ուղիղ լինելու և ընդունած ապրանքներն անկորուստ պահելու համար։

Նավամատույցի վարիչ — Հսկողություն խոշոր նավամատույցների, խողովականցքների, ռեզերվուարների ու ջրմուղային միջոցների վրա։ Ընդունում է նավթամթերքներն ու նրանցով նավերը լցնում։

Վարչությունների անձնական կազմի վարիչներ — Ղեկավարում են արհեստակցական կազմի, անձնական կազմի փոփոխության, աշխատավորների գործի գալու և որաբացների, արձակուրդների գրանցման մասին տեղեկություններ կազմելու աշխատանքները։ Հրամանների գիրքն են պահում։

Վիճակագրական բյուրոյի վարիչներ — Միջակ ձեռնարկությունների։ Վարում են արտադրական և աշխատանքի վիճակագրությունը։

Վարչատան ինվենտարխաներ — Նույնը, ինչ որ 4-րդ կարգում, բայց աշխատանքի մեծ ծավալով և ինվենտարի հաշվապահական բոլոր գրանցումներն ինքնուրույն կերպով անող։

Բանշեների կոմենդանտներ — Տանում են բանշենի բնակիչների, գույքի հաշվեառումը։ Հետևում են գույքի պահպանման, բանշենի առողջապահական դրության վրա։ Հետևում են կառավարական վորոշումները ժամանակին կատարելուն։

Վարչությունների հաշվարարներ (կալկուլյատոր) — Դուրս են բերում արտադրանքի ինքնարժեքը։

Կենտրոնական աշխատանոցների լաբորանտներ — Վերլուծության մեթոդին տիրապետողներ, նավթի ու նրա մթերքների բարդ վերլուծությունները կատարողներ։

Հանքային յերկաթուղիների կայարանների պետեր - Սպիտակ-Քաղաք, Զաբրաթ, Սաբունչի, Մարդաքյան, Սուրախանի, Կարգանովա։

Վարչությունների նյութ.-տնտեսական մասի վարիչի ոգնականներ — Գրուպպայի կոմմունալ տնտեսությանն են վերահսկում. ընթացիկ նորոգություններ են անում. պատասխանատու են բնակարանների, գույքի պահպանման համար։ Հսկում են տրանսպորտին, նրա բաշխմանը. պատասխանատու են գոմերի առողջապահական դրության

համար. միջոցներ են ձեռք առնում գրուպպաների պահեստների ժամանակին նյութեր հասցնելու համար։

Հրդեհաշեջ խմբի պետի օգնականներ (բրանդմեյստերի օգնականներ)—Հետևում են հակահրդեհային սարքավորումներին։ Ղեկավարում են հրդեհաշեջ խմբի վարժությունը։ Ակտիվ մասնակցություն են ունենում հրդեհները հանգցնելում։ Պատասխանատու են հակահրդեհային գույքի անկորուստ պահպանման համար։

Հաշվապահի օգնականներ—Նավթահանքերում, գործարաններում ու բաժիններում։ Ղեկավարում են տնտեսական միավորի ամբողջ հաշվետվական աշխատանքը։

Կենտրոնական գործիքային և նյութեղենի պահեստի վարիչի օգնականներ—Հսկում են նյութեր ու գործիքներ ընդունելու և բաց թողնելու վրա։ Ղեկավարում են գործակատարների աշխատանքը։ Պատասխանատու են տնտեսական միավորներին ժամանակին գործիքներ, նյութեր ու նավթահորերի խողովակներ մատակարարելու համար։

Բարտուղարներ—Միջին վարչությունների։

Ադնեվթի կենտրոնական վիճակագրական բյուրոյի վիճակագիր-հրահանգիչներ—Ղեկավարում են վիճակագիրների աշխատանքը։ Ինքնուրույն կերպով վիճակագրական տեղեկություններ են կազմում։

Ավագ հաշվետարներ—Ինքնուրույն կերպով հաշվետվություններ, հաշիվներ, ամփոփումներ, տեղեկություններ, տեղեկագրեր և այլն կազմելու բարդ աշխատանքներ են կատարում։ Ղեկավարում են իրանց

յնթակա աշխատակիցների աշխատանքը։ Հսկում են տնտեսական ու արտադրական առանձին միավորների հաշվետվությանը։ Գլխավոր հաշվապահության ու վարչությունների հաշվապահություններում կատարում են նույնը, ինչ որ չորրորդ կարգում է, բացի դրանից՝ շահագործական ու մյուս ծախսերը բաշխում են ըստ արտադրությունների, ստուգում և վերլուծում են ամփոփումները, տեղեկաթղթերը և այլն, որոնք կազմված են համաձայն նախնական փաստաթղթերի։

Գլխավոր մագազինի աշխատանքներին հսկող—Աշխատանքը բաժանում է բեռնողների խըմբերի միջև, նայում է բեռները ժամանակին թափելուն ու բեռնելուն, ինչպես և շարժական կրաններին, և պատասխանատու է աշխատանքի ժամանակ անվտանգության միջոցներ ձեռք առնելու գործի համար։

Հանձնարարությունների աշխատակիցներ։

Տեխսնարի ավագ հսկիչներ—Նյութերի որակական ընդունելություն. արձանագրություններ կազմել։ Ապրանք բաց թողնելու վրա ընդհանուր ղեկավարություն և հսկողություն։ Պատասխանատու են գլխավոր խանութի պահպանության համար։

6-ՐԴ ԿԱՐԳ

Վարչությունների վիճակագրական բյուրոների վարիչներ—Վարում են արտադրական վիճակագրությունը, նավթի ու նավթամթերքների հաշվեառումը։ Վիճակագրական նյութերի կարգավորումն ու նրանց ամփոփումը։

Տնտեսության վարիչ — Կառավարում է տները, գոմերը, նյութերի պահեստը, փոխադրության միջոցները, ընթացիկ նորոգությունը։ Պատասխանատու է ժամանակին մատակարարելու ու սահմանված ժամանակին գործն ի կատար ածելու համար։

Գնահատիչներ (կալկուլյատոր)—Նույնն, ինչ վոր 5-րդ կարգում, առանձնապես փորձված։

Վարչությունների հաշվապահների օգնականներ—Վարչության հաշվապահությունում հաշվետարության առանձին մասն են վարում։

Կենտրոնական արխիվի վարիչի օգնական—Փոխարինում է վարիչին նրա բացակայության ժամանակ. տեղերն է գնում հրահանգչության համար։ Արխիվի վարիչի աշխատանքի համանման գործ։

Կենտրոնական պահեստի գլխավոր մագազինի վարիչի օգնական—Հետևում է նյութերն ընդունելուն և բաց թողնելուն, նրանց պահպանելուն։ Միջոցներ է ձեռք առնում ժամանակին պահեստը լրացնելու անհրաժեշտ նյութերով։ Կարգավորում է և նյութերի բաց թողնելը վորոշում։

Վարչությունների տնտեսական մասի վարիչի օգնական—Նույնը, ինչ վոր 5-րդ կարգում, խոշոր վարչություններում, մեծ ստաժով։

Բաժինների վարիչների օգնական—Արտադրական գրուպպաների վարչություններում ու ֆունկցիոնալ բաժիններում։

Քարտուղարներ—Խոշոր վարչությունների։

7-ՐԴ ԿԱՐԳ

Բաժինների վարիչներ— Խոշոր վարչությունների (վիճակագրական բյուրո և այլն)։

Վարչությունների կենտրոնական նյութ. պահեստի վարիչ—Հետևում է հանքերին ու գործարաններին ժամանակին նյութեր մատակարարելուն, հոգում է պահեստների անհրաժեշտ նյութերի պակասը լրացնելու մասին։ Բոլոր տեխնիքական նյութերն ու հաշվետարությունն իմանալը պարտադիր է։

Հսկողական տեսչական բաժնի վերահսկիչներ (կոնտրոլյոր) — Ազնվեթի վարչությունների ու հիմնարկությունների ֆինանսական գործունեության վերահսկողություն և հետազոտություն՝ ղեկավարությամբ ֆինանսա-Տնտեսական հսկողական-տեսչական բաժնի տեսուչների։

Հաշվապահության վերահսկողներ։

Սրբագրողներ (կորրեկտորներ) — Ազնվեթի գործերի վարչության։

Տարիֆագետներ—Տարիֆների ճշտում՝ դուրս յեկող լրացուցիչ փոփոխություններով. փոխադրական դոկումենտների ստուգում, յերկաթուղային և ծովային տարիֆների վերաբերյալ բերանացի ու գրավոր տեղեկանք տալը։

Տեխսնարի փոխադրական բյուրոյի վարիչի օգնական—Բեռներ թափելու և բարձելու գործակալների աշխատանքը ղեկավարում է. պատասխանատվություն է կրում յերկաթուղուց բեռներ ընդունելու և պահեստին հանձնելու վերաբերմամբ։

Առևտրական թղթակիցներ — Առևտրական թղթակցություններ են վարում։

Շարժման ու քարշի վերստուգիչներ—Հետևում են քարշի ու շարժման ծառայության գործակալների աշխատանքին։

Քարտուղարներ—Խոշոր վարչությունների աշխատանքի մեծ ծավալով ու մեծ ստաժով։

Պատասխանատու աշխատակիցներ հատուկ հետազոտությունների համար—Ագնեվթի Կենտրոնական Վիճակագրական բյուրոյում։

8-ՐԴ ԿԱՐԳ

Հաշվապահներ—Առանձին միջին ձեռնարկությունների, որտեղ ինքնուրույն կերպով ձեռնարկության հաշվապահությունն են վարում։ Նույնը և ռայոնական վարչությունների հաշվապահության բաժնում կամ Ագնեվթի գլխավոր հաշվապահությունում արտադրության հաշվապահական հաշվեառման առանձին ճյուղը վարողները։

Անասնաբույժ։

Կենտրոնական արխիվի վարիչ—Ագնեվթի կենտրոնական վարչության։

Բաժինների վարիչ—Ագնեվթի կենտրոնական վարչության և նավթաթորիչ գործարանների խոշոր բաժինների։

Վարչությունների նյութատնտեսական մասի վարիչներ—Մեծ ստաժով, խոշոր ձեռնարկություններում։ Վերահսկում են գրուպպայի կոմունալ տնտեսությունը, ընթացիկ նորոգությունը, փոխադրության միջոցներին ու նյութեղենի մատա-

կարարմանը։ Միջոցներ են ձեռք առնում բանվորական ուժը և ինվենտարը (գույքը) ռացիոնալ կերպով օգտագործելու։ Պատասխանում են փոխադրության աշխատանքի ճիշտ հաշվառման, կոմունալ տըntեսության ու գույքի պահպանման համար։ Արտադրական ծրագիրը համաձայնեցնում են կենտրոնական պահեստի նյութերի պաշարի հետ։ Ծրագրի համաձայն նյութերի համար պահանջներ են կազմում, հետևում են կենտրոնական պահեստը ժամանակին նյութերով լրացնելու։

Տեխսնարի գլխավոր մագազինի տեխնիքական նյութերի պահեստի վարիչ։

Վարչության գրասենյակների վարիչ—Ղեկավարություն ամբողջ գործավարության (գրասենյակի և բաժինների)։ Բարձր օրգանների կողմից տըրված կարգադրությունների ու հրահանգների ճիշտ գործադրման վրա հսկողություն։ Զեկուցումներ, դոկումենտներ և այլն կազմելու պատասխանատու և շատ աշխատանքների անձամբ կատարումն։

Տեխսնարի փոխադրական բյուրոյի վարիչ—Ընդհանուր ղեկավարություն փոխադրական գործառնությունների։ Անմիջական կապ բոլոր փոխադրական օրգանների հետ՝ Ագնեվթի հասցեով ըստացվող ու նրա կողմից ուղարկվող բեռների վերաբերմամբ։ Պատասխանատու է փոխադրական կազմի ռացիոնալ օգտագործման համար։

Վիճակագրության չենթարաժնի վարիչ—Ագնեվթի կենտրոնական վիճակագրական բյուրո։

Պատասխանատու աշխատավորների հաշվառման վարիչ։

Գլխավոր հաշվապահության չենթաբաժնի վարիչ։

Գլխավոր հաշվապահության պայմանագրերի չենթաբաժնի վարիչ։

Տեխսնաբի պատվերների առանձին գրուպպաների վարիչ։

Ռայոնական վարչության հաշվապահի տեղապահ—Փոխարինում է հաշվապահին նրա բացակայության ժամանակ. ղեկավարում է վարչության ամբողջ հաշվապահության աշխատանքը։

Ֆինանսական-Առևտրական վարչության վերահսկողական-տեսչության բաժնի տեսուչներ—Վերահսկողություն և հետազոտություն Ագնեվթի վարչությունների և հիմնարկությունների գործունեության՝ բանվորների ու ծառայողների ամեն տեսակ աշխատավարձի վերաբերմամբ ունեցած հաշիվների ստուգում, նույնպես և ստուգում տնտեսական միավորների ու կապալառուների և մատակարարողների միջև յեղած հաշիվների։ Նյութերի ու պահեստային սարքավորման պահելու և ծախսելու հաշվեառման հետազոտություն։ Դրամարկղների ստուգում։

Առևտրական թղթակիցներ—Նույնը, ինչ որ 7-րդ կարգում, բայց մեծ փորձառությամբ։

Մաքսատային գործերի խորհրդատու (կոնսուլտանտ)—Ստուգումն վճարելու փաստաթղթերի և վորոշումն մաքսի չափի։ Ագնեվթի կողմից յերկաթուղու և նավագնացության հետ կապած պայմանագրերի վերաբերմամբ իրանց յեզրափակումն են տալիս։ Կողմերի ներկայացրած պահանջների վերաբերմամբ՝ անմիջական հարաբերության մեջ են մտնում փոխադրական կազմակերպությունների հետ։

Յերկաթուղու վարչական ծառայության պետ։

Զինպարտների (վոեննո-ոբյազաննի) հաշվեառման բաժնի պետի ոգնական—Ագնեվթի Կենտրոնական վարչություն։

Վարչությունների գործավարի ոգնական։

9-ՐԴ ԿԱՐԳ

Ավագ հաշվապահներ—Գլխավոր Հաշվապահության, Նավթաթոր գործարանների վարչության գլխավոր հաշվապահի տեղապահ, Տեխսնաբի, Հորափորության գլխավոր գրասենյակի, Ավտո-տրանսպորտի հաշվապահներ։

Աշխատանքի վիճակագրության չենթաբաժնի վարիչ—Ագնեվթի Կենտրոնական վիճակագրական բյուրոյի։

Հանքային վիճակագրության չենթաբաժնի վարիչ—Ագնեվթի Կենտրոնական վիճակագրական բյուրոյի։

Վարիչ գաղտնի գործավարության—Ագնեվթի Կենտրոնական վարչության։

Գլխավոր հաշվապահության ապրանքային-Առևտրական մասի վարիչ։

Զինպարտների հաշվեառման բաժնի պետ։

Ագնեվթի կենտրոնական վարչության գործավարի ոգնական։

Ազնեվթի կենտրոնական վիճակագրական բյուրոյի վարչության կառավարչի օգնական։

Վերահսկ.-տեսչական բաժնի վարիչի օգնական։

Ֆինանսա-առևտրական վերահսկ.-տեսչական բաժնի ավագ տեսուչ։

Վարչությունների գրասենյակների կառավարիչ—Ղեկավարություն վարչության ամբողջ գործավարության, հսկում են բարձրագույն օրգանների կարգադրությունները կատարելուն։ Անձամբ պատասխանատու փաստաթղթեր (դոկումենտներ) ու զեկուցումներ են կազմում։

Վարչությունների գործերի կառավարիչ։

Տնտեսագետներ (էկոնոմիստներ)։

Իրավագետ-խորհրդատուներ (յուրիսկոնսուլտներ)։

10-ՐԴ ԿԱՐԳ

Ռայոնական վարչությունների հաշվապահներ—Գրուպպան կառավարելու վերաբերմամբ բոլոր հաշվապահական հաշվետարությունն են վարում։ Պատասխանատու են հաշվետարությունն ուղիղ տանելու համար։ Ղեկավարում են գրուպպայի ամբողջ հաշվետվական պերսոնալի աշխատանքը։

Ֆինանսա-առևտրական գործառնական-դրամ. բաժնի վարիչ։

Գլխավոր Հաշվապահության գույքային բաժնի վարիչ։

Ֆինանսա-առևտրական վարչության վերահսկողական-տեսչական բաժնի վարիչ։

Գլխավոր Հաշվապահության գնահատիչ բաժնի վարիչ։

Գլխավոր Հաշվապահության հրահանգչական բաժնի վարիչ։

Գլխավոր Հաշվապահության նախահաշվա-ֆինանսական բաժնի վարիչ։

Ազնեվթի կենտրոնական վիճակագրական բյուրոյի կառավարչի տեղապահ։

Նախահաշվա-ֆինանսական բաժնի վարիչի օգնական։

Գլխավոր իրավագետ-խորհրդատուի օգնական։

Հորափորման գլխավոր գրասենյակի ավագ հաշվապահ։

Տեխսնաբի ավագ հաշվապահ։

11-ՐԴ ԿԱՐԳ

Գլխավոր իրավագետ-խորհրդատուներ։

Ազնեվթի գլխավոր հաշվապահի օգնական։

Նավթաթոր գործարանների ավագ հաշվապահ։

Ֆինանսա-առևտրական վարչության ֆինանսական բաժնի կառավարիչ։

Ֆինանսա-տնտեսական բյուրոյի կառավարիչ։

Ազնեվթի կենտրոնական վիճակագրական բյուրոյի կառավարիչ։

12-ՐԴ ԿԱՐԳ

Ազնեվթի գլխավոր հաշվապահ։

Ֆինանսա-առևտրական վարչության դիրեկտոր։

Ազնեվթի գլխավոր հաշվապահի տեղակալ։

Ազնեվթի գործերի վարիչ։

ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վարչության նախագահ՝ Ս. Ա. ԳՈՒՏԻՆ
Վարչության քարտուղար՝ Ո. Ա. ՁԵՅՆԱԼՈՎ
Տարիֆ-տնտ. բաժնի վարիչ՝ Մ. Ֆ. ՖՐՈԼՈՎ

ԱԶՆԵՎԹ

Վարչության նախագահ՝ Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎ
Վարչության նախ. տեղ. Կ. Ա. ՌՈՒՄՅԱՆՑԵՎ
Վարչության անդամ՝ ՅԱ. Վ. ԼԱՎՐԵՆՏՅԵՎ
Աշխ.-եկոն. բաժնի կառավարիչ՝ Բ. Մ. ՇԵՅՆԻՆ

Հավելված № 8
Կոլեկտ. պայմանագրի § 26-ի

ՑԱՆՑ
ՎԱՐՉԱԿԱՆ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1-ԻՆ ԿԱՐԳ

Հանքափոր վարպետներ.
Խորաքաշ նասոսների ինստրուկտորներ.
Լաբորանտներ.
Մեքենավարներ (հանքային և գործարանային).
Մեխանիկի օգնականներ.
Ավագ նավթ թորողներ (սգոնշչիկ).
Ավագ զտողներ (ոչիստիտել).
Ավագ էլեքտրոմոնտյորներ.
Տեխնիկներ՝ ինստրուկտորներ, կառուցողներ, նորմա վորոշողներ, աշխատանք բաժանողներ, գնահատողներ և բաժանմունքների տեխնիկներ.
Ցեխային վարպետներ։

2-ՐԴ ԿԱՐԳ

Անպիտողներ (բրակովշչիկներ).
Հանքափոր վարպետներ.
Նավթ մղող կայանների վարիչներ.
Խորաքաշ նասոսների ինստրուկտորներ.
Վարչությունների և ձեռնարկների ինժեներներ.
Կրտսեր կոլեկտորներ.

Ստանոկների մեքենապետներ.

Վոչ հերթակալ մեքենապետներ (հանքային և գործարանային).

Մեխանիկի օգնական.

Նավթ մղող կայանների վարիչի օգնականներ.

Ավագ գործակատարներ (հանքային և գործարանային).

Ավագ նավթ թորողներ.

Ավագ զտողներ.

Ավագ ելեքտրոմոնտյորներ.

Տեխնիկներ՝ կառուցողներ, նորմա փորոշողներ, աշխատանք բաժանողներ, կոնստրուկտորներ, թերությունների ցուցակ կազմող տեխնիկներ, անալիզողներ, հողամասային, գազբաժնի և բաժանմունքների տեխնիկներ։

Ցեխային վարպետներ։

3-ՐԴ ԿԱՐԳ

Դեպոյի որապահներ.

Նավթ մղող կայանների վարիչներ.

Կաթսայագործական արհեստանոցի վարիչ.

Նորոգման բաժնի վարիչ.

Խորաքաշ նասոսների ինստրուկտորներ.

Վարչությունների և ձեռնարկների ինժեներներ.

Վոչ հերթակալ մեքենավարներ (հանքային և գործարանային).

Մեխանիկներ.

Մեխանիկի օգնականներ.

Նավթ մղող կայանների վարիչի օգնականներ.

Ցենթբաժնի վարիչի օգնական.

Նյութեղենի ծառայության պետի օգնական.

Ավագ նավթ թորողներ.

Ավագ նավթ զտողներ.

Ավագ ելեքտրոմոնտյորներ.

Տեխնիկներ՝ կոնստրուկտորներ, կառուցողներ, նորմա փորոշողներ, հողամասային տեխնիկներ, աշխատանքներ ղեկավարողներ.

Քիմիկոսներ.

Ցեխային վարպետներ։

4-ՐԴ ԿԱՐԳ

Ավագ հանքավոր վարպետներ.

Անալիզողներ (բրակովշչիկ).

Դեպոյի որապահներ.

Բինագադու նավթմղիչ ռայոնի վարիչ.

Բիբի-Հեյբաթի յերկաթուղու վարիչ.

Նավթմղիչ կայանի վարիչ.

Գարաժի վարիչ.

Գործարանային լաբորատորիայի վարիչ.

Խորաքաշ նասոսների ինստրուկտորներ.

Վարչությունների և ձեռնարկների ինժեներներ.

Ավագ կոլլեկտորներ.

Մեխանիկներ.

Արհեստանոցների, ելեքտրոբաժինների, մեխանիքական արհեստանոցների, խողովակային բաժնի և ռեմոնտի բաժանմունքի, ուժային դըվածքների վարիչների օգնականներ.

Մեխանիկի օգնականներ.

Հանքերի և գործարանների վարիչի յերկրորդ օգնականներ.

Շոգեկառքերի վարպետներ.

Տեղագիրներ (տոպոգրաֆ).

Տեխնիկներ՝ ելեքտրիկներ, կառուցողներ, կոնստրուկտորներ, աշխատանքներ ղեկավարողներ, թերությունների ցուցակ կազմողներ և բաժանմունքների տեխնիկներ.

Լաբորատորիաների քիմիկոսներ.

Ցեխային վարպետներ.

Ելեքտրոմեխանիկներ:

5-ՐԴ ԿԱՐԳ

Մեխանիքական արհեստանոցի վարիչ.

Գազ հանելու և օգտագործելու յենթաբաժնի վարիչ.

Վագոնային բաժնի վարիչ.

Հանքափորական բաժնի կենտրոնական գործիքային և մթերային մասի վարիչ.

Գործարանային լաբորատորիայի վարիչ.

Գարաժի վարիչ.

Վարչությունների և ձեռնարկների ինժեներներ.

Ավագ կոլլեկտորներ.

Մեխանիկներ.

